

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Պայքարը Կը Շարունակուի

Հայութեան դէմ գործադրուած ցեղասպանութիւնը կը թեւակոխէ իր երկրորդ հարիւրամեակը: 1915 թուականին ի գործ դրուած Հայ ազգի զանգուածային ոչնչացման ծրագիրը, իր անջնջելի հետքը ձգած է իւրաքանչիւր հայու ենթագիտակցութեան մէջ, ու տակաւին կը շարունակէ իր ներգործութեամբ ազդել մեր ժողովուրդի աօրեայ կեանքին վրայ:

Աշխարհացրիւ հայութիւնը կը նշէ իր նահատակներու 100 եւ մէկ տարելիցը ու կը պահանջէ արդարութեան վերականգնումը՝ առաջին հերթին ամբողջական նահանջումովը թուրք պետութեան միջոցաւ կիրառուած ռեպրեսիւններու նկատմամբ ապա դատաւարտումովը՝ այսօրուայ թրքական կառավարութեան կողմէ առաջ մղուող ժխտումի փաղաքականութեան:

Հարիւրամեակը դարձաւ այն անկիւնաքարային թուականը, երբ փաղաքակիրթ աշխարհը տարբեր միջոցառումներով, նահանջման քանակներով, պաշտօնական յայտարարութիւններով ու կեցումով նշանակուած ճշդումով ու մամուլի լայն անդրադարձով եկաւ ոչ միայն հաստատելու Հայկական Ցեղասպանութիւնը անժխտելի իրողութիւնը, այլ մասամբ ամոքելու հայութեան վիշտը:

Այս նոր հանգրուանի սեմին մեր ժողովուրդը իր առջեւ դրած է երեք հիմնական նպատակ. ՃԱՆԱԶՈՒՄ, ՀԱՏՈՒՑՈՒՄ, ՊԱՀԱՆՋԱՏԻՌՈՒԹԻՒՆ: Այս երեք անփակտելիօրէն կապուած են մեր ազգի ապագայի հետ եւ կարելի չէ անոնցմէ որեւէ մէկը զանց ընել կամ անտեսել:

Միւս կողմէ, ապրիլեան վերջին ֆառօրեայ պատերազմը՝ շղթայագերծուած Լեռնային Դարբասի խաղաղ ու ազատատենչ բնակչութեան դէմ, եկաւ անգամ մը եւս փաստելու թէ, հայութեան դէմ ծաւալուած արշաւը եւ նիւթուած դաւերու արմատները կ'երթան նոյն ուղղութեամբ՝ դէպի Թուրքիոյ այսօրուայ իշխանութիւնները, որոնք կը փորձեն այս անգամ արմատախիլ ընել Արցախահայութիւնը:

Շնորհիւ հայ զինուորի հերոսութիւններուն եւ ի գին մեծ գոհողութիւններու կարելի եղաւ անգամ մը եւս ետ մղել թշնամին:

Ինչպէս հարիւր տարի առաջ, այսօր եւս Հայութիւնը կը գիտակցի, թէ կարելի չէ ապահովել օտարներուն՝ պաշտպանուելու համար սպառնացող վտանգներէն:

Մեր պայքարը շարունակական է, իսկ մեր միակ երաշխիքը՝ մեր ժողովուրդի միասնականութիւնը: Մենք պարտական ենք, մեր ազգի հին ու նոր նահատակներուն, փայլելու այդ ուղղիւմէն:

«ՄԱՍԻՍ»

## Լոս Անճելըսի Հայութիւնը Կը Պատրաստուի Դարձեալ Համախմբուելու Թրքական Հիւպատոսարանին Առջեւ



Հայութեան հարիւրամեակի ցոյցը Լոս Անճելըսի մէջ

Տարի մը առաջ՝ Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին առթիւ, աւելի քան 150 հազար հոգիներու մասնակցութեամբ Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցաւ սփիւռքի պատմութեան ամենէն բազմամարդ ժողովրդային ցոյցը, որ անարտեջաւ Թրքական Հիւպատոսարանին առջեւ տեղի ունեցած հանրահաւաքով:

Այս տարի հայութիւնը դարձեալ հրաւիրուած է ցոյց տալու իր հաւաքական ուժը եւ իր ձայնը լսելի դարձնելու աշխարհին, Կիրակի, Ապրիլ 24-ին համախմբուելով Թրքական Հիւպատոսարանին առջեւ:

Համագաղութային մարմինը, որուն մաս կը կազմեն համայնքէն ներս գործող բոլոր քաղաքական, եկեղեցական, բարեսիրական, հայ-

րենակցական եւ այլ կազմակերպութիւններ, մեծ աշխատանք տարած են, այս տարի եւս առաւելագոյն մասնակցութիւն ապահովելու համար:

Կ.Ե. Ժամը 1-ին տեղի ունենալիք հանրահաւաքի ընթացքին ելույթներ պիտի ունենան հայ եւ օտար քաղաքական անձնավորութիւններ ու ներկայացուցիչներ:

Դիւրացնելու համար ժողովուրդի երթեւեկութիւնը, կազմակերպիչ յանձնախումբը ապահոված է պասերու սպասարկութիւն՝ հայկական գլխաւոր կեդրոններու առջեւէն, կէսօրուայ ժամը 12-է սկսեալ:

Թրքական Հիւպատոսարանը կը գտնուի 6300 Whilshire պողոտային վրայ:

## Ամերիկայի Պետական Գրասենեակը Խիստ Քննադատութեան Կ'ենթարկէ Հայաստանի Իշխանութիւնն Ու ՀՀ-ն

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութիւնը, անցեալ շաբաթ հրատարակուած մարդու իրաւունքներու իր տարեկան զեկոյցին մէջ բաւական խիստ արտայայտուած է Հայաստանի մէջ տիրող կացութեան մասին:

Մասնաւորապէս արձանագրուած է, որ Հայաստանի մէջ մարդու իրաւունքներու իրավիճակին գծով ամենալուրջ հարցերէն մէկը պետական պաշտօնեաներու կողմէ կառավարական միջոցներու շահագործումն է, իշխող հանրապետական կուսակցութեան գերակայութիւնը պահպանելու համար: Այս նպատակով, իշխանութիւնները տնտեսական եւ քաղաքական ուժը կ'օգտագործեն իրենց կողմնակիցները հարստացնելու եւ դատախիւրական համակարգը կոռումպացնելու համար:

«Կառավարութեան ներս կոռուպցիայի առկայութեան վերաբերեալ բազմաթիւ պնդումներ կան: Թէեւ Սահմանադրութեամբ արգիւտուած է, որ պետական պաշտօնեաները ձեռնարկատիրական գործունէութեամբ զբաղին, սակայն ընկերութիւնները կը շարունակել մնալ պատգամաւոր եւ կառավարութեան այլ պաշտօնեաներ կը շարունակեն առաջ տանիլ իրենց բիզնես շահերը», - ըսուած է Ամերիկեան կառավարութեան զեկոյցին մէջ:

## Էրտողանին Զայրացուցած Է Եւրախորհրդարանի Խիստ Զեկոյցը

Թուրքիոյ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրտողանին կրկին զայրացուցած է Թուրքիոյ հարցով Եւրախորհրդարանի զեկոյցը:

Թրքական «Միլլիէթ» թերթին համաձայն, Թուրքիոյ նախագահը անդրադառնալով Եւրոպական Միութեան միանալու Թուրքիոյ հարցի մասին պատրաստուած զեկոյցին, գայն գնահատած է սխալ ու խեղուած:

Էրտողանին խիստ զայրացուցած է, որ զեկոյցին մէջ նաեւ անդրադարձ կայ Հայոց Ցեղասպանութեան, Կիպրոսի հարցին ու քրտական տագնապին: Էրտողան պնդած է որ, զեկոյցին մէջ թերի տեսակէտով ներկայացուած է Թուրքիոյ մէջ մամուլի ազատութիւնը:

Թուրքիոյ նախագահը շեշտեց

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 101Դ ՏԱՐԵԱՐԶԻՆ ԱՌԹԻ ԶՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՅԱԶՈՂ ՀԱՄԵՐԳԸ՝ ՕՐԱԹՈՐԻՕ

Պոլսահայ Միութեան նախաձեռնութեամբ եւ լոսանճելոսահայ գաղութի մշակութային միութիւններու միացեալ մարմնի կազմակերպութեամբ զեղարուեստական բացառիկ երեկոյ մը տեղի ունեցաւ Շաբաթ Ապրիլ 16ին, 2016, Փասատինայի Ամպաստոր թատերասրահին մէջ:

Սոյն հանդիսութեան պատուոյ հիւրերու շարքին էին Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս տիար Վալերի Մկրտումեան, նախկին արտաքին գործոց նախարար Ռաֆֆի Յովհաննիսեան, Հայց. Առաքելական Եկեղեցւոյ առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան, Հայ Աւետ. համայնքի տնօրէն Վեր. Պերճ Ճամպագեան, թեմիս նախկին առաջնորդ Վաչէ Արք. Յովսէփեան, ազգային երեք կուսակցութիւն-

ներ եւ այլ կազմակերպութիւններու ղեկավարներ, ինչպէս նաեւ՝ Հրանդ Տինքի այլին Տիկ. Ռաքէլ Տինք, դուստրը՝ Սառան եւ փեսան՝ Էրիք Նազարեան:

Բեմին վրայ եւ բովանդակ յայտագրի ընթացքին տիրապետող ներկայութիւն մըն էր ազատ խօսքի մեծ ունակ իրաջ նահատակ լրագրող Հրանդ Տինքի դիմանկարն եւ արդարութեան, խաղաղութեան ու ազատութեան խորհրդանիշը՝ սպիտակ աղաւնի:

ԱՄՆի եւ Հայաստանի զոյգ քայլերգներու ունկնդրութեանէն ետք ներկայները մէկ վայրկեան յոտնկայս լուրթեամբ յարգեցին չիշատակը մէկ ու կէս միլիոն հայ նահատակներուն, ինչպէս նաեւ Արցախի պատերազմի զոհերուն:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԽՈՒՃԱՊ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՄ

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՑԵԱՆ

Տեղի է ունեցել ՀՀԿ ԳՄ-ի նիստը, որին հրաւիրուել է նաև Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը:

Սէյրան Օհանեանի մասնակցութիւնը նիստին հետաքրքիր է, ինչ որ առումով՝ անակնկալ, հաշուի առնելով այն հանգամանքը, որ Սերժ Սարգսեանը սովորաբար կարեւորագոյն հարցերով չի կիսուում անգամ իր մերձակորներին հետ, ուր մնաց՝ ՀՀԿ-ի: Արդեօք ներկայում ինչ որ հարցեր են առաջացել ՀՀԿ-ի հետ, կամ ՀՀԿ-ն ինչ որ վտանգ է զգացել:

Հնարաւոր է՝ հարցեր իսկապէս առաջացել են, հաշուի առնելով վերջին օրերին Հայաստանի ռազմա-քաղաքական դեկլարութեան հակասական պահուածքն ու յայտարարութիւնները, ինչպէս նաև ՀՀԿ-ի խայտառակութիւնը:

Ռազմական գործողութիւնների օրերին ՀՀԿ-ն ընդհանրապէս ասկուել էր, իսկ Սերժ Սարգսեանն այդպէս էլ մինչ օրս հանրութեանը չի ներկայացրել, թէ ինչ է կատարուել այդ օրերին: Նա միայն յայտարարութիւններ էր անում արտաքին շահագրգիռ կողմերի հետ հանդիպումներում, որոնք սակայն այդպէս էլ շարունակութիւն չէին ունենում, աւելին՝ երբեմն հակասում էին միմեանց:

Նկատելի էր զգալի շփոթ-

ուածութիւն իշխանութեան շարքերում, ինչպէս նաև հակասութիւններ քաղաքական եւ ռազմական դեկլարաների յայտարարութիւնների միջեւ, որոնք երբեմն իրարամերժ էին: Տպաւորութիւն էր, որ չկար միասնական ինչ որ դիրքորոշում, քաղաքական մշակուած գիծ:

Իսկ Ապրիլի 5-ին հաստատուած այսպէս կոչուած զինադադարն աւելի սրեց իրավիճակը: Հայկական ուժերի հակազդուած եւ սահմանազիծն Ապրիլի 1-ի դրութեամբ վերականգնելու մտադրութիւնը, որի մասին խօսում էր ռազմա-քաղաքական դեկլարութիւնը, կասեցուեց: Բացի այդ, հայկական կողմը նահանջեց իր բառացիօրէն մէկ օր առաջ հռչակած քաղաքական դիրքորոշումից:

Վերջին օրերին նկատելի է դարձել նաև, որ փորձ է արւում ինչ որ կերպ լրոգել, «սուղել» այդ օրերի քաղաքական եւ ռազմական դեկլարութեան յայտարարութիւնների հակասականութիւնը:

Ըստ ամենայնի, իշխանութեանը շփոթեցրել էր համազգային զարթոյնի ալիքը, որը դարձել էր անվերահսկելի, առաւել եւս հանրութեան բարձրացումը հարցերի համատեքստում: Օրինակ, ինչու ատրպէյճանական զրոհի ժամանակ այդ ուղղութիւններում չի գործել տարրական կա-

պը դիրքերի միջեւ, ինչու չի աշխատել հետախուզութիւնը, որտեղ են եղել հետախուզները, ինչու է կասեցուել հայկական ուժերի զրոհը, ինչու զինուորները զրկուած են եղել տարրական պարագաներից ու հնարաւորութիւններից, ով է գողացել անվտանգութեան ու պաշտպանութեան համար նախատեսուած փողը, ում զրպաններում է այն «նստել», եւ այլն:

Ըստ ամենայնի, իշխանութիւնը յոյս է ունեցել, որ այս հարցերը կը խլացուեն հայրենասիրական պաթոսի, հայ զինուորի անօրինակ հերոսութիւնների վերաբերեալ պատմութիւնների ֆոնին: Սակայն դա տեղի չունեցաւ, եւ չէր էլ կարող տեղի ունենալ, քանի որ ժողովուրդը զգացել է իր արժանապատուութեան ու պատասխանատուութեան արժէքը:

Ան այս ֆոնին, առաւել ընդգծուել է իշխանութեան, իշխող կուսակցութեան անհամարժէքութիւնը, անգործունակութիւնը եւ պետական յանցագործութեան աստիճանը: Ժողովուրդը պաշտպանել է երկիրը եւ հիմա հարցեր է տալիս, որոնցից անհնար է փախչել:

Իսկ ինչպէս է արձագանքել իշխանութիւնը: Թւում էր, ուշքի գալով առաջին օրերի շոկից, այն պէտք է ինչ որ հետեւութիւններ անել եւ փորձել մի քանի համարժէք քայլերով մեղմել իրավիճակը, հանրութեանը պարզաբանել իրադարձութիւնների էությունը եւ առաջիկայ անելիքները: ՀՀԿ ԳՄ

նախորդ նիստից յետոյ, սակայն, իշխանութեան առաջին արձագանքը մօտաւորապէս հետեւեալն էր՝ բա ասում էին հաքանից յետոյ ժողովուրդը չի կուրի, տեսա՞ք ոնց եղաւ, ժողովուրդը թող գնայ երկիրը պաշտպանի ինչպէս ուզում է, թող գոհուի, մեզնից ի՞նչ էք ուզում: Այսինքն, ՀՀԿ-ին երկրի պաշտպանութիւնը յուզում է այնքանով, որ քանով յանկարծ իրենց սեփականութեանը եւ իրենց ընտանիքներին վնաս չլինի:

ՀՀԿ-ն փաստացի յայտարարեց պատասխանատուութիւնից հրաժարուելու մասին: Իսկ դա էլ նշանակում է, որ ՀՀԿ-ն խոստովանել է իր յանցաւոր ու հակապետական բնոյթը, եւ այդ խոստովանութիւնն անկասկած օգտագործուելու է հենց իր դէմ:

Եւ ահա, ՀՀԿ-ն մի քանի օր անց կրկին հաւաքուել է եւ հրաւիրել Սէյրան Օհանեանին: Բացատրութիւնը, թէ հրաւիրել են սահմանին տիրող իրավիճակը ներկայացնելու համար, ծիծաղելի է: ՀՀԿ-ին յուզել է իր ճակատագրի հարցը, առաւել եւս, որ բանակում նոյնպէս՝ սպաների ու զինուորների մօտ, հասունանում է լուրջ դժգոհութիւն, քանի որ հենց ռազմական գործողութիւնների ընթացքում է պարզուել պետական յանցագործութեան աստիճանն ու ծաւալները:

Ամենայն հաւանականութեամբ, Սէյրան Օհանեանից փորձել են պարզել հենց այդ դժգոհութեան աստիճանը, կամ էլ նրան հրաւիրել են եւ փորձել պարզել՝ նախարարն «ու՞մ կողմից» է:

Բանակի ու ժողովրդի միասնութիւնը լուրջ ուժ է, այդպիսով ուժ, որն ընդունակ է խառնել ցանկացած ծրագիր:

«ԼՐԱԳԻՐ»

ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ ԿԵՆՍԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՈՒԿԱՆ

ՄՈՒՍԱ ՄԻՔԱՑԷԼԵԱՆ

Արցախեան քառօրեայ պատերազմը փոխել է դարաբաղեան կարգաւորման գործընթացի տրամաբանութիւնը, եւ այստեղ ներկայումս իրավիճակը յայտնուել է թէ՛ ղեկավարութեան երկրորդ փուլում: Սա համահունչ է աշխարհաքաղաքական զարգացումների տրամաբանութեանը: Մասնաւորապէս՝ դարաբաղեան առաջին պատերազմը բռնկուեց ԽՍՀՄ փլուզման գործընթացին գուգահեռ, երբ քանդուած էր կայսրութիւնը: Ներկայումս կայսրութեան փլուզման երկրորդ փուլն է, որը դրսեւորուած է Արեւմուտք-Ռուսաստանի ղեկավարութեամբ, եւ որն անխուսափելիօրէն աւարտուելու է Ռուսաստանի համաշխարհային դիրքերից նոր նահանջով: Եւ այս գործընթացում էլ արձանագրուում է դարաբաղեան, ըստ էութեան, երկրորդ պատերազմը:

Հայաստանը եւ Ղարաբաղը պէտք է ղեկավարեն ԽՍՀՄ փլուզման երկրորդ փուլը եւ անեն ամէն ինչ, որպէսզի այդ փուլն էլ ռազմական առումով աւարտուի յաղթանակով՝ տուեալ դէպքում առաջին եւ երկրորդ յաղթանակների պահանջման տեսքով: Սա, իհարկէ, ներքին ու արտաքին բազմաբնոյթ գործօնների հանրագումար է եւ պահանջում է հսկայական ջանքեր բոլոր ուղղութիւններով՝ ե՛ւ արտաքին քաղաքականութեան, ե՛ւ ներքին կեանքի որակական փոփոխութեան:

Ղարաբաղեան գործընթացը աւելին է, քան Հայաստանի արտաքին քաղաքականութեան խնդիր: Ղարաբաղեան գործընթա-

ցը միջազգային օրակարգի թեմա է: Իսկ դա արդէն հարցը դարձնում է առաւել ընդգրկուն, դրանից բխող ճառագումները դարձնում է բազմազան եւ բազմափեկտոր: Հետեւաբար, Հայաստանը պէտք է ամբողջապէս, համալիր կերպով պատրաստուի դարաբաղեան գործընթացին եւ զիտակցի, որ դա պարզապէս նոր աշխարհակարգի ճանապարհին մի հանգրուանի պայմանական անուն է աւելի շատ, քան կոնկրետ զարգացում:

Խօսքը նոր աշխարհակարգում Հայաստանի նիշի մասին է, որին պէտք է արժանանալ կամ որը պէտք է նուաճել: Իսկ դրա համար հարկաւոր է կարգի բերել ինքնզինքը, այսինքն՝ հարկաւոր է կարգի բերել ներքին կեանքը, դարաբաղեան գործընթացը ծառայեցնել ոչ թէ այդ ներքին կեանքը ստուերելու եւ խնդիրներից հասարակական ուշադրութիւնը շեղելու գործին, այլ գործընթացը դարձնել այն խոշորացուցը, որը հնարաւորութիւն կը տայ աւելի լաւ տեսնել ներքին խնդիրներն ու մարտահրաւէրները: Ամէն ինչ կախուած է ցանկութիւնից: Ամէն ինչ սկսում է ցանկութիւնից, ինչպէս կ'ասէր փիլիսոփան:

Հարցն այն է, թէ ով ինչ է ցանկանում ներկայիս ժամանակահատուածում: Ըստ դրա էլ գործածուում է դարաբաղեան կարգաւորման հարցը: Բայց դրա հետ մէկտեղ, խնդիրը նաև կարողանալու մէջ է: Ով ինչ եւ ինչքան է կարող եւ ինչպէս է կարող դարաբաղեան գործընթացը ներքին կեանքի խոշորացուց դարձնելու գործում: Յամենայնդէպս, անցնող ժամանակաշրջանն այդ առու-

մով ակնյայտ դարձրեց Հայաստանի հասարակական-քաղաքական կեանքում ցանկութեան եւ կարողութեան պրոբլեմը: Կը յաջողուի՞, արդեօք, դա յաղթահարել առաջիկայում՝ շատ դժուար է ասել:

Նոր իրավիճակում, իհարկէ, առաջնային խնդիրներից մէկը դառնում է Արցախի եւ ընդհանրապէս Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի բնակչութեան անվտանգութեան խնդիրը: Խօսքը չի կարող լինել լոկ ֆիզիքական անվտանգութեան, ռազմական պաշտպանութեան մասին: Այստեղ անվտանգութիւնը ունի եւ պարտադիր պէտք է ունենայ ե՛ւ հոգեբանական, ե՛ւ տնտեսական, ե՛ւ ռազմական բաղադրիչներ: Հայաստանը Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում պէտք է պատրաստուի «պաշարման» քաղաքականութեան, այսինքն՝ արտակարգ դրութեան, որը պահանջում է ներքին ուսուցանելի հակամարտութեան մոբիլիզացիա:

Պէտք է արձանագրել, որ Ատրպէյճանն առաջիկայում չի հրաժարուելու Արցախի եւ Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի թիրախաւորումից: Հետեւաբար ջանքերը պէտք է գնան ոչ միայն զսպմանը, այլ նաև Ատրպէյճանի հրետակոծութիւնների, այսպէս ասած, արդիւնաւետութեան զրոյացմանը: Դա նշանակում է առաջին հերթին պաշտօնական ներկայացուցչականութեան մշտական ապահովում սահմանամերձ գիւղերում: Այսինքն՝ այդ գիւղերում պէտք է մշտապէս ներկայ լինեն պաշտօնեաներ, որոնք կիրականացնեն անվտան-

Շաբ.ը էջ 26

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՈՒԹԵՐԹ
ՄՍՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## «Ընտրութիւնների Արդիւնքներն Ընդունում Ենք, Սասուն Միքայէլեանի Ոչ Մի Քուէ Զի Կորսուել».- Նիկոլ Փաշինեան

Հրազդանում Ապրիլի 17-ին կայացած քաղաքապետի ընտրութիւնների արդիւնքները չեն բողոքարկուելու, քանի որ բոլոր քուէները պաշտպանուել են, ոչ մի քուէ չի կորսուել: Այս մասին Ապրիլի 18-ին, լրագրողների հետ հանդիպմանն ասաց Հրազդանի քաղաքապետի թեկնածու Սասուն Միքայէլեանի շտաբի պետ, ԱԺ պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը:



ԱԺ պատգամաւոր Նիկոլ Փաշինեան

«Հրազդանում երէկ չեն եղել լցոնումներ, կրկնակի քուէարկութիւններ: Ընտրութիւնների վերահսկման այն մեխանիզմը, որ մենք ներդրել էինք, բացառում էր սկզբունքորէն նման բանը: Մենք ի գիտութիւն ենք ընդունում ընտրութիւնների արդիւնքները, ինդիքը հետեւեալն է, որ մենք շատ կարեւոր ենք համարում քաղաքական փոփոխութիւններ բերելն ու փոփոխութիւնների հասնելը, սակայն ակնյայտ է, որ որեւէ հանրութիւնում հանրաւոր չէ փոփոխութեան հասնել՝ առանց հանրութեան մեծամասնութեան ցանկութեան: Այսօր մենք արձանագրում ենք, որ Հրազդանցիներին 50+1 տոկոսը փոփոխութիւններ բերելու պատուէր մեզ չի տուել, իհարկէ, դա եղել է ընտրակաշառքի բաժանման եւ հարկադրանքի միջոցով», - ասաց Նիկոլ Փաշինեանը:

ԱԺ պատգամաւորը համոզուած է, որ եթէ Արամ Դանիէլեանն ընտրակաշառք չբաժաներ, յաջողութեան չէր հասնի:

Պատգամաւորի խօսքով՝ Հրազդանում գրանցուած արդիւնքների համար իրենք ոչ ոքի չեն մեղադրում, հակառակը ներողութիւն են խնդրում այն քաղաքացիներից, որոնք գտնուում են սոցիալական նման ծանր վիճակում:

Հրազդանի քաղաքապետի ընտրութիւններում յաղթել է գործող քաղաքապետ, ՀՀԿ-ական թեկնածու Արամ Դանիէլեանը: Նա ստացել է 12 հազար 510 ձայն (50,3 տոկոս): Դանիէլեանի հիմնական մրցակից, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան անդամ, «Սասուն» ջոկատի հրամանատար Սասուն Միքայէլեանն ստացել է 10 հազար 267 ձայն (42 տոկոս), իսկ «Հայկական վերածնունդի» թեկնածու Արթուր Միսաքեանը՝ 1237 ձայն (5 տոկոս):

## Ժողովուրդը Թող Չվերցնի Ընտրակաշառք, Կամ Վերցնի, Դեմ Քուէարկի».- ԶԳԿ-ական Պատգամաւոր

Թող ժողովուրդը չվերցնի ընտրակաշառք, կամ թող վերցնի ու ձայն չտա տուեալ թեկնածուին: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց ԱԺ պատգամաւոր, սոցիալական հարցերի յանձնաժողովի ղեկավար Յակոբ Յակոբեանն՝ անդրադառնալով Հրազդանի քաղաքապետի ընտրութիւնների ժամանակ գործող քաղաքապետ Արամ Դանիէլեանի թիմի ընտրակաշառք բաժանելու վերաբերեալ անհարգանքներին:

«Թող ժողովուրդը չվերցնի, կամ վերցնի ու ձայն չտա, հակառակն անի, ի՞նչ կարող են անել, դա քաղաքացու քաղաքական պայմանաւորութեանն է որեւէ անձի, քաղաքապետի հետ, պայմանական եմ ասում, է՞?, թող չվերցնի», - ասաց Յակոբ Յակոբեանը:

Ըստ Յակոբեանի՝ այս դէպքում ընտրակաշառք բաժանողը ոչ թէ ՀՀԿ-ի ներկայացուցիչն է, այլ

պարզապէս քաղաքացի, որը գործարքի մէջ է մտնում ընտրողի հետ:

«Մեր Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչը չի բաժանում, Հայաստանի Հանրապետութեան երկու քաղաքացի իրար հետ պայմանաւորում են, թող չվերցնի, ո՞վ էր ստուգում էդ քուէարկութիւնը, թող դէմ քուէարկեր, իրանք երկուսով էդ պայմանագիրը կապում են»:

Պատգամաւոր պնդեց, թէ դա դրա դէմ պայքարը լրագրողի եւ հասարակական կազմակերպութիւնների խնդիրն է, որը լուծուում է տասնեակ տարիների ընթացքում, ոչ թէ մէկ օրում: «Դա երեւոյթ է, որի դէմ աւելի շատ պայքարում է քաղաքացիական հասարակութիւնը, լրագրողները: Եթէ որեւէ մէկը փողով ընտրութիւն է կատարում, ուղիղ երկու կողմն էլ մեղաւոր են, ինչ ուզում եք ասէք», - նշել է Յակոբեանը:

## ԴԱԳԿ Պետը Հրաժարական Է Ներկայացրել

Նա դիմումում, մասնաւորապէս, նշել է. «Հայկական եւ միջազգային մամուլում վերջերս պանամական օֆշորների մասին հրապարակումներում ի յայտ եկաւ նաեւ իմ անունը: Յաւուր եմ, որ անունս արծարծուում է միլիարդաւոր դոլարներ իրականում սեփականացրած՝ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի ընտանիքի կողքին: Անընդունելի եմ համարում, որ իմ անձը պատճառ դառնայ իմ երկրի եւ բունապետական Ատրպէյճանի միջեւ քաղաքակրթական որեւէ զուգահեռի, ինչի համար էլ այսօր իմ հրաժարականի դիմումն եմ ներկայացրել զբաղեցրածս պաշտօնից:

Օֆշորային հրապարակումներին հրապարակաւ կ'անդրադառնամ արդէն որպէս շարքային քաղաքացի՝ առանց պետական լծակներ տիրապետելու»:

## Ազատ Արշակեան.- «Օլիգարխները Զինաթափեցին Մեր Բանակը»

Օլիգարխներին պէտք է կուլակաթափ անել, որովհետեւ չվճարելով հարկերը, տուրքերն ու կողոպտելով հայկական գանձարանը՝ նրանք զինաթափել են հայկական բանակը: Այս մասին այսօր՝ ապրիլի 18-ին, ասուլիսի ժամանակ ասաց Հայաստանի Գերագոյն խորհրդի նախկին պատգամաւոր Ազատ Արշակեանը:

«Օրէնքով սահմանուած կարգով հարկաւոր է անաչառ ստուգումներ անցկացնել, եւ ամբողջ ապօրինի՝ գողացուած ունեցուածքն ազգայնացնել», - նշեց Ազատ Արշակեանը:

Նրա խօսքով՝ պատերազմի ժամանակ հայկական բանակն ապացուցեց իր մարտունակութիւնը, ժամանակն է, որ ձեռքբերուած յաղթանակի շարունակութիւնն ապահովեն հայ դիւանագէտները՝ միջազգային կառուցներում բարձրացնելով ուխտադրժութեան, հայի ու Հայաստանի անվտանգութեան ապահովման խնդիրը:

«Ասում են՝ պատերազմը դիւանագիտութեան շարունակութիւնն է, թող դիւանագիտութիւնն էլ լինի պատերազմի շարունակութիւնը: 94թ-ի զինադադարը պարտադրում էր կողմերին՝ չյարձակուել մէկը միւսի վրայ: Մենք



Հայաստանի Գերագոյն խորհրդի նախկին պատգամաւոր Ազատ Արշակեան

պայմանաւորուել էինք, մինչդեռ մեր սահմանապահ ուժերի վրայ յարձակուեցին նրանց ոչ սահմանապահ ուժերը, կիրառեցին ծանր հրետանի ու զինտեխնիկա: Դա ուխտադրժութիւն է, դա նշանակում է, որ մեր քաղաքացիների կեանքը, ունեցուածքը, անվտանգութիւնը վտանգուած են. մեզ վրայ կարող են յարձակուել: Միջազգային հանրութիւնը պէտք է մեր անվտանգութիւնն ապահովելու ձեւը գտնի. դիւանագէտները պէտք է այդ ուղղութեամբ աշխատեն», - նշեց Ազատ Արշակեանը:

## Բանակին Ուղղուած Ծախսերն Իրականում Գնացել Են Պաշտօնեաների Գրպանը

Տնտեսագէտ Արտակ Մանուկեանն առաջարկում է ռազմական ոլորտի գնումների համար սահմանուած աւելացուած արժէքի հարկը չեղեցի անել՝ բարձրացնելու ոլորտի ծախսերի արդիւնաւէտութիւնը: Lragir.am-ի հետ զրոյցում անտեսագէտ ասաց, որ Պաշտպանութեան նախարարութեան գնումները, դա կլինի գէնք կամ այլ գոյք, այսօր հարկուում են ԱԱՀ-ով, որն անուղղակի հարկ է, գնում է պետական պիւտձէ, իսկ այս գումարները, յայտնի է, որ անարդիւնաւէտ են տնօրինուում:

«Ի՞նչն է խանգարում, որ մենք օրէնսդրօրէն ամրագրենք, որ ՊՆ համար գնումները, առաւել եւս այս ժամանակաշրջանում, ազատուեն ԱԱՀ-ից: Դրանով կը փորձենք այդ գումարների հասցեականու-

թիւնն ու արդիւնաւէտութիւնը բարձրացնել: Ակնյայտ է, որ բանակում կան անարդիւնաւէտ ծախսեր: Մեր պահանջը պէտք է լինի՝ մի գողացէք, թող պիւտձէ արդիւնաւէտ ծախսերի: Բայց քանի որ մտավախութիւն ունեմ, որ նորից կը գողացուի, դրա համար առաջարկում եմ, որպէսզի այդ ոլորտի գնումները միանգամից ազատուեն ԱԱՀ-ից», - ասաց նա:

Մանուկեանի խօսքով՝ վերջին ռազմական գործողութիւնների օրերին ակնյայտ դարձաւ, պաշտպանութեանն ուղղուած միջոցների մի մասը չեն ծառայել իրենց նպատակին: «Եթէ ոլորտից գանձուող ԱԱՀ-ն պէտք է գնայ պետական պիւտձէ, դա լաւ է, եթէ չթանալանեն, իսկ եթէ թաւանում են, իմ առաջարկը կենսունակ է դառնում», - նշեց նա:

## «Եթէ Լաւ Զինտեխնիկա Ունենայինք, Զէնք Վիրաւորուի»

Ապրիլի սկզբին տեղի ունեցած ռազմական գործողութիւնների ընթացքում վիրաւորուած զինուորներն ու կամաւորները նշում են՝ եթէ աւելի լաւ զինտեխնիկա ունենային, ապա իրենց ընկերներին չէին կորցնի, իրենք էլ չէին վիրաւորուի:



Վիրաւոր զինուորային Միքայէլ Սահակեան

19-ամեայ զինծառայող Միքայէլ Սահակեանը պատմում է, որ Ապրիլի 3-ին որպէս չաւելեալ ուժ իրենց ուղարկել էին Ջեբրայիլի դիրքեր: Բեկորային վնասուածքներով Չինուորական կլինիկական հոսպիտալում բուժում ստացող Միքայէլ քշախօս է, սակայն նշում է՝ եթէ լաւ զինատեսակներ ունենային ոչ միայն կը պաշտպանուէին, այլեւ կը յարձակուէին: «Մեր սահմանները աւելի առաջ կը տանէինք, չէինք պաշտ-

պանուի՝ այս անգամ մենք կը յարձակուէինք: Էդ զինատեսակներն են, որոնք մենք քիչ ունենք», - ասում է վիրաւոր զինծառայողը:

Հակառակորդի զինտեխնիկայի առաւելութիւնների մասին խօսելիս, սակայն, Միքայէլ ընդգծում է՝ կարեւորը հայ զինուորի ոգին է. «Հակառակորդը ունի աւելի լաւ զինատեսակ, բայց հայը ուրիշ ձեւ է. հայի դուխը՝ ըսենց ասեմ: Հայի ոգին ամէն ինչ էլ կարող է»:

**ԼՈՒՐԵՐ**

**Ատրպեյճանցիների Նպատակը Մինչև Ծիզուլի Յանքերը Եր**

Հայաստանի պաշտպանական գերատեսչությունների պաշտոնեականների հաշվարկներով՝ Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի կողմից խոցուած ատրպեյճանական մարտական ուղղակիության փաստաթղթերից պարզ է դառնում, որ լայնածառալ գործողություններ ծրագրելով՝ Ատրպեյճանը նպատակ է ունեցել հասնել մինչև Ծիզուլի:

ՊՆ-ի Հայաստանի Զինուած ուժերի ավիացիայի վարչության պետ Ալեքսի Բախչալյանը շարժվելով օրը լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց, որ այս եզրահանգման են եկել ուղղակիության անձնակազմի փաստաթղթերը ուսումնասիրելուց յետոյ, որտեղ քարտեզների վրայ նշուած է հակառակորդի յարձակման ծրագիրը:

«Հիմնականում, նշանակետեր, որ իրենք վերցրել են, գտնուել է կարախանբեյլի եւ Ծիզուլի ներքեւ՝ քաղաքի ներքեւ, որպէս նշանակետեր: Ներքեւի մասով դաշտեր են, իրենց հաշուարկներով՝ տուեալ վայրերում պէտք է գտնուէին մեր հրթիռահրետանային զորքերի միջոցներ, որոնք իրենք վերցրել են որպէս նշանակետեր մարտական գործողությունների սկսման ժամանակահատուածում, որպէսզի իրականացնեն խոցում», - փոխան-

հրահրութիւն:

Հայաստանի պաշտպանական նախարարութեան խօսնակ Արծրուն Յովհաննիսեանն էլ յաւելեց՝ այդ փաստաթղթերում տեղ գտած տուեալները թոյլ են տալիս եզրակացնել, որ Ատրպեյճանը նպատակ ունէր խոցել մօտակայ դիրքերը, յետոյ անցնել առաջ:

Ինչ վերաբերում նախագահ Սերժ Սարգսեանի այն յայտարարութեանը, թէ քառօրեայ ռազմական գործողությունների ժամանակ հայկական կողմը 80-ականների գէնք է կիրառել, Արծրուն Յովհաննիսեանը չիշեցրեց օրեր առաջ պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանի արած դիտարկումը: «Մեր 80-ականների կամ միգրացիոն նաեւ որոշ տեղերում 70-ականների գէնքերի կողքին կան գերժամանակակից գէնքեր, ինչպէս նախորդ օրը նշեց պաշտպանութեան նախարարը, որ շատերը կերպով զրանցից ունենային, մէկ: Երկրորդը՝ դա չափորոշիչ չի, թէ որ թուականի ինչ գիտատեսակ է կիրառուել, խնդիր գիտատեսակների արդիւնաւէտ կիրառման մէջ է: Ես նորից եմ յորդորում՝ էդ քննադատութիւնները փորձէք կատարել փաստարկուած», - յայտարարեց Հայաստանի ռազմական գերատեսչութեան խօսնակը:

**Լեւոն Հայրապետեանը Դատապարտուեց Չորս Տարուայ Ազատազրկման**

Մոսկուայի դատարանը հայազգի գործարար, բարերար եւ հասարակական գործիչ Լեւոն Հայրապետեանին դատապարտեց 4 տարուայ ազատազրկման:

Ծագումով Ղարաբաղցի Հայրապետեանը մեղադրուած է ցմահ ազատազրկման դատապարտուած Բաշկիրիայի նախկին սենատոր Իգոր Իգմեստեւի մորից խարդախութեամբ 700 հազար դոլար իւրացնելու համար: Ըստ մեղադրող կողմի, նա մոլորեցրել է նախկին սենատորի մօրը, խոստանալով փողի դիմաց քայլեր ձեռնարկել որդու պատժաշահի մեղմելու համար, բայց գործնականում ոչ մի լծակ չի ունեցել, որ կատարի խոստումը:



Բարեբար Լեւոն Հայրապետեան

դուղբի մօտ՝ Նիցցայից Մոսկուա վերադառնալիս:

Անցեալ տարուայ հոկտեմբերի 29-ին Հայրապետեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասել էր, որ հենց վերացուի Մոսկուայից դուր գալու արգելքը, ինքը կը մեկնի Լեռնային Ղարաբաղ: «Որ մենակ մեր գիւղը չաճի, այլ աճեն կողքի գիւղերը, Մարտակերտի շրջանը եւ ամբողջ Ղարաբաղը», - ասել էր Հայրապետեանը:

**Էրտողանին Չայրացուցած Է**

Շարունակուած էջ 1-էն

տած է թէ, զեկոյցի եւ իրականութեան միջեւ որեւէ կապ չեն տեսներ եւ զեկոյցը ետ ուղարկած են: Եւրախորհրդարանի կողմէ թուրքիոյ հարցով պատրաստուած զեկոյցին մէջ խիստ քննադատութիւն կայ այդ երկրէն ներս մարդու իրաւունքներու խախտում-

ներուն, խօսքի ու մամուլի ազատութիւններուն սահմանափակումներու, քրտական հարցի կարգաւորման հետ կապուած: քննադատութիւն կայ այդ երկրէն ներս մարդու իրաւունքներու խախտումներուն, խօսքի ու մամուլի ազատութիւններուն սահմանափակումներու, քրտական հարցի կարգաւորման հետ կապուած:

**Սերժ Սարգսեանն Ու Բակո Սահակեանն Այցելել Են ՊԲ Զօրամաս**



Ղարաբաղ ժամանել է սերժ Սարգսեան կը գրուցէ Բակո Սահակեանի եւ Սեյրան Օհանեանի հետ

Աշխատանքային այցով Լեռնային Ղարաբաղ ժամանեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը, ով Ստեփանակերտում մի շարք հանդիպումներ ունեցաւ, իսկ երեկոյեան Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեանի հետ խորհրդակցութիւն անցկացրեց Պաշտպանութեան բանակի բարձրագոյն սպայական կազմի հետ:

Հայաստանի նախագահը Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեանի հետ Ապրիլ 19-ին այցելել է Պաշտպանութեան բանակի գործառնարից մէկը եւ պարզեւատրել Ապրիլի 2-ից 5-ը ընկած ժամանակահատուածում Լեռնային Ղարաբաղի պետական սահմանը պաշտպանելիս արիւթիւն ցուցաբերած զինուորներին:

Դիմելով զինուորներին եւ սպաներին՝ Հայաստանի նախագահը, մասնաւորապէս, ասել է. - «Դուք հերթական անգամ ցոյց տուցիք բոլորին, թէ ով է հայ զինուորը, ով է Հայրենիքի զինուորը: Երբ անհրաժեշտ է կռուել, դուք դառնում էք ամենակարգապահ, ամենահարամիտ եւ ամենա-

մարտունակ զինուորը: Տարիներ առաջ ես ասել եմ, որ եթէ մենք պարտադրուած լինէնք պատերազմել, ապա այսօրուայ զինուորն ու սպան կռուելու են ոչ պակաս քաջ, քան իրենց հայրերը, իրենց պապերը, իրենց աւագ ընկերները: Դուք ապացուցէցիք, որ շատ աւելի մարտունակ էք, շատ աւելի քաջ էք, շատ աւելի տոկուն էք»:

«Զինուորը հակառակորդին բան չունի ասելու. զինուորը հակառակորդին իր ասելիքն ասում է մարտի դաշտում, եւ փա՛ռք ձեզ, ի դէմս ձեզ՝ մեր բոլոր սպաներին ու զինուորներին, ովքեր կարողացան իրենց ասելիքն ասել: Այդ դաժան օրերին որեւէ հայ զինուոր ու սպայ չի լքել իր մարտական դիրքը, նուիրումով կռուել է մինչև վերջ», - յայտարարել է Սերժ Սարգսեանը:

«Փա՛ռք մեր բոլոր զինուորներին եւ սպաներին, ովքեր ընկան այս օրերի ընթացքում ու նաեւ փա՛ռք նրանց, ովքեր այս 25 տարիների ընթացքում ընկել են մեր ազատութեան, մեր անկախութեան համար», - ասել է Հայաստանի նախագահը:

**«Ժամանակ» Որտեղից Գումար Գտնել Հայկական Բանակը Զինտեխնիկայով Համալրելու Համար**

«Ժամանակ» թերթը գրում է. «Մինչ Ղարաբաղ-ատրպեյճանական սահմանային սրացումները, հայկական բանակը զինտեխնիկայով համալրելու համար գումարի աղբիւր գտնելու հարցը առաջնայինների թւում չէր, այսօր, սակայն խնդրի լուծման յետաձգումը ուղղակիօրէն սպառնում է Հայաստանի ազգային անվտանգութեանը:

Հայաստանի Հանրապետութեան փոքրիկ պիւտձէից բանակի համար գումարներ գտնելու համար անհրաժեշտ է այցելել, օրինակ, կառավարութեան կայքէջը եւ ուսումնասիրել կատարուած ծախսերը:

1072 ծառայողական մեքենայ մօտ 2,5 մլն բնակչութիւն եւ 967 հազար աղքատ բնակիչ ունեցող Հայաստանում:

Ծառայողական մէկ մեքենայի տարեկան ծախսը կազմում է 1 մլն

200 հազար դրամ: 1072 մեքենայի դէպքում դրանց համար նախատեսուած ծախսերը հատուած են 1 մլրդ դրամի սահմանը: Կառավարութեան աշխատակազմի մի քանի անդամների ընդամենը մէկ թիւից արամադրուել է 6 մլն 650 հազար դրամ:

Աներեւակայելի գումարներ են ծախսում նաեւ տարբեր գերատեսչութիւնների կոմունալ ծառայութիւնների համար:

Օրինակ՝ Կառավարութեան աշխատակազմի սպառած հոսանքի համար 2015-ին պետպիւտձէից դուրս է գրուել 137 մլն 727 հազար դրամ, զազի համար՝ մօտ 68 մլն դրամ:

Կառավարութեան աշխատակազմը 2015-ի ընթացքում 8 մլն 800 հազար դրամ յատկացրել է անյայտ յուշանուէրների գնման համար»:



# WIR DANKEN EUCH! ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿՐ ՅԱՅՏՆԵՍ ՁԵՁԻ

## ԴՈԿՏ. ԱՔԷԼ ՔՀՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Տարևոյս 21 Յունիսի առաւօտեան, սովորականին պէս, ժընեւէն դէպի Պեոն՝ Զուլիցերիոյ Ազգային Գրադարան մեկնեցայ: Ծրագրած էի առկայ ուսումնասիրութեանս համար հետազոտութիւններս շարունակել օգտագործելով մասնաւորաբար այն ամսագիրը, զոր ատենին հրատարակած էր Զուլիցերիոյ Հայաստանեւոր Միութիւնը: Մեծղի ժողովածուն, որուն խորագիրն էր «Տեղեկութիւններ Հայաստանի Մասին», հրատարակուած էր Յունիս 1916էն մինչեւ 1944 թուականը Պագէլի մէջ: Անոր երկար տարիներու խմբագրապետը եղած էր էմմանուէլ Ռիկկընպար՝ Զուլիցերիոյ գերմանախօս շրջանին մէջ հայոց արդար իրաւունքներու նուիրեալ ջատագովներէն մին: «Տեղեկութիւններ Հայաստանի Մասին» ամսագիրը կը հետապնդէր ոչ միայն Զուլիցերիոյ ընթացիկ հասարակութեան լուրեր հաղորդել Հայաստանի, Թուրքիոյ մէջ ահապարտուած անցուդարձերուն եւ ընդհանրապէս Մերձաւոր Արեւելքի մէջ տիրող անմիտութար կացութեան մասին, այլ նաեւ իրազեկ դարձնել գուրդերիցի բարեբարները, թէ իրենց նիւթական նուէրները ո՞ւր եւ ի՞նչ նպատակներու կը տրամադրուէին: Տեսողութեամբ մը կը թերթի ժողովածուն էջ առ էջ, կը կարդայի սիւնակներուն մէջ տեղ գտած յօդուածներուն խորագրերը, ապա համակարգիչիս մէջ իսկոյն կը նշէի բոլոր այն վկայութիւնները, որոնք կրնային մասնաւոր կարեւորութիւն ներկայացնել այն նիւթին համար, զոր կ'առաջադրէի ուսումնասիրել եւ վերածել հատորի մը:

Շարունակելով որոնումներս, երբ կը դարձնէի Յունիս 1932ի 57րդ թիւին էջերը, հայեացքս կանգ առաւ մեծագիր պատկերի մը վրայ, որ կը կրէր «Նպաստընկալ երեխաներ Պէյրութի գաղթականներու ջամբարին մէջ» խորագիրը: Ուղղահայեաց դիրքով գետեղուած չորս որբերու՝ զոյգ մը աղջիկներու եւ զոյգ մըն ալ տղոց իրարայաջորդ լուսանկարներուն քով հաստագիր տպագրուած էր «Շնորհակալութիւն կը յայտնենք Ձեզի» երախտիքի մը սրտառուչ արտայայտութիւնը: Տարակոյս չկար, որ սոյն պատկերը արտատպումն էր շրջաբերական նամակի մը, որ Զուլիցերիոյ Հայաստանեւոր Միութիւնը շրջանառութեան մէջ դրած էր գուրդերիցի նուիրատուներուն խիղճը կարիքաւորներու նկատմամբ աւելի զգայուն դարձնելու եւ միաժամանակ ուղղակի այս որբուկներուն բերնով անոնց շնորհակալութիւն յայտնելու համար:

Խոր յուզում մը համակեց զիս: Որբերուն նայուածքին մէջ կը տեսնէի անասելի թախիծ մը, վիշտերու ծով մը ամբողջ եւ նահատակութեան պատմութիւնը ազգիս: Ինծի կը թուէր, թէ այդ երեխաները իրենց դառն ճակատագրով շղթայուած էին իրարու, մարդակերպ գազաններու ձեռքով վայրագաբար հազնելով որբութեան կրակոտ շապիկը: Անոնք խլուած էին իրենց ծնողաց գուրգուրանքէն, ընտանեկան յարկին սիրասուն միջավայրէն ու այն ջերմութենէն, որ իւրաքանչիւր անհատի կեանքին մէջ օդի ու ջուրի պէս անհրաժեշտ

տոթիւն եւ ապրելու, գոյատեւելու եւ զարգանալու համար:

Բնականաբար առաջին անգամ չէր, որ կը հանդիպէի նման տխուր պատկերներու: «Մանկութիւն չունեցող երեխաներ», ահաւասիկ այս էր առաջին մտածումը, որ կը ծագէր մտքիս մէջ ամէն անգամ, երբ կը հանդիպէի թերեւս ալ աւելի ճնշող կամ նոյնաբովանդակ հոգեցունց նկարներու:

Պարզ հետաքրքրութիւն մը կը մղէր զիս կարգալու այդ որբերուն անունները, որոնք իրենց ճակատագրին ամբողջ գորշութեանը մէջ պահ մը յանկարծ հանդիպած էին յուսաժպիտ երանգի մը, դառնալով կարեկցանքի առարկան գուրդերիցի բարեգործներու:

Ինքնաբերաբար, եւ նոյնիսկ քիչ մըն ալ անտարբեր կարդացի նաեւ վերէն երկրորդ նկարին քով արձանագրուած բոկոսն մանչուկին անունը. Գրիգոր Թափանեան: Յանկարծ սարսուռի մը պղզ հոսանքը սահեցաւ ամբողջ մարմնովս: Ինծի անհաւատալի թուաց իրողութիւնը, որ ուղղակի աչքերովս կարդացի: Տղուն անունը հարազատ էր ինծի, բայց դեռ կը դժուարանայի գայն տեղաւորել ճանաչողութեանս պրիսմակին մէջ: Ի՞նչպէս կրնար ըլլալ, որ ես ալ կը սկսէի ակամայ օղակաւորուիլ ճակատագրի այդ շղթային մէջ, օղակ մը, որ հեղձ պատճառելու չափ պարանոցս կը սեղմէր: Աստուած իմ, հեղ մը շունչ ինդրեցի, սակայն առանց պատկերացնելու թէ ի վերջոյ ի՞նչ էր ինծի հետ պատահածը: Անցեալն էր որ կը գերէր զիս, ու անտեղիտալիօրէն կը դառնար ներկայ իմ կեանքիս մէջ ու աչքերուս առջեւ կը պարզէր մաս մը իմ սեփական ընտանիքիս պատմութենէն, որ ցարդ անծանօթ էր ինծի: Արդեօք հաւատալ կարելի՞ էր, որ այս խեղճ որբի նկարին մէջ հարազատ մօրեղբայրս կը գտնէի: Ի՞նչպէս կրնար պատահիլ, որ ան յանկարծ պիտի յայտնուէր գուրդերիցի անսպասելի մը էջերուն մէջ, ու ես տարիներ վերջ, թէկուզ իր այս հէգ նկարին միջոցով, հետը պիտի հանդիպէի առանձնապէս Զուլիցերիոյ Ազգային Գրադարանի յարկին տակ: Համառօտ կենսագրութիւն մը, որ տեղադրուած էր իր նկարէն քիչ մը վար, կասկածելու ալ ոչ մէկ տեղիք կը ձգէր. «Գրիգոր Թափանեան, եօթ տարեկան, կը տառապի մալարիայով, հայրը մահացած է, մայրը իբրեւ աղքատի կ'աշխատի՝ հայթայթել կարենալու համար նաեւ ուրիշ երկու երեխաներու ապրուստը»:

Նոյն օրը երեկոյեան, երբ ժընեւ վերադարձայ, իսկոյն գանգահարեցի Տալլաս՝ մօրեղբօրս՝ Գրիգորի այրիին, պարզած պատմութեանս վերաբերեալ անգամ մը եւս ունենալու համար վերջնական ստուգում մը: Քեռիկինս յուզմունքէն փղձկաց ու խորագգած պատմեց, որ մօրեղբայրս իր մանկութեան օրերուն իսկապէս վայելած էր ինամքը այն գուրդերիցի բարեգործներուն, որոնք Լիբանանի մէջ օգնութեան ձեռք մեկնած էին ցեղասպանութենէ վերապրած հայ ժողովուրդի վտարանդի գաւակներուն: Արդարեւ, մարդկութեան այդ հօգու վկաններէն եւ հազարաւոր հայերու կեանքը փրկող գուրդերիցիցի մեծ հերոսներէն մին եղած էր Եագոբ Քիւնցլէր, ընդամենը՝ հիւանդապահ, համեստ մէկ սարկաւազը



Զուլիցերիոյ Աւետարանական Եկեղեցիի, որ Դեկտեմբեր 1899էն մինչեւ 1922 թուականը Ուրֆայի մէջ անգնահատելի ծառայութիւններ մատուցած էր տեղւոյն հայութեան: Հուսկ, իր կնոջ՝ Էլիզապէթին հետ ան հետեւած էր տարագիրներու բազմութեան, եւ Լեռնալիբանանի Ղազիբ աւանին մէջ «Ամերիկայի Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Ընկերութեան» օժանդակութեամբ ոչ միայն կրցած էր հիմնել որբանոց մը, այլ, իր շատ մը բարեսիրական աշխատանքներուն կից, յաճախակի այցելելով արեւելեան Պէյրութի ծովեզերեայ Նահր կոչուած շրջանին մէջ ապաստանած հայ գաղթականներուն ջամբարները, բազմաթիւ կարիքաւորներուն համար, մասնաւորապէս հիւանդներուն, ծերերուն, այրիներուն եւ երեխաներուն պարենամթերք հայթայթելու եւ անդեղէն մատակարարելու աշխատանքին ձեռնարկած էր: Մարդասիրական իր այս առաքելութիւնը իրականացնելու համար, ան բնաւ չէ խորշած անձանձրոյթ դիմելու Զուլիցերիոյ իր համաքաղաքացիներու եւ պագէլցի բարեկամներու օժանդակութեան, եթէ պէտք էր զիրենք տարհամոզելու, անոնց գութը շարժելու, գանտնք նոյնիսկ հոգեւոր բարոյական հրամայականի մը առջեւ դնելու, որպէսզի գէթ անտունի մնացած հայ մը, այրի մը կամ որբ մը կարենար իր ձեռքին հանապազօրեայ կտոր մը հաց ունենալ: Ահաւասիկ այսպէս է, որ մօրեղբօրս, ինչպէս նաեւ միւս երեք հայ երեխաներուն լուսանկարները Զուլիցերիա հասած են, որպէսզի կարօտ-

եալներու երախտիքի մը հոգեցունց կոչը նուիրատուներուն փոխանցուէր բերնովը զրկանքի սեւ թաթին տակ հեծող այս տխրաղէմ որբերուն:

Մինչ այդ, ես ամբողջապէս անգիտակ էի մօրեղբօրս ճակատագրի պատմութեան այս հատուածին, քանի որ մեր ընտանիքին մէջ մեծերը չէին անդրադառնար իրենց կեանքի վաղ շրջանի տխուր էջերուն: Եւ սոյնը պարզապէս այն պատճառով, որ անցեալը յիշելով եւ յատկապէս գայն պատմելով, անբաղձալի դէմքեր եւ տխուր դէպքեր կը վերակենդանանան, կը զգենուն մարմին, կը դառնան ներկայութիւն, ու հին ցաւերը կը զգածուին վերատին, իսկ տառապանքն այսպէս կ'ապրուի կրկնակի:

Օրս ընտանիքի պատմութենէն լոկ քանի մը պատառիկներ աւանդուած էին ինծի: Արդարեւ, ծովուն յատակը ընկղմած նաւու մը կտորտած հսկայ կայմէն մնացած հատուկտոր փշուրներուն կամ երբեմնի լայն առագաստէն տակաւին ջուրին վրայ ծփացող ծուէններուն նման, ո՞ր մէկ հայուն վիճակուած էր իբրեւ աւանդ ունենալ աւելին՝ բովանդակ ծագումնաբանութիւնը իր ցեղին: Եղեռնէ վերապրած սերունդը հազիւ կրցած էր ազատել իր կեանքը, մինչ ստիպուած եղած էր իր պապերուն հետ մահուան եւ անհետացումի աւագուտին մէջ ձգել նաեւ իր անցեալն ու սոսմին պատմութիւնը:

Հայոց Յեղասպանութեան դժնդակ օրերուն, հաճընցիներու

# WIR DANKEN EUCH! ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿՐ ՅԱՅՏՆԵՄ ՁԵՁԻ

## Շարունակուած էջ 6-էն

տարագրութենէն ետք, որբացած երեխաներ, որոնց մէջ էր նաեւ Արշալոյս մեծ մայրս, մահուան ճիրաններէն մագապուած, տարբեր ճամբաներով եւ ուղղակի հրաշքի բերումով հազարաւորներու հետ եկած է Լիբանան ու ապաստանած արեւելեան Պէյրութի Նահր շրջանի հայ գաղթականներու միջավայրին մէջ: Սակայն Մինաս մեծ հայրս փրկուած է շնորհիւ անապատաբնակ արաբ պետեւիններու, որոնք պատանին վերցնելով իրենց քով, անած եւ կարգած են զայն իրենց ուղտերուն պահպան: Երբ ան թեւակոխած է իր երիտասարդ տարիքը, բարեխիղճ պետեւին օրապահիկով մը գինք ազատ արձակած է, որպէսզի երթալով Լիբանան, կին վերցնէ իր ցեղէն եւ, այսպէս, միանայ իր ազգին: Հասնելով Պէյրութ, մեծ հայրս իր ցեղակիցները կը գտնէ գաղթականներու ճամբարներու ընդհարակցութեան եւ ծով կարիքներու մէջ, բայց կեանքի բազմատեսակ դժուարութեանց դէմ պայքարելու ոգին եւ վերապրելու անկոտորում կամքը գերազանցապէս առկայ էր ոչ միայն անձնապէս իր, այլ նաեւ թշուառներու այդ հոծ բանակին մէջ: Հակառակ գործուած աւերին եւ ճակատագրի կործանարար հարուածներուն, վտարանդի հօտը հայոց անտերունչ չէր ձգուած Լիբանանի թէպէտ հիւրընկալ, բայց դեռ օտար միջավայրին մէջ: Գաղթական հայութեան ազգային առաջնորդներուն եւ պատասխանատու անձանց նօսրացած հոյլը անվհատ կ'այցեւիք տեսնելու, վիճակագրելու, միխթարելու, հոգալու, հասնելու եւ բաժին հանելու համար այն քիչէն զոր ունէր, դարմանել փորձելով անհամար վերքերը իր հայկազուն ժողովուրդին: Այսպիսի առաջնահերթ եւ տարատեսակ պարտականութիւններու շարքին, ան քաջ կը հետեւէր նաեւ ազգին ժողովրդագրական նպատակներուն, ուստի՝ ցեղին շարունակութիւնը, հայ ընտանիքին աճը ապահովելու եւ գաղթականներուն ընկերային հասարակական կենցաղը վերակազմակերպելու հեռանկարով, կը քաջալերէր կեանքին հասած համապատասխան գոյգերը, որ ամուսնանան եւ կազմեն իրենց հայաշունչ ընտանիքը: Այդ միջոցին է որ, ահա, քաջասիրտ տէր հայր մը, ընդհանրական պատկեր մը խորհրդակատարութեան ձեւին տակ, գաղթականներու ջամբարի համեստ պայմաններուն մէջ, այլոց հետ օրհնած է նաեւ մեծ ծնողացս՝ Մինասի եւ Արշալոյսի ամուսնութիւնը:

Առջինն էր երկու երեխաները՝ Ովսաննան եւ Գրիգորը ունենալէ ետք, Մինաս մեծ հայրս կ'որոշէ Արժանթին մեկնիլ, որպէսզի կեանքի աւելի ապահով եւ բարօր պայմաններ ստեղծէ իր երիտասարդ ընտանիքին համար: Պուէնոս Այրէսի մէջ ան կ'իւրացնէ լուսանկարչութեան արհեստը, եւ լուսանկարչական եռօտանի գործիքը ուսին՝ կը շրջի քաղաքի թաղերով ու արուարձաններով՝ վաստկելու համար իր օրապահիկը: Դեռ կենդանի եւ թարմ գոյներով կը յիշեմ Արշալոյս մեծ մօրս պատմած այն դրուագը, որ մեծ հայրս Հաճոնջ բարբառով Արժանթինէն իրեն նամակներ կը յղէր, ուր կը դրուատէր իր ընտրած նոր կենսավայրին մէջ քաղաքակրթու-



Լուսանկարը կը ներկայացնէ արեւելեան Պէյրութի Նահր շրջանը, ուր հաստատուեցան հայ ապաստանեալները: Նկարին ձախ կողմը տեսանելի է Նահրի հիմ կամուրջը, իսկ մէջտեղ հոսող գետը Նահր Պէյրութն է: Գետափին երկարող երթուղին Քորնիշն է, որուն վարի մասը Խալիլ Պետեւին, իսկ դիմացի կողմը Պուրն Համուտն է: Լուսանկարը առնուած ըլլալու է 1932-1933 թուականներուն:

թեան եւ ճարտարագիտութեան ձեռք բերած հակայական նուաճումները, եւ զանոնք համեմատելով Պէյրութի այդ ժամանակուան համեստ պայմաններուն հետ՝ կ'ըսէր. «Էջքը կոյնօ ընտաս լամբայի լիւսին, հէտիդի պօտին կուճօկը կու կոխես, թիմ էթրաֆը լիս կուննօ»: Սոցնը արդի արեւմտահայերէնով պիտի նշանակէր՝ «Աջքը կուրնայ այդ լամբարի լոյսին, այստեղ պատին վրայ կոճակը կը կոխես, ամեն տեղ կը լուսաւորուի»:

Ես այս նախադասութիւնը մեծ մօրս յաճախ կրկնել կու տայի, սղայաբար զուարճանալով Հաճոնջ բարբառի արդի աշխարհաբարին հետ ունեցած խոշոր տարբերութեան վրայ: Ինչպէ՞ս կրնայի այդ ժամանակ ըմբռնել եւ գնահատել, թէ իւրաքանչիւր բարբառ մայր լեզուաբանի քին մէջ կը ներկայացնէ անզուգական հարստութիւն մը. ան իր մէջ կը խտացնէ զայն խօսող ժողովուրդին պատմութիւնը, ինքնութիւնը, աւանդույթներն ու սովորութիւնները, մէկ խօսքով՝ մշակութային ճոխ արգասիքը: Այսօր խորապէս կ'ափսոսամ, որ ֆիզիքապէս կտրուած ըլլալով մեր մայրենի հողէն, ախ, զրկուած խրոխտ Տաւրոսի զմրուխտ գեղեցկութենէն, մեր հայրենի Կիլիկիոյ փառերգին բառերով՝ «արեւ պարգեւող մեր աշխարհէն», նոյնիսկ նաեւ հոն՝ մեր պապերու աճիւններուն քով ննջելու իրաւունքէն, դատապարտուած ենք կորսնցնելու մեր մայրենին՝ լեզու եւ բարբառ, ազգային աւանդութիւն, մշակույթ եւ ինքնութիւն: Արդեօ՞ք պիտի կարենանք պահպանել գէթ մեր հաւաքական յիշողութիւնը, թէ ժամանակի բռնաւոր քայքայումին մէջ, ինչպէս Որբերեան պիտի ըսէր, «յիշատակն ալ կ'անցնի երգի մը նման»:

Արժանթին մեկնելու նախօրեակին մեծ հայրս հաւատացած էր, որ Պուէնոս Այրէսի մէջ ընտանիքին հետ իր վերամիացումը երկարատեւ ժամանակամիջոցի մը պիտի չկարօտի, քանի գիտէր, որ իր կինը երրորդ երեխայով յղի էր, ուստի ինք ալ իր կարգին ամէն միջոցի կը դիմէր, որպէսզի ինչքան հնարաւոր է շուտ կարենար գիրենք Արժանթին փոխադրել: Սակայն դժիւրեմ ճակատագիրը այլ կերպ կ'որոշէ. օրերն ու ամիսները կ'երկարին, եւ մեծ մայրս, իր ամուսինէն հեռու, նիւթական դժուարին պայմաններու մէջ կը ծննդաբերէ աղջնակ մը, որ յետագային պիտի ըլլար իմ մայրը: Մեծ մայրս իր նորածինը տարագրութեան մէջ մահացած իր մօր անունով Եղիսաբէթ կը կոչէ ու այս

մասին նամակով մը կը հարորդէ մեծ հօրս, որ կրկնակի ուրախութեամբ կ'ողջունէ իր դստեր ծննդեան եւ անուանակոչութեան լուրը: Ան կը պատասխանէ, թէ իր վաղամեռիկ մօր անունն ալ Եղիսաբէթ եղած էր, հետեւաբար՝ նորածինին անունին մէջ պիտի յիշատակուէին նահատակ երկու մայրերն ալ:

Արդարեւ, մեծ հօրս ճակտի քիրտով վաստկած եւ Պէյրութ ուղարկած գումարով մեծ մայրս երկու անգամ կը փորձէ Պուէնոս Այրէս մեկնիլ, բայց Մարսիլիոյ մէջ պատկան պաշտօնեաներէ մերժում ստանալով, ստիպուած կ'ըլլալ իր երեք զաւակներուն հետ վերադառնալու Պէյրութ: Այս գոյգ մը ձախողութիւններուն հիմնական պատճառ հանդիսացած էր մօրեղբօրս ազգազուն ըլլալու եւ խաթախտով տառապելու փաստը, որ այդ ժամանակ Պէյրութի գաղթականներու ջամբարներուն մէջ շատ տարածուած աչքի հիւանդութիւն մըն էր, որ ոչ միայն վարակիչ կը համարուէր, այլ՝ չբուժուելու պարագային կրնար հիւանդը մինչեւ կուրուութիւն առաջնորդել: Մարսիլիոյ նաւահանգիստը պաշտօնեաներ լրջօրէն տարակուսած են նոյնիսկ, որ դժուար թէ պատանին կարենար բաց ովկիանոսին վրայ նաւով այդ երկարատեւ ճամբորդութենէն վերապրիլ:

Ատեն մը ետք, մեծ հօրս մահուան գոյժը կը հասնի Պէյրութ: Ծանր աշխատանքը, ընտանիքին համար ծայրայեղօրէն խնայելու որոշումը, սնունդի պակասը հիւժած էին գինք եւ թոքատապի հետեւանքով պատճառ դարձած իր մահուան: Մեծ մօրս այլեւս ոչ մէկ միջոց մնացած էր, այլպէս դիմելու աշխատանքի՝ իր ճակտին դառն քրտինքով վաստկելու համար իր հացը, կարենալ պահելու համար իր երեք որբերը: Ծանր եւ երկարատեւ ծառայութիւնը իրեն դայեակ, խոհարար, հաւաքարար եւ տան խնամատար՝ լիբանանցի արաբ պետական պաշտօնեայի մը բազմանդամ ընտանիքին մօտ, կը ստիպէ գինք իր զաւակները յանձնելու որբանոցի խնամքին: Նկատի ունենալով, որ մայրս այդ ժամանակ դեռ ընդամենը երկու տարեկան էր, որբանոցի տնօրէնութիւնը կը մերժէ զայն ընդունիլ, քանի որ մանկամարդ փոքրիկներու խնամքը աւելի մեծ պատասխանատուութիւն մը կը նախադրէր: Ծարահատ մեծ մայրս սակայն չի յուսահատիր, այլ՝ օրն ի բուն նստելով որբանոցի մուտքին առջեւ աղի արցունք կը թափէ, կ'աղերսէ այնքան, որ պաշտօնէութեան քար

սրտերն անգամ գութով կը ճմլէ, իր դեռատի աղջնակին համար յաջողցնելով տնօրինելու բացառութիւն մը:

Որբանոցին դպրոցն աւարտելէ ետք, Ովսաննա մօրաքոյրս հետեւեալ քանի մը տարիներուն իբրեւ դաստիարակ կը ծառայէ նոյն որբանոցին մէջ: Բողոքական համայնքէն հայ երիտասարդի մը հետ ամուսնանալէ ետք, առաջին ներգաղթին կը մեկնի Խորհրդային Հայաստան, եւ բնակելով Երեւանի մէջ՝ կը դառնայ հայաշունչ ընտանիքի մը բազմազաւակ մայրը, յետագային՝ տէր ահագին թոռներու եւ ծոռերու:

Մանկութեանս օրերուն անհուն ուրախութիւն մը կ'ապրէի ամէն անգամ, երբ Գրիգոր մօրեղբայրս, որ մինչ այդ դարձած էր բեռնատար ինքնաշարժներու հմուտ մեքենագործ մը, ընտանեօք մեզի այցելութեան դար, միասնաբար նշելու համար Ս. Մնունդն ու Զատիկը, նաեւ՝ ազգային կեղեցական միւս տօները, որոնք լիբանանահայ մեր ընտանեկան հասարակական կեանքին մէջ առանձնապատուկ նշանակութիւն ունէին: Անոնք կը կազմէին մեր հայեցի գոյութեան հակա մասը, մեզի կը ներշնչէին ազգային ինքնութիւն ու մեր մէջ կը կոփէին պատկանելիութեան մը հզօր գիտակցութիւնը, անբաժանելիօրէն կապելով մեր հողին ու արեան մէն մի բջիջը մեր հողին, մշակոյթին, քրիստոնէական կրօնքին ու պատմութեան հետ: Ընտանեկան հաւաքի եւ տօնակատարութեան այսպիսի ուրախալի առիթներով, մեծ մայրս այդ ինչ զարմանալի ոգեւորութեամբ տոնմիկ քաղցրաւենիներ կը պատրաստէր, եւ մենք բոլորս՝ մեծերէն մինչեւ փոքրերը հաճոյքով կը ճաշակէինք սեղանին բարիքը՝ անմեռ յիշատակ մը հայ հիւրընկալ օճախի ճոխութենէն: Ծաշէն ետք, երբ մեծերը սուրճ ըմպելով կամ ծխախոտ ծխելով իրենց առօրեային հետ կապուած հարցերով կամ քաղաքական գրոցներով կը տարուէին, ինծի տարեկից Ստեփան զարմիկիս հետ յաճախ կը խօսէի այն մասին, թէ ինչ պիտի ուզէի ըլլալ ապագային կամ ինչպիսի՞ մասնագիտութիւն մը պիտի իւրացնէի՝ յաջողակ անձ մը դառնալու համար: Այդ ժամանակ մտքս բնաւ չէր անցնէր, որ օր մը պիտի դառնայի օճեալ քահանայ մը, մին՝ հոգեւոր սպասաւորներէն իմ ազգիս: Բայց Նախախնամութիւնը Սուրբ դեռ պատանի տարիքիս քայլերս դէպի Ս.

# ՆԱՐԱՏԱԿՆԵՐՈՒՆ ԿՏԱԿԸ Ո՞ՒՐ ՄՆԱՅ

## ՅԱՐՈՒԹՅՆԵՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Պատմութեան մասին նշանաւոր ասացուածքներէն մին՝ «պատմութիւնը ինքզինք կը կրկնէ» արտայայտութիւնն է: Յաճախ կը կրկնուի այս խօսքը ամէն առթիւ երբ նոր դէպք մը կը պատահի, որ կու գայ յիշեցնել անցեալին պատահած նմանօրինակ դէպք մը:

Հարցումը, որ հազուադէպ կը հարցուի այն է, թէ ի՞նչու պատմութիւնը ինքզինք կը կրկնէ: Պատասխանը յստակ պէտք է ըլլայ: Որովհետեւ մենք պատմութիւնէն դաս չենք քաղէր եւ ամէն մէկ սերունդ կը կրկնէ նախորդին սխալները, փոխանակ սորվելու անոնցմէ: Կը յառաջդիմեն միայն անոնք, որոնք նախկիններու փորձառութիւններէն դաս քաղելով, ըստ այնմ կը ծրագրաւորեն իրենց հեռանկարներն ու ապագան եւ կը ծաւալեն համապատասխան գործունէութիւն:

Եթէ փորձենք գուգահեռներ անցկացնել 20րդ եւ 21րդ դարերու սկզբնական տարիներուն վրայ, մեր աչքին առջեւ հետաքրքրական պատկերներ կը պարզուին:

### Աշխարհի Թաւալքը դէպի 20րդ դար

20րդ դարի պարագային, ճարտարարուեստի եւ ազգայնական գաղափարներու առթիւ յեղափոխութեանց որպէս արդիւնք, համաշխարհային նոր համակարգ մը կը ձեւաւորուէր: Կայսրութիւններ (Օսմանեան, Ռուսական, Բրիտանական, Աւստրո-Հունգարական, Ֆրանսական, եւ այլն) սկսած էին ճարձգաւորել եւ համեմատաբար նորեր (գաղութատիրական) սկսած էին ձեւաւորուիլ (Գերմանական, Ժաբոնական, Իտալական, Ամերիկեան-ԱՄՆ): Այս կայսրութեանց բաղկացուցիչ տարրերը բնականաբար ենթակայ էին այս վերաճեաւորման թոհոփոհին: Գերմանիան կը շահագործէր Միջին Արեւելքի իսլամներու կրօնական զգացումները ընդդէմ Ռուսիոյ, Անգլիոյ եւ Ֆրանսայի նկրտումներուն: Այս վերջիններ, Սայքս-Փիքոյի համաձայնագրով կը ծրագրէին իրար միջեւ բաժանել կործանման ենթակայ Օսմանեան կայսրութեան Միջին Արեւելեան տարածքները: Ռուսիան կը շահագործէր Օսմանեան կայսրութեան Գրիտանիան ալ Ռուսիոյ իսլամները: Գերմանիան Պերլին-Պանտատ երկաթագծով կը փորձէր տիրական ուժ դառնալ Միջին Արեւելքի մէջ եւ օգտուիլ շրջանի քարիւղի հանքերէն: Ամերիկայի Միացեալ Նահանգները միսիոնարական եւ կրթական ծրագրերով ոտք կը հաստատէր նոյն շրջանին մէջ: Մեծ պետութիւններու գաղութատիրական արտադրութիւնները իրարու հետ կը բախէին ու փոքրերը ոտնատակ կ'երթային: Մէկ խօսքով՝ 1876-էն մինչեւ 1915 տարիներուն, աշխարհի հողատարածքի քառորդը ձեռքէ ձեռք կը փոխանցուէր, յանգելով Համաշխարհային Առաջին եւ ապա Երկրորդ պատերազմներուն:

### Աշխարհի Թաւալքը դէպի 21րդ դար

21-րդ դարի պարագային, պատկերը շատ տարբեր է: Եթէ 1878 թուականի Պերլինի վեհաժողովը նկատի առնենք որպէս դէպի 20րդ դար աշխարհի թաւալքի

«Պատմութեան գրուած էջերը նախապէս ապրուածներու մասին են, իսկ սպիտակ էջերը՝ ապրուելիքներու մասին: Անցեալին ապրուած մեծ ողբերգութեան պատասխանատուներուն նման պիտի վարուի՞մք, թէ՞ ոչ այդ թերութիւններէն դաս քաղելով՝ նոր էջերն այս անգամ քաղաքակիրք մարդու վայել ոճով պիտի գրենք: Մեր առջեւ ծառայած ամենամեծ պատասխանատուութիւն է այս:»

սկզբնակէտը, ապա կարելի է 1989-ի Պերլինի Պատի փլուզումը սկզբնակէտ համարել դէպի 21րդ դար համաշխարհային նոր համակարգի մը ձեւաւորման եւ համաշխարհային Գ պատերազմի մը ծագման ոչ արհամարհելի հաւանականութեան: Այդ թուականէն ի վեր առնուազն 34 նոր երկիրներ անկախ պետականութիւն հռչակած են: Բոլորիս ծանօթ է իսլամական շարժումներու շահագործումը, որ հրահրուեցաւ տապալելու համար Խորհրդային Միութիւնը, բայց կը շարունակուի նորանոր կերպարանքներով Իրաքի, Իրանի, Սուրիոյ, Լիպիոյ եւ այլ երկիրներու մէջ ու հասած է մինչեւ Եւրոպա: Նոր կեանքի ու կենցաղի խոստումներով մէջտեղ եկած Արաբական «Գարուն»ը, կառուցում է աւելի կործանում բերաւ շրջանի երկիրներուն եւ կը սպառնայ մեր նշած երկիրներու տարանջատմանց, ինչպէս նաեւ շրջանի այլ երկիրներու ապակայունացման եւ մեծաթիւ գաղթականներու արտահոսքին: Քարիւղատար խողովակներու ուղիներու ծրագրաւորումը պատճառ կը դառնայ համաձայն չեղող իշխանութիւնները տապալելու եւ դրածոյ հաւատարիմներ հաստատելու փորձերու, անկախ այդ տուեալ երկրի ներքինները բնակչութեան շահերէն: Մեծպետական մրցակցութիւնը եւ փոքր երկիրներու ու փոքրամասնութեանց շահագործումը կը շարունակուի, հողային նուաճումներու փոխան՝ տնտեսական եւ այլ միջոցներով: Համացանցի առթած յեղափոխութիւնը արագացուցած է համաշխարհայինացման ընթացքը, որ կը միտի բթացնել ազգայնական զգացումները եւ աշխարհը վերածել բաց շուկայի մը, ուր մարդիկ պարզապէս սպառողներ են այն ապրանքներուն, որոնք «մեծե»րուն կողմէ կը հրամցուին իրենց: Անգիտակից հետեւողներ՝ եւ ոչ թէ ինքնուրոյն մտածողներ:

Ձուգահեռներ 20րդ եւ 21րդ դարերու Սկզբնական Տարիներու Յայ Իրավիճակին Այս բոլորը եւ աւելին աչքի առջեւ ունենալով, փորձենք կարգ մը գուգահեռներ անցկացնել Եղեռնի նախօրեակի եւ ներկայի մեր իրավիճակներուն:

- Ամենէն մտահոգիչ գուգահեռ մեր թուաքանակն է մեր հողերուն վրայ: Եղեռնի իրագործման գլխաւոր պատճառներէն մին մեր փոքրաթիւ ըլլալն էր Արեւմտեան Հայաստանի տարածքին: 1980-ականներու մօտ 4 միլիոնոց Հայաստանը շատ աւելի մեծ ապահովութիւն էր մեր պետականութեան ամրակայման համար, քան թէ ներկայի մօտ 2 միլիոնոց Հայաստանը: Արցախը ազատագրեցինք ու փոխանակ վերաբնակեցման, հայաթափման ակամատես կ'ըլլանք: Տագնապահար Սուրիահայութեան հագիւ 10-15 տոկոսը կը նախընտրէ Հայաստան հաստատուիլ, իսկ Հայաստանի մէջ կատարուած հարցախույզերը ցոյց կու տան, որ տակաւին մեծ տոկոս

## Հրանդ Տիմք

մը նպատակադրած է արտագաղթել: Եւ այս մտահոգիչ պատկերը կը պարզուի ընդդէմ Ազգայնական բնակչութեան աճին:

- Մտահոգիչ կարեւոր գուգահեռ մըն է նաեւ մեր վերնախաւի եւ ժողովուրդի մեծամասնութեան միջեւ տիրող անշրպետը: Ինչպէս որ Եղեռնի նախօրեակին Պոլսոյ (նաեւ Թիֆլիսի եւ Պաքուի) հայ վերնախաւն ու մեծահարուստները անտարբեր կը մնային գաւառներու պարպումին ու հոնկէ եկող մտահոգիչ լուրերուն, այնպէս ալ այսօր, մեր վերնախաւը անտարբեր կը մնայ սահմանային մեր գիւղերու վատթարացման վիճակին: Թէ՛ անցեալին եւ թէ՛ այսօր, անոնց մտահոգութեան առանձքը միայն իրենց դիզուող հարստութիւնն է, եւ ոչ թէ այդ հարստութեան աղբիւր հողի ամրակայունը ու ժողովուրդի բարօրութիւնը:

- Վերեւ նշուած գուգահեռին հետ անմիջականօրէն կապուած գուգահեռ մըն է նաեւ ազգափրութեան եւ հայրենասիրութեան ոգիի առկայութիւնը եւ հայրենի հողի հետ կապուածութեան կարեւորութիւնը: Խրիմեան Հայրիկներու «Պապիկ Պապի»ի դասերն ու յորդորները՝ ամուր կառնելու բոլորիս անունդ հայթայթող հայրենի հողին, Գնդապետ Մազմանեաններու անձնագոհողութեան օրինակը՝ ամէն գնով պաշտպանելու հայրենի հողը, դժբախտաբար ժամանակին չ'իւրացուեցան մեր վերնախաւի, պետական այրերու եւ ժողովուրդի կարեւոր հատուածին կողմէ, պատճառ հանդիսանալով անդառնալի կորուստներու, որոնց զգաթնակէտը կարսի խայտառակ յանձնումն էր: 1990-ականներու Արցախեան ազատամարտն ու այս ամսուան սկիզբի Արցախեան ճակատի ոգեշնչիչ օրինակները մեզ կը յուսադրեն, որ անոնք չեն դառնար լոկ անցեալի ֆիտայական անջատ պոթիկումներու դէպքեր, այլ կ'ամրագրուին բոլորիս մտայնութեան մէջ, որ Հայրենիք պահելու միակ ճամբան այդ է, եւ կը մղեն բոլորս համազգային գօրաշարժի, գործելու այդ գիտակցութեամբ եւ վճռակամութեամբ:

- Մեր մօտիկ անցեալի եւ ներկայի պատմութիւնը մեզի կը յուշէ, որ ո՛չ Թուրքը եւ ո՛չ ալ Ռուսը կ'ուզեն հօր Հայաստան մը տեսնել իրենց սահմանին, այլ կը նախընտրեն կամ բնաջնջել մեզ եւ կամ ալ ունենալ «Հայաստան առանց Հայի», կամ ենթակայ իրենց: Նոյնն է պարագան Արեւմուտքի պետութեանց: Անցեալին, Հայկական Հարցն ու Բարենորոգումներու Ծրագիրը շահարկման առարկայ էր մեծ պետութեանց համար, մեր

հաշուոյն զիջումներու կորզելու Օսմանեան կայսրութիւնէն: Այսօր, անոնց շահարկման առարկան Հայկական Յեղասպանութեան ճանաչման արշաւն է: Խեղճի պիտի գա՞նք, թէ ոչ՝ «Ծերանում ենք, Պարոյր Սեւակ, սակայն ... խեղճի չենք գալիս...»:

- Մէկ այլ կարեւոր գուգահեռ մը, կազմակերպութեանց շահերը ազգային շահէն գերադաս համարելն է, ի վնաս երկրի ընդհանուր շահերուն եւ բարօրութեան: Թէ՛ Եղեռնի նախօրեակին եւ թէ՛ ներկայիս, կը հանդիպինք շատ մը օրինակներու, ուր ազգային շահը տեղի տուած է կազմակերպութեանց շահերուն: Օրինակ՝ Օսմանեան Խորհրդարանէն ներս պատգամաւորական արժողութեան առուծախը, նոյնիսկ Ատանայի կոտորածի յետնօրեակին, որով իթիհատը կը կաշառէր ՀՅԴ-ն: Այսօր ալ, նմանօրինակ կաշառք տեղի ունեցաւ երբ իշխանութեան ջախջախիչ մեծամասնութիւնը իր ձեռքին ունեցող ՀՀԿ-ն, 19 նախարարութիւններէն 3 հատը տուաւ խորհրդարանական ընտրութիւններուն 5 տոկոսի սահմանը չանցած ՀՅԴ-ին: Թէ՛ անցեալին եւ թէ՛ ներկայիս, այսպիսի առուծախ երբէք արդարանալի չէ մեր ազգային շահերէն մեկնած: Դեռ չենք խօսիր Հայաստանէն ներս «առնետափազքերու» եւ տարբեր նախարարութիւններու միացման կամ բաժանման մասին, մեկնած անհատական թէ հատուածական հաշիւներէ եւ ոչ թէ երկրին շահերէն:

- Ապրիլեան մեր այս խորհրդածութիւնները աւարտենք մէկ այլ գուգահեռի մը նշմամբ: Անցեալի պաշտպանութեամբ մեր մէջ, միշտ ալ աւելի շեշտուած է, քան ապագայի մասին մտորումները: Հասկնալի է այս մէկը, որովհետեւ աւելի հեշտ է կատարուածին նայելը, մանաւանդ մեզ նման դարաւոր անցեալ ունեցող ազգի մը համար, քան թէ կատարուելիքի մասին խորհրդածելը, ծրագրելն եւ կերտելը: Անցեալը հարստութիւն է բոլոր անոնց համար, որոնք կրնան դասեր քաղել անկէ ու գայն աւելի հարստացնել: Իսկ անցեալի հարստութեամբ գոհացողին ու գայն ծախսողին համար, անիկա կրնայ յանգիլ սնանկացման ու դառնալ մահաբեր:

Եղեռնը քչեց տարաւ վերնախաւն ու պարզ ժողովուրդը, հարուստն ու աղքատը, տարբեր կազմակերպութեանց ու հարստուանութեանց պատկանող հայերը: Եղեռնը պատճառ դարձաւ մեր հողագրկումին, բնաջնջումին եւ մնացորդացի փոռումին: Մեզի մնաց նահատակներուն կտակը՝ պատմութեան դասերը: Հարց տանք Հրանդ Տիմքի հետ. «Անցեալին ապրուած մեծ ողբերգութեան պատասխանատուներուն նման պիտի վարուի՞մք, թէ՞ ոչ այդ թերութիւններէն դաս քաղելով՝ նոր էջերն այս անգամ քաղաքակիրք մարդու վայել ոճով պիտի գրենք: Մեր առջեւ ծառայած ամենամեծ պատասխանատուութիւնն է այս:»

**Ձեր Ծանուցումները Վստաքեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net



### ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՄԵԾ ԵՂԵՈՆԻ ԴԵՏ 100 ԱՄԵԱՅ ԴԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

#### ՍՈՒՐԷՑ ԽՈՒԴԱՆԵԱՆ

Հայոց Մեծ Եղեռնի 100 ամեայ պատմութիւնը Ազգային եւ Միջազգային հարցերում ունի նրա անդրադարձը՝ Հայապահպանութեան գործում եւ ազգային համախմբման հարցում նրա դերն ու նշանակութիւնը:

Գերտէրութիւնների կողմից Հայոց Մեծ Եղեռնի շահարկումները, անգամ չարաշահումները, գալիս են ստիպելու մեզ, որ այլեւս մի իրատեսակուն հայեցակարգ ունենալը եւ ժամանակի հրամայականներին ներդաշնակ ուղղամտութիւն մշակելը անյետաձգելի է:

Ղարաբաղա-ատրպէյճանական վերջին քառօրեայ բախումները եւ այդ ֆոնին ստեղծուած ազգային համախմբումի սքանչելի երեւոյթը, որքան յուզող էր այնքան յուսադրող, որքան ցաւոտ էր աւելին հպարտացնող:

Ահա փերուն հրադարարի կողքին բացուել է խութերով լի փշոտ եւ քարքարոտ դիւանագիտական դաշտը, որտեղ ցաւօք սրտի եւ մեր հայրենի իշխանութիւնները միջազգային յարաբերութիւններում իշխող խաղի կանոններին չտիրապետելու պատճառով շատ ու շատ կորուստներ են արձանագրել:

Կորուստների գլխաւոր պատճառը թերեւս անվստահութիւնն է սեփական ուժերի հանդէպ: Վստահութեան պակասը պայմանաւորուած է սեփական ժողովրդի կողմից եւ հաւաքական կամքի արտայայտմամբ ընտրելու գործօնով: Այստեղ խօսքը արդար ու թափանցիկ ընտրութիւնների մասին է:

Ուստի Մեծ Եղեռնի հետ հարիւրամեայ հայեցակարգը մշակելիս անհրաժեշտ է.

- Սփիւռքը որպէս ցեղասպանութեան արդիւնք, եւ ընդհանուր մէկ մարմնի պոկուած բեկորներ պիտի հաւատայ, վստահի եւ ապաւինի Հայաստանի ինքիշխան ժողովրդավար պետութիւնը:

Իսկ Հայաստանի իշխանութիւնները նրան հասնելու համար դեռ շատ ճանապարհ ունեն անցնելու: Դժբախտաբար այս անցումը կատարուած է շատ դանդաղ:

- Հաշուի առնելով այն իրողութիւնը որ ամէն մի երկրի զարգացման, գոյատեւման եւ անգամ անհետացման գլխաւոր գործօնը ժողովուրդն է իր պոտենցիալով (ներուժով):

- Մեզ անհրաժեշտ է սեւեռել թուրքիայում ժողովրդական շարժումների եւ նրանց տարաբնոյթ զարգացումների վրայ:

Այստեղ հարկ է լինել Հրանդ Տինքին, որն ասում էր, եթէ մի օր թուրքիայում ժողովրդավարութիւնը յաղթանակի, յաջորդ օրը 3

միլիոնով կ'աւելնայ հայերի թուաքանակը: Ըստ երեւոյթին նկատի ունէր ծպտեալ հայերի ինքնաբացայտումը:

- Հայ դատի ինդիւրը պէտք է դիտարկել այս կոնտեքստում: Չենք բացառում ուժի գործօնը: Բայց կեղերոնանում ենք միջազգային իրաւարար նորմերի աշխատող շրջանակների վրայ:

- Բռնի դաւանափոխուած ու իրաւագրով մարդը որպէս թուրքիայի քաղաքացի աւելի մօտ է կանգնած ցանկացած դատական ատենանին որպէս պահանջատէր-հայցուոր քան ցանկացած գաղթօճախի իրաւատէր ազատ հայ մարդը:

Սակայն հայ դատի պահանջատէր հայցուորը ներկայիս թուրքիայի տարածքում իր ինքնութիւնը բացայայտելու եւ կազմաւորուելու ինդիւր ունի: Այս ինդիւր լուծման համար գորակցութեան է գալիս սփիւռքը իր մտաւոր, հոգեւոր, դիւանագիտական եւ քաղաքական ներուժով: Գլխաւոր գորակցողի դերը ստանձնումն է Հայաստանը իր պետական հասարակական եւ մշակութային կառուցներով եւ նախապայմաններով:

- Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը, միջազգային դատական ատենաներում ազդեցիկ պահանջատիրութիւնը պէտք է համընդգրկուն ներդաշնակութիւն ձեռք բերի վերոյիշեալ գործօնի հետ: Այն է գարթօնքի ճանմբան եղած ծպտեալ հայերի պայքարի հետ:

- Հայեցակարգային եւս մի կարեւոր հարց է, այն որ սփիւռքը որքան էլ կազմակերպուած լինի, միայն հայապահպանման, ազգային եւ մշակութային արժէքները պաշտպանելու փոխանցելու առաքելութիւն կարող է իրականացնել: Չենք մոռանում արտերկրներում քաղաքական եւ իրաւական բեմերում ազդեցիկ դիրքերի հասած հայորդիների դերը, համահայկական ինդիւրների լուծման հարցում: Սակայն, միջազգային յարաբերութիւններ իշխող խաղի կանոնների ֆոնին վերոյիշեալ հայագրի, կամ համախոհների ներդրումը ամբողջ արդիւնքի մէջ աննշան է:

Սփիւռքի ներուժը իր առաքելութեան հարցում այն ժամանակ է բազմապատկուած, երբ որ օրգանական կապ է ունենում հայրենիքի հետ եւ այդ փոխադարձ կապը հետարւոր բոլոր միջոցներով, եւ առաւելագոյն ինամբով զարգանում եւ արդիկանացում է: Վերջում եւս մի անգամ շեշտենք ժողովրդավար, հզօր Հայաստանի անհրաժեշտութիւնը հայ դատի ինդիւրները լուծելիս:

### 101 ՏԱՐԻ ԵՏՔ, ԹՇՆԱՍԻՆ ՆՈՅՆ ԲՆԱԶՆՁՄԱՆ ԳԱՂԱՓԱՐՈՎ ԿԸ ԳՈՐԾԷ, ԻՆՉ ԱՆԵԼ

#### ԶԱԽԷՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Թուրքը մէկ տուն կը քանդէ, պէտք է կառուցենք տասը տուն, թուրքը եւ ազերին երկու հազար զարաբաղցիի դէմ չի կուրիր, իրենց դէմ ունին տասը միլիոն հայ:

Ապրիլ 24-ի նուիրուած իմ յօդուածս կը սկսիմ այս պատկերով արտայայտուելու համար թէ 101 տարի առաջ գործուած ջարդը եւ ջարդի հեղինակը նոյնն է, չէ փոխուած ու պիտի չփոխուի եթէ զգաստացնող պատիժի կամ հակադարձութեան չ'ենթարկուի:

Կարելի է անջատել կամ տարբեր հայեացքի տակ դիտել այն ինչ որ պատահեցաւ 2016-ի Ապրիլի սկիզբը Ղարաբաղի դէմ ազերիական յարձակումը նոյն 1915-ի հայերուն դէմ Կիլիկիայէն արտասահմանի գործողութենէն, հետեւաբար պէտք է թոյլ գտնուինք քանզի արիւնածարաւ թուրքը տակաւին կը շարունակէ ազգաջնջումի իր քաղաքականութիւնը: Իսկ միջազգային անարդարութիւններու, արժէքներու վերացման եւ «մեծ ուժեր» ճանչցուածներու մոլորութեան ժամանակաշրջանին, մեր գոյատեւման եւ յաղթանակի արձագանգող «զէնքը» պիտի ըլլայ տասը միլիոն հայերու միասնականութիւնը եւ հաւաքական գործունէութիւնը:


Այս իրողութիւնը ցոյց կուտայ թէ վտանգը միշտ կը սպառնայ հայերուն: Սակայն այս իրավիճակը ցոյց տուաւ նաեւ թէ Ատրպէյճան, օգնութեամբ թուրքիոյ եթէ շարունակէր յարձակումները, պարտուած դուրս պիտի գար, հետեւաբար պէտք է գիտակցինք թէ հայութեան այս օրերու կարգավիճակը միջոց մըն է վայրագ թուրքը սանձելու մեր հակադարձակումներով, մեր ամուր պաշտպանողականութեամբ, թուրքիոյ ստեղծած սարսափին դէմ արհամարհանքի կեցուածքով, սակայն կողքին՝ միշտ արթուն եւ իր կեղծաւոր յայտարարութիւններուն դէմ անհաւատ, պարտադրելով մեր արդար իրաւունքներու ճանաչում եւ հատուցում, այս բոլորը դարձեալ միասնական եւ համագործակցական ծրագիրներով: Միասնականութեան ոգին մեզ պէտք է մղէ իւրաքանչիւր հայու մեր գոհերը վերակենդանացնելու մեր օժանդակականութիւններով, նախ՝ բարոյական եւ ապա նիւթական որպէսզի թէ՛ Հայաստանի, թէ՛ Արցախի եւ թէ՛ Սփիւռքի մէջ հնչէ գոյատեւումի բոլոր արտայայտութիւնները՝ պատերազմներէն յաղթական ու առօրեայ կեանքին մէջ ուրախ կենցաղով եւ ստեղծագործական ոճով:

Ապրիլի սկիզբի թուրքական օգնութեամբ ազերիներու յարձակումը սկիզբ թող հանդիսանայ մեծ եղեռնի հարիւրամեակէն ետք, երկրորդ դարի նոր պայքար մղելու բռնատիրապետուած իրաւունքներու պահանջքը եւ ոճրագործը դատելու պայքարը շարունակելու ալ աւելի խտացուած շարքերով եւ զօրակցութեամբ: Իսկ այս պայքարի առաջին քայլ՝ հակադարձելու համար 22 տարուայ ատրպէյճանցի հակառակորդի հրադարարի խախտումին, Հայաստան եւ ամբողջ հայ Սփիւռքը մեծ շուքով տօնելու յաւաքիկայ Սեպտեմբերին Հայաստանի անկախութեան 25 ամեակը: 20-րդ դարու սկիզբը, հայութիւնը իր դէմ ունեցաւ կործանա-

րար թալէաթ, էնվեր, ձեմալ, իսկ 21-րդ դարու սկիզբը տակաւին իրեն դէմ ունի թշնամի էրտողան, Տաւութ եւ Չաւուշ օղլուներ, Ալիե որոնք բնաջնջումի մտայնութեան նոյն տգէտ դերակատարներն են, կարելի չէ սպասել թէ պիտի զգաստին իրենց ոճիրներուն եւ պիտի հաւատան անցեալի սխալը սրբագրելու: Սակայն անոնց դէմ, ինչպէս մեծ Եղեռնէն ետք, հայ ժողովուրդը անգամ մը եւս հաւատաց իր դաժան ճակատագրի վերակերտումին, մեր սերունդը եւ մեզ յաջորդողներ պիտի շարունակեն այդ հաւատքը գորացնելու ու գոյատեւման պայքարը անվերջ ընդլայնելու:

Դէպքերը ցոյց կուտան թէ հայութեան պարտադրուած է հայրենիք եւ ազգ վերապրեցնել գոհողութիւններու տուրքով, եւ դժբախտաբար այդ գոհողութիւններու ցանկին վրայ կայ նաեւ արեան տուրքը: Սակայն իբր հայ, աշխարհի բոլոր անկիւններուն մէջ, երբ զգանք թէ թշնամին կրկին կը փորձէ մեր գոյութիւնը վտանգել, կամաւոր պիտի լծուինք պատմական մեր կոչումը արժեւորելու եւ վկայելու թէ մեր էութիւնը ամէն բանէ վեր է ու պատրաստ ենք այդ էութեան համար սուրբ պայքարներ մղելու: Մենք զօրեղ ենք մեր դարերու ճակատամարտերով եւ երբ մեզի կը պարտադրուի վրէժխնդրութեան հաշիւ մատուցել, պատրաստ ենք այդ հաշուարկութեան: Այդ պարտադրանքը միշտ հայուն ներշնչած է քանդել բոլոր արգելքները, ստրկանալու կամ յանձնուելու եւ անգամ մը եւս կը վերսկսինք իրաւունքներու եւ արդարութեան պահանջքի գորակոչներու դիմելու, որքան ալ ահաւոր ըլլան գրկանքները եւ վնասները, սակայն ի վերջոյ, ինչպէս միշտ, կամքը ունինք հերոսական ճակատամարտով, զանազան մարզերէ ներս, պարտադրել թշնամիին յաղթանակ, նոյնիսկ եթէ թշնամին 101 տարիէ այդ յաղթանակը կը քողարկէ ու կ'ենթադրէ թէ առաւելութիւնը, իր ձեռքն է:

Մենք համոզուած ենք թէ աշխարհի մէջ տակաւին մեր կողքին սատարողներ կամ պաշտպանողներ չկան, հետեւաբար իւրաքանչիւր հանգրուանին նոր էջ պէտք է բանանք մեր պատմութեան: Մեր համախմբուածութիւնը մեր ուժն է, ու յաղթանակները շատ աւելի արագ պիտի ըլլան: Իսկ նոր էջի իրականացման գլխաւոր խորագիրը կը հանդիսանայ համայն հայութեան յաւելեալ կազմակերպուածութիւնը ամենուրեք գօրացնելու համար հայրենիքը, Արցախը եւ Սփիւռքը որ արտաքին ուժն է օտար ավերակ վրայ հայկական դատի իրաւունքներու արդարութիւնը ցոլացնելու: Խաղաղ օրերուն շինարար ենք, այս կատարեցինք շարունակ 100 տարի, իսկ երբ մեզ կը պարտադրուի նոր պատերազմ ինչպէս պատահեցաւ Ապրիլ 2-ին Ղարաբաղի վրայ, շատ արագ հակադարձող ենք որպէսզի ալ աւելի ամուր կերտենք եւ շատ արագ հարուցենք քանդուածը: Այս պատկերը պէտք է իրագործենք ընդմիշտ չտկարանալու, չյոգնելու եւ չսպասելու համար, այլ հակառակը յոգնեցնելու, հարուածելու եւ յուսաբեցնելու հակառակորդին:



**MEHER BABIAN, D.D.S.**  
General Dentistry

---

1111 S. Glendale Avenue  
Suite 206  
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884  
Tel: (818) 547-1476

# ԱՆՆՈՆՁ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏՐ

## ԵՐԱՆՈՒՀԻ ՂԱԶԱՐԵԱՆ

Ես միմյնու ուղմ ու ծուծս հայ եմ, որ կը նշանակե՛լ յ ա մ ա ո , եռանդուն, հետեւողական եւ դժուարութիւններու առջեւ երբեք չընկրկող: (Վահագն Տատրեան)

Երբ կ'ոգեկոչենք Հայոց Ցեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակները, երբ մեր արդար դատին ճանաչումը կ'անկնկալենք աշխարհէն եւ հատուցում կը պահանջենք եղեռնագործին ժառանգներէն, պարտինք նաեւ արժանին մատուցել իր կեանքը փաստերու որոնումին եւ Ցեղասպանութեան ծանօթացման նուիրած ցեղասպանագէտ, պատմաբան, ընկերաբանութեան Դոկտ. Փրոֆ. Վահագն Տատրեանին, նշելով միաժամանակ իր ծննդեան 90-ամեակը:

Վահագն Տատրեան ծնած է Պոլիս Մայիս 27, 1926-ին: Մեծ հայրը 19րդ դարու վերջաւորութեան Կեսարիայէն փախելով կ'ապաստանի Անքարայի Չորում քաղաքը, ուր կը զբաղի առեւտուրով: Հայրը, երիտթուրքերու կուսակցութեան անդամ, եղած է դատական պաշտօնեայ: Երկուքն ալ ծաւալած են բարեսիրական գործունէութիւն, որու ծիրէն ներս առաջինը կառուցած է եկեղեցի, իսկ երկրորդը հիմնած է ազգային դպրոց: Այս պատճառներով, երբ կը սկսի Ցեղասպանութիւնը, նահանգապետը կը հրահանգէ աքսորել միայն Տատրեան ընտանիքը, մինչ Չորումի բոլոր Հայերը կ'ոչնչացուին: Ցեղահանութեան ընթացքին ընտանիքը կը կորսնցնէ բազմաթիւ անդամներ, իսկ պատերազմէն վերջ հայրը կը վերադառնայ Պոլիս:

Նախնական կրթութիւնը Սկիւտարի ազգային դպրոցին մէջ ստանալէ ետք, Վահագն Տատրեան կ'ընդունուի Պոլսոյ Վիեննական Միթիթարեաններու վարժարանը: Ուսողութեան մրցոյթի մը մասնակցելով, կրթաթոշակ կը ստանայ Պեռլինի համալսարանէն, ուր կը մեկնի ուսողութեան հետեւելու: Երկու տարի վերջ կ'անցնի Վիեննայի համալսարան: Այստեղ իր փրոֆեսորներէն մէկը, հայ ըլլալը իմանալով, կը յորդորէ կարգաւ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրեր»ը: Կը կարգայ ու կը ցնցուի: Կը կարգայ նաեւ Պալաքեան եպիսկոպոսի «Հայկական Գողգոթա»ն, որմէ յետոյ կը հրատարի ուսողութեան: Ապա կ'անցնի Յիւրիխի համալսարան, ուր կը մասնագիտանայ միջազգային իրաւաբանութեան մէջ: Ի վերջոյ, Շիքակոյի համալսարանին մէջ կ'ուսանի ընկերաբանութիւն եւ 1954-ին կը ստանայ Փիլիսոփայութեան Դոկտորի կոչում:

Ան որպէս հետազոտող աշխատած է Հարվարտի մէջ, դասաւանդած է Մասաչուսեցի Թեքնոլոգիական Ինստիտուտի (MIT)-ի (հիւր փրոֆեսոր), Տիւք համալսարանի (այցելու փրոֆեսոր), Այտահոյի, Պոսթնի, Ուիսքոնսինի, Ֆլորիտա Աթլանթիք համալսարաններուն մէջ: Ֆրանսերէն, Անգլերէն, Գերմաներէն լեզուներով դասախօսութիւններ ներկայացուցած է աշխարհի բազմաթիւ համալսարաններու, գիտական-հասարակական կեդրոններու մէջ (Պեռլինի Ազատ համալսարան, Միւնխենի, Փարմա-



յի, Թորինոյի, Յիւրիխի, Ուփսալայի, Ֆրանքֆուրթի, Քէօլնի, Պոլիտմի, Միւնսթերի, Ամսթերտամի, Ութրեխթի, Ժնեւի, Պրիւքսելի համալսարաններ, Փարիզի UNESCO կեդրոն, Միացեալ Ազգերու Նիւ Եորքի կեդրոն, դատական ատեաններ): Ծոն Մարշալ Իրաւաբանական Դպրոցի 100-ամեակին հանդիսացած է գլխաւոր բանախօսը: Ան մասնակցած է ցեղասպանութեան նիւթով բազմաթիւ համագումարներու, մշտարթուն հակազդող եղած է Ցեղասպանութիւնը ժխտող հակահայ յօդուածներու, իսկ 1995-ին եղած է առաջին գիտնականը որ հրաւիրուած է Բրիտանական Խորհրդարան դասախօսելու Ցեղասպանութեան 80-ամեակին առթիւ:

1970-91 որպէս ընկերաբանութեան փրոֆեսոր ծառայելէ ետք Նիւ Եորքի նահանգային համալսարանէն ներս (SUNY GENESEO), Վահագն Տատրեան կը փոխէ իր ասպարէզին ուղղութիւնը, ամբողջութեամբ նուիրուելու Հայոց Ցեղասպանութեան ուսումնասիրութեան, դրդուելով «հայ նահատակներու յիշատակը անշէջ պահելու» հրամայականէն: Երկար տարիներ կ'աշխատի որպէս տնօրէն Կուկենհայմ Հիմնարկի հովանաւորած ցեղասպանութեան ուսումնասիրութեան ծրագրին, որու առաջին կարեւոր ձեռքբերումը կ'ըլլայ հրատարակութիւնը 1995-ին History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus (Պատմութիւն Հայոց Ցեղասպանութեան ցեղային ընդհարում Պալքաններէն մինչեւ Անատոլիոյ մինչեւ Կովկաս) ծաւալուն գիրքը, որ արդէն հասած է 7րդ տպագրութեան եւ թարգմանուած տարբեր լեզուներու: «Այս ուսումնասիրութիւնը ունի երկու գլխաւոր նպատակ», կը շեշտէ հեղինակը. «1) քննել Ա. Համաշխարհային պատերազմի Հայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան-թրքական, ինչպէս նաեւ Կայսերական Գերմանիոյ եւ Աւստրիոյ, պատերազմի ընթացքին Թուրքիոյ քաղաքական եւ ռազմական դաշնակիցներուն, պաշտօնական փաստաթուղթերու հսկայական ժողովածուին ընդմէջէն, 2) քննական վերլուծումի ենթարկել այդ Ցեղասպանութիւնը պատմական տեսակէտէ: Իսկ Ռոճըր Ու. Սմիթ, Քոլէճ ոֆ Ուիլիամ Էնտ Մէրի-ի Կառավարման փրոֆեսոր, կը գրէ «հազուադիւս գիրք մըն է, որու պատրաստութիւնը տեւած է աւելի քան 20 տարի, որու ընթերցումը հետաքրքրաշարժ է, տեսադաշտը ամբողջական, եւ նկարագրած եղելութիւններու փաստագրութիւնը անգերազանցելի»:

1996-ին լոյս կը տեսնէ ուրիշ կարեւոր գիրք մը, German Respon-

sibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity (Գերմանական Պատասխանատուութիւնը Հայոց Ցեղասպանութեան մէջ. Տեսութիւն Գերմանական Մեղսակցութեան Պատմական Փաստին), արդէն երրորդ տպագրութեան մէջ, իսկ 1999-ին՝ Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian conflict (Հրաման Ցեղասպանութեան Գլխաւոր տարրեր Թուրք-Հայկական Ընդհարումին) եւ Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification (Գլխաւոր տարրերը Թուրքերու կողմէ Հայոց Ցեղասպանութեան ժխտումին. Աղաւաղումի եւ Կեղծումի Յատուկ Ուսումնասիրութիւն):

Նորագոյն գիրքը՝ Judgment at Istanbul: The Armenian Genocide Trials 1919-22 (Պատավճիռ Իսթանպուլի մէջ. Հայոց Ցեղասպանութեան Պատավարութիւնները 1919-22), համահեղինակութեամբ Թաներ Աքչամի, լոյս տեսած է թրքերէն 2008-ին, իսկ 2011-ին անգլերէն, Հայաստանի եւ աշխարհատարած Հայութեան պատմական, քաղաքական, ընկերային եւ մշակութային ժամանակակից հարցերու ուսումնասիրութեան եւ փաստագրութեան նուիրուած միջազգային կեդրոնին՝ Չօրեան Հիմնարկին կողմէ, որու Ցեղասպանութեան ուսումնասիրութեան բաժնին տնօրէնն է Փրոֆ. Տատրեան 1999-էն ասդին: Առաջին համատեղ հրատարակութիւնը համաշխարհային գետնի վրայ Հայոց Ցեղասպանութեան ամենէն համբաւուած մասնագէտներուն, «աշխատութիւնը լիովին հիմնուած է իսկական եւ վաւերացուած փաստաթուղթերու վրայ, առաջին ամբողջական փաստագրութիւնն է դատավարութեանց, ատենի մամուլին, ազգային ատենի մը կողմէ գանգուածային վայրագութեան մը առաջին յաջող քրէականացման»:

Փրոֆեսորը հեղինակն է նաեւ փաստագրական մենագրութիւններու, հանրագիտարանային արձանագրութիւններու, թարգմանութիւններու, գրախօսականներու, տարբեր լեզուներով իրաւաբանական եւ այլ գիտական հարիւրաւոր յօդուածներու (համեմատական ցեղասպանագիտութեան հարցեր, ցեղասպանութեան իրաւական եւ հոգեբանական վերլուծում, եւ այլն): 1980-ական թուականներուն հեղինակած է առանձին յօդուածներ Հայոց Ցեղասպանութեան մէջ թրքական բանակի գիտնորներու, թուրք բժիշկներու, բանտերէն արձակուածներու դերին մասին: Մինչ կիցակէտը Հայոց Ցեղասպանութիւնն է, ան ազդեցիկ եղած է նաեւ ցեղասպանութեան աւելի լայն բնոյթի հարցերուն վրայ (Հրէական, Ամերիկայի Հնդկներու, Ռուսաստանի):

1998-ին յատուկ հանդիսութեամբ Վահագն Տատրեան կ'ընդունուի ՀՀ Գիտութեան Ազգային ակադեմիայի շարքերը եւ նոյն ատեն կը պարգևատրուի ՀՀ մշակութային բարձրագոյն՝ Խորենացիի անուան շքանշանով: 2005-ին, Հայոց Ցեղասպանութեան 90-ամեակի եւ Հայաստանի մէջ դասախօսութիւններու շարքի մը առիթով Վ. Տատրեան Պատուոյ Փրոֆեսոր կը հռչակուի երկու հայկական համալսարաններու կողմէ եւ կը պարգևատրուի երեք ոսկի մետալով: Նոյն տարին Ամերիկայի Ցեղասպանութեան Գիտնականներու Մի-

ջազգային Ընկերակցութիւնը, իր վեցերորդ երկամեայ համագումարի ընթացքին փրոֆեսորին կը շնորհէ Lifetime Achievement Award առաջինը այդ կազմակերպութեան: Դարձեալ 2005-ին, իրեն կը շնորհուի էլլիս կղզիի Պատուոյ Մետալը: Վերոյիշեալներէն զատ ան արժանացած է ՀՀ երեք նախագահներուն, Արցախի Կրթական նախարարութեան, Հայաստանի Սփիւռքի Նախարարութեան, հայ եւ օտար համալսարաններու, եկեղեցական եւ հասարակական հաստատութիւններու շքանշաններուն, պատուոյ դիւրերուն ու տիտղոսներուն:

«Ջախջախիչ փաստերով կրնամ գիտական աշխարհին ապացուցել Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը», կ'ըսէ Վահագն Տատրեան: Հայերէն, Գերմաներէն, Անգլերէն, Ֆրանսերէն, Թրքերէն, Օսմաներէն լեզուներու իր հմտութիւնը կարելիութիւնը ընծայած են իրեն քսանհինգամեայ փաստերու որոնումի ընթացքին բուն աղբիւրները ուսումնասիրելու: Եւ այդ փաստերը պէտք էին ըլլալ «տեղին, ճշգրիտ, անվիճարկելի, ստուգելի», չորս պայմաններ, որոնք անհրաժեշտ են զանոնք ընդունելի կացուցանելու: Օգտագործած է հայկական կամ թրքական նախապաշարուածներէ գուրկ, Օսմանեան Կայսրութեան դաշնակից Աւստրիոյ եւ Գերմանիոյ արխիւներ (20 տարուան մէջ 18 անգամ գտնուած է Պոնն): Եւ այդ արխիւներուն մէջ յայտնաբերած է բոլոր փաստերը կանխամտածման, ցեղասպանական մտադրութեան, կազմակերպումին, գործադրութեան՝ այրելով, խեղդելով, մորթելով, խոշտանգելով: «Որքան ալ բծախնդիր ըլլան փճացնողները, որոշ փաստաթուղթեր կ'ազատին», կ'ըսէ ան: Փաստաթուղթեր՝ ռազմական ատեաններու արձանագրութիւններէ, խորհրդարանային վիճաբանութիւններէ, հարցաքննիչ մարմիններէ, վաւերացուած պատճէններէ, գերմանացի դեսպաններու գեկոյցներէ, Գերմանիոյ եւ Աւստրիոյ արխիւներէն: «Հաւաքած եմ այնքան նիւթ, որ կրնամ տաս-տասհիգ հատոր հրատարակել», կը շեշտէ:

Ըստ փրոֆեսորին, ցեղասպանութիւնը ձեւ մըն է ընկերային համակարգ մը վերակառուցելու՝ կազմակերպուած ցեղային գտումի ընդմէջէն՝ բազմատարր ընկերութիւն մը վայրագ կերպով կը վերածուի քիչ թէ շատ միատարր ընկերութեան մը: «Հայոց Ցեղասպանութեան ամենէն յատկանշական երեւոյթը ոճիրներու մնայուն անպատժելիութիւնն է: Նախ՝ 1894-96 Ապտուլ Համիտի ջարդերը, երկրորդ՝ 1909-ի Ատանայի ջարդերը եւ ի վերջոյ՝ 1915 Հայոց Ցեղասպանութիւնը: Եթէ պատժուած ըլլային ասոնք, հաւանականութիւն կար որ հրէական Ողջակիցումը մտածուած չըլլար Բ. Համաշխարհային Պատերազմի Նացիներէն»:

Վերջին տարիներու հարցազրույցներէ կը քաղեմ Վահագն Տատրեանի կարծիքը որոշ հարցերու շուրջ.

Հ. Ի՞նչ ընդհանրութիւն կայ Հրէական Ողջակիցումի եւ Հայոց Ցեղասպանութեան միջեւ: Պ. Ընդհանուր շատ բան կայ, բայց տարբերութիւններ ալ կան: Գլխաւորը այն է, որ մեր ժողովուրդը ոչնչացուեցաւ իր պատմա-

# ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՐԵՐ - ՄԻՆՉԵՒ 100-ԱՄԵԱԿ ԵՒ ԱՆԿԵ ԱՆԴԻՆ

## ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒՆԵԱՆ

Եթէ պատմական արագ ակնարկ մը նետենք Յեղասպանութեան յաջորդող հարիւրամեակի ընթացքին Հայ Դատի պահանջատիրութեան պատմութեան վրայ, պիտի տեսնենք որ իւրաքանչիւր ժամանակաշրջան իր տրամաբանական զարգացումները դրոշմած է գաղութահայ կեանքին վրայ, կամ այսպէս կոչուած՝ սփիւռքի կազմաւորման խճանկարին մէջ:

Ըսեմ որ այս յօդուածով փորձ մը պիտի ընեմ միայն սփիւռքի մէջ զարգացող երեւոյթներուն վրայ: Արեւելեան Հայաստանի, այսինքն ներկայ Հայաստանի պետութեան սահմաններուն մէջ պարփակուող երկրին զարգացումները դուրս կը մնան այս յօդուածի ծիրէն, գոնէ մինչեւ Յիւնամեակ:

1915-1918-ի սեւ տարիները բնորոշուած են ջարդերով, մեր ժողովուրդին համար դժոխային ապրումներով, ուր Հրեաներու ոչ Եհովա Աստուածը ոչ ալ իր Որդին չուզեցին միջամտել, քանի որ իրենք ալ հաւանաբար կը վախնային թուրքէն ... : Առայժմ չիօսինք այդ մութ օրերուն մասին: Ծառ՝ բայց անբաւարար կերպով գրուած է այդ երկրային անաւոր դժոխքին մասին:

1918 - 1930-ական թուականները կը բնորոշուին որբահաւաքներով, որբանոցներու խնամքով, հայութեան մնացորդաց խլեակներու վերապրումի վտիտ ճիգերով, սփիւռքահայ համայնքներու կազմութեան սաղմային վիճակով: Այո՛, Եւրոպական եւ Ամերիկեան բարեփոխական ընկերութիւններու օժանդակութիւնը մեծ եղաւ այդ օրերուն, որոնք համար մենք միայն անասման շնորհակալական եւ երախտագիտական ջերմ զգացումներ ունինք իւրաքանչիւր բարեփոխական ընկերութեան եւ անոնց անձնագործ ծառայողներուն հանդէպ: Ազգ մը ամբողջ բնաջնջուած էր, արմատախիլ եղած էր իր հազարամեայ հայրենիքէն: Հիմա խլխլած քանի մը տասնեակ հազար որբեր տարտղնուած էին հոս հոն, Սուրիական անապատներուն մէջ թէ քաղաքներու անհիւրընկալ մայրութիւններուն վրայ: Եւ ուրեմն ազգային մարմիններու ուշադրութիւնը կեդրոնացած էր այդ որբերը փրկելու, քանի որ անոնք շատ լաւ գիտէին որ եթէ Հայը պիտի ապրէր, մեծաւ մասամբ այդ որբերով պիտի ապրէր: Այդ որբերը պիտի ըլլային մեր վաղուայ հայ մարդիկը եւ ժողովուրդը պիտի փորձէր գոյատեւել:

Այս ուղղութեամբ որբանոցներու հաստատումը Յունաստանի, Լիբանանի, Սուրիոյ, Յորդանանի եւ այլուր, փրկութեան «Նոյեան Տապան»ներէ էին մեր ազգին: Այս որբանոցներու ամենանշանաւորը եւ վստահաբար ամենակարեւորը «Ազգիս վրէժը լուծելու համար» հիմնուած Աղա Գրիգոր եւ Աղա Կարապետ Մելգոնեան եղբայրներու Կիպրոսի մէջ հաստատած որբանոցն էր որ մկրտուեցաւ «Մելգոնեան Կրթական Հաստատութիւն» անունով: Սկզբնական շրջանի հարիւրաւոր որբերուն ֆիզիքական անունդի կողքին ջամբուեցաւ մանաւանդ ազգային դաստիարակութիւն եւ բարձր ուսում, եւ որմէ ետք ՄԿ Հաստատութեան շրջանաւարտները, մանաւանդ Միջին Արեւելքի հայկական գաղութներուն մէջ, կատարեցին նախախնամական

առաքելութիւն՝ հայկական դպրոցներուն մէջ մնացորդացին մէկ կարեւոր մասին միտքերը լուսաւորելու եւ հայկական մաքուր նկարագրով կերտելու անոնց քայքայուած հոգիները:

«Մեծ Եղեռն»ի, Ապրիլ 24-ի հանդէսները բնականաբար կը վերածուէին սուգի, ողբի, լաց ու կոծի երեկոյթներու: Եւ իրաւամբ: Խլեակները, իւրաքանչիւր վերապրող հայ, ամբողջ ընտանիք մը ունէր ջարդուած, խողխողուած, սպանուած: Ծատեր ականատես եղեր էին իրենց հարազատներուն դաժանագին սպանութիւններուն: Ապրիլ 24-ները կը վերանորոգէին անոնց մորմոքը, վիշտը: Սարսափազդու տեսարանները կը տողանցէին վերապրողներու յիշողութեան սեւ պատուանդներուն վրայ:

1930 - 950-ական տասնամեակներուն, հայկական կազմակերպութիւններուն (եկեղեցի, կուսակցութիւններ, բարեփոխական միութիւններ, եւ այլն) գլխաւոր առաքելութիւնը եղաւ դպրոցաշինութիւնն ու եկեղեցաշինութիւնը, ահումբներու եւ մշակութային միութիւններու միջոցաւ հայկական մշակոյթի վերազարթնեցումը: Չեմ խօսիր անձնական, անհատական ձեռնարկութիւններու մասին (տուն, խանութ, գործատեղի, եւ այլն): Վահան Թէքէեանի բառերով՝ «Հացի, ջուրի, օդի նման, մենք պէտք ունինք Հպարտութեան»: Վերապրելու համար, անհրաժեշտ էր «հպարտութիւն»ը, եւ այդ հպարտութիւնը պիտի գար մեր մշակութային արժէքներուն, հին թէ նոր, հոգ չէ թէ քիչ մը շափազանցուած, նոր սերունդին, որբերու սերունդին փոխանցումը: Ապրիլեան Յուշահանդէսները շարունակեցին սզահանդէսներ ըլլալ, բայց կամաց կամաց հպարտութիւնը սկսաւ իր դրական ազդեցութիւնը գործել եւ յոյսը տալ վաղուայ բացուելիք «լուսաշող արշալոյսներուն»:

Վաթսուռական թուականներուն արդէն որբերը ոչ միայն ընտանիք կազմած էին, այլ անոնց զաւակները բարելուած էին իրենց նիւթա-բարոյական վիճակը հիւրընկալ երկիրներուն մէջ: Անոնք, որբերն ու անոնց զաւակները, նոյնպէս հոգեբանականօրէն պատրաստ էին իրենց ահաւոր կորուստները սզալով հարդերձ, մտածելու կորուսած հոգեբանական վերատիրանալու մասին երազել:

1964-ին, Ռամկավար Ազատական Կուսակցութեան օրկան, «Զարթօնք» օրաթերթի ազգայնասէր, իմաստուն եւ յախուռն խմբագրապետ Գերսամ Ահարոնեանի «Մեծ Երազի ձամբուն վրայ» յօդուածաշարքը յեղաշրջում յառաջացուց սփիւռքահայութեան ազգային հոգեբանութեան մէջ: «Հայ Դատ»ի հետապնդումը սկսաւ տակաւ տեղ գտնել մանաւանդ երիտասարդներու մտահոգեբանութեան մէջ: Վաթսուռական թուականներուն սկսած էր արդէն, մանաւանդ երիտասարդութեան, բայց գլխաւորաբար հայ համալսարաններուն միջեւ, միջ-կուսակցական գործակցութիւնը Ապրիլեան Յուշահանդէսներու առիթով: ՌԱԿ Փորթոլ գալեանցիներու, ՍԴՀԿ Տիրուհիի, ՀՅԴ-Ջաւարեանականներու, ՀԲԼՄ-ձեՆԻ-ի, ՀԵՀՈՄ-ի եւ այլոց համատեղ գործակցութիւնը աւելի քան գովելի էր:

1965-ի Յիւնամեակի առիթով

կազմակերպուած միջոցառումները գարթօնք մը ստեղծեցին ամէն կողմ որ ոչ միայն գաղութները, այլ եւ Հայաստան - Սփիւռք եւ տարբեր սերունդները գիրար կամրջեցին, անբակտելի շղթաներով միացուցին գիրար: Եւ արդէն թուրքը սկսաւ դողալ: Իրապէ՛ս դողալ: 1965-ին, առաջին անգամ ըլլալով թուրքիոյ Ազգային Անվտանգութեան Խորհուրդը յատուկ նիստ գումարեց «Հայկական հարցը ուսումնասիրելու եւ քայլեր առնելու» ստեղծուած հայկական այս մեծ գարթօնքին եւ հողային պահանջատիրութեան դէմ:

Յիւնամեակի առիթով Հայաստանի մէջ, Ծիծեռնակաբերդի կատարին բարձրացած Եղեռնի Յուշարձանով, Հայաստանը պաշտօնապէս կը յայտարարէր որ Յեղասպանութեան տէր կը կանգնէր ինք, եւ թէ յարմար առիթին պիտի սպասէր «մեր հողերը, մեր հողերը» պահանջելու: Սփիւռքի գանազան գաղութներու մէջ ալ սկսան Յեղասպանութեան, Մեծ Եղեռնի յուշարձաններ բարձրանալ, իւրաքանչիւր թուրքին կուրծքին խրելով Հայ պահանջատէր երիտասարդութեան թէ մեծերուն վրէժի դաշուններուն հետ Մեր Հողերուն, Արեւմտեան Հայաստանի գրաւուած արիւնաթաթախ հողերուն պահանջքը:

1958-ի տիտուր դէպքերէն անմիջապէս ետք, տարբեր կուսկցութիւններու երիտասարդութեան իրար հանդուրժողականութիւնն ու մանաւանդ Ապրիլ 24-երու առիթով գործակցութիւնը դրական շատ մեծ երեւոյթ մըն էր հայ կեանքին ներս: Գերսամ Ահարոնեանի «Հայ Դատ»ի հանդէպ սկսած քարոզչութիւնը իր տեղը հասած էր եւ փոխած մտայնութիւնները: Ապրիլ 24-ի Յուշահանդէսները սզահանդէսներ ըլլալէ դադարեցան եւ վերածուեցան բռնցքաւորուած «Հայ Դատ»ի ճանաչման պայքարներու, պահանջատիրութեան: «Գալ Տարի Վան» լոգոնգը սկսաւ լսուիլ քիչ մը ամէն տեղ:

1970-ի Ապրիլ ամսուան ընթացքին, Պէյրութի Ամերիկեան Համալսարանի (A.U.B.) Թուրք Ուսանողական Միութիւնը, համագործակցութեամբ Թրքական Դեսպանատան, ծրագրած էր «Թրքական Շաբաթ» մը կազմակերպել համալսարանին մէջ, ուր տեղի պիտի ունենային թուրքիան ներկայացնող լուսանկարներու ցուցահանդէս, երաժշտական (դաշնակ) երեկոյ՝ թուրք նշանաւոր դաշնակահարի մը կողմէ, թրքական «մշակոյթ»ի եւ Միջին Արեւելքի քաղաքականութեան մասին երկու դասախօսութիւններ՝ հրամցուած թուրքիոյ Խորհրդարանի երկու Ծերակուտականներու կողմէ եւ մեծ ճաշկերոյթ մը, որուն հրաւիրուած էին Լիբանանի Պետական Աւագանին, դեսպաններ, թղթակիցներ, համալսարանի դասախօսներ ինչպէս նաեւ Լիբանանցի եւ թուրք մեծամեծներ եւ այլ հիւրեր: Առանց մանրամասնութիւններու մէջ մտնելու, ըսեմ որ ՌԱԿ-ի, ՍԴՀԿ-ի ՀՅԴ-ի, ՀԵԼ-ի եւ ՀԵՀՈՄ-ի համալսարանական տղոց (բայց գլխաւորաբար կուսակցական տղոց) առաջնորդութեամբ այդ «Թրքական Շաբաթ»ը ձախողեցուցինք, նոյնիսկ Համալսարանին վտարուելու գնով: (Այս մասին ապագային մանրամասնօրէն պիտի անդրադառնամ:)

1970-ական եւ 1980-ական թուականներուն, «Հայ Դատ»ի կրա-

կը այնքան զօրաւոր էր որ ծնունդ առին ԱՍԱԼԱ-ի (Հայաստանի Ազատագրական Հայ Գաղտնի Բանակ) եւ Արդարութեան Գոմանտոներ խմբակները, բունի ուժով մեր դատը օտարներուն ծանօթացնելու համար: Չմոռնանք Գուրգէն Եանիգեանի հերոսական արարքը «տարբեր միջոցներով» արդարութեան հասնելու:

Նոյն այս տասնամեակներուն «Յեղասպանութիւն»ը պետական մակարդակով ճանաչողութեան հասցնելու գործունէութիւնները սկսան «Արմինիըն Էսամպլի»ի, ANC-ի, ՌԱԿ-ի կեանքի կոչած «Հայ Դատի Խորհուրդ»ներու եւ այլ միջոցներով: Յեղասպանութեան ճանաչումը հիմնական կիզակէտներէն մին եղաւ հայ քաղաքական միտքին համար: Ապրիլ 24-երու ձեռնարկներուն, ըլլան անոնք սրահներու մէջ թէ Ապրիլեան Յուշարձաններու շուրջ, կարծէք թուրքացի մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու սպանողը եւ սկսանք «Հայ Դատ»ին ետեւէն վազել: 1990-ական թուականներուն, Հայաստանի Անկախութեան եւ Արցախի հիմնախնդիրները սկսան հրմշտկել մեր մէկ ու կէս միլիոն գոհերու յիշատակը, եւ Արցախեան պահանջատիրութեան հռետորաշունչ բանախօսութիւններ սկսանք լսել: Տարուան 364 օրերը չէին բաւէր կարծէք, անպայման Ապրիլ 24-ին պէտք էր Նահատակներու յարգանքի օրուան ձեռնարկները տրամադրուէին Արցախին:

80-ական եւ 90-ական թուականներուն Լոս Անճելըսի Ապրիլ 24-ի Յուշահանդէսները, կազմակերպուած քաղաքական երեք կուսակցութիւններու եւ այլ բազմաթիւ «կազմակերպութիւններու», ընդհանրապէս տեղի կ'ունենային Մոնթէպէլլոյի Եղեռնի Յուշարձանին շուրջ կամ Կլէնտէյլի «Կլոր Եկեղեցի»ին մէջ: Մոնթէպէլլոյի Յուշարձանին շուրջ հազիւ 2,000 - 2,500 հայեր իրենց ներկայութեամբ կը փորձէին Հոգեհանգստեան Արարողութեամբ եւ հռետորաշունչ ճառերով յարգել յիշատակը մեր նահատակներուն: 2500 հոգի ըսի քանի որ կազմակերպիչ յանձնախումբերուն մէջն ըլլալով, գիտէի որ հաստատուած վրանին տակ 750 - 800 անհոգներ կը գետեղուէին, նոյնքան մըն ալ շուրջը ոտքի կեցած, քանի մը հոգի ալ մօտակայ ճաշարանին մէջ ... : 2500-ը մեծ թիւ էր, շատ ըսի արդեօք ... :

Նոյն շրջանին, Լոս Անճելըսի մէջ, սկզբնական դեկաւարութեամբ Հոլիվուտի Սք. Յովհաննէս Կարապետ եկեղեցուց քաջ հովիւ Տէր Մանուկ Աւագ Քահանայ Մարգարեանի եւ եկեղեցուց Երիտասարդական Յանձնախումբի տղոց, Հոլիվուտի մէջ սկսան Ապրիլեան Երիտասարդական Քայլարշաւները, ուր 30,000 - 40,000 երիտասարդներ ցոյցի կ'ելլէին արդարութիւն եւ մեր հողերը պահանջելով: (2000 - 2500 տարեցներու դէմ՝ 40,000 երիտասարդներ, տակաւին «մեծերը» խօսելի՞ք ունին երիտասարդներուն մասին...):

Երիտասարդներու կազմակերպած այս ցոյցերուն համար հսկայական գումարներու պէտք կ'ըլլար: Այս տարուայ (2016) մասնաւոր թէլէթօսին, Լոս Անճելըսի ամբողջ գաղութէն հազիւ 150,000

### ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՐԵՐ

#### Շարունակուած էջ 11-էն

տողար կարելի եղաւ հանգանակել...: Եւ կ'ակնկալենք որ երիտասարդները առաջորդեն մեզ, առանց որ մենք պատրաստ ըլլանք քանի մը տողար նուիրելու այս սքանչելի տղոց նուիրեալ աշխատանքին: Ամօթ չէ՞:

Այդ վազքը շարունակուեցաւ մինչեւ 2015 թուականը, Յեղասպանութեան 100 ամեակի տարին: 2015 Ապրիլ 24-ին, 165,000 հայորդիներ, Լոս Անճելըսի մէջ անգամ մը եւս հաստատեցին որ մեր Դատը անժամանցելի է: Զգալի էր մեր երիտասարդներու խուռներամ մասնակցութիւնն ու կարգապահութեան հսկողութիւնը (ապրի'ք սոլաք): Բնականաբար աշխարհի տարբեր երկիրներու մէջ ալ մեծածաւալ ցուցեր տեղի ունեցան մեր Դատին անժամանցելութիւնն ու մեր պանշատիրութիւնը հաստատող:

Հայաստանի մէջ անշուշտ տեղի ունեցած Եկեղեցական արարողութիւնները, 1,500,000 նահատակներու Սրբագործումը, Պետական մակարդակով եւ օտար երկիրներու Նախագահներու, նախարարներու եւ բարձրաստիճան ներկայացուցիչներու մասնակցութեամբ Յուշահանդէսներն ու միջոցառումները աննախընթաց էին:

Հիմա, Հարիւրամեակէն ետք պիտի շարունակենք օտար պետութիւններու դռները թափ տալու եւ «Յեղասպանութեան ճանաչում»ը պահանջելու: Ի՞նչ պիտի շահինք, կամ ի՞նչ կրնանք շահիլ եթէ ամբողջ Ափրիկէն, Կեդրոնական Ամերիկան, Հարաւային Ամերիկան եւ Ասիական բազմաթիւ երկիրներ «ճանչնան» Յեղասպանութիւնը: «Թուղթէ Երեւիներ» պարզապէս: Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահներէն ոմանք քանի մը անգամ «Յեղասպանութիւն» բառը գործածեցին, բայց չետոյ՞: Եթէ եւ երբ Միացեալ Նահանգները, Ռուսիան, Իսրայէլը, Անգլիան, Ֆրանսան եւ Գերմանիան համաձայն ըլլան որ թուրքիան պէտք է «ճանչնայ» Յեղասպանութիւնը եւ հատուցում կատարէ, նիւթական եւ հողային, այն ատեն մեր դատը կը լուծուի, պայմանաւ որ նաեւ Քիւրտերը յօժարին հող զիջիլ...

Հարիւրամեակէն ետք մեզի կը մնայ պատմական, իրաւական եւ իրաւաբանական բոլոր թուղթերը պատրաստել եւ պատրաստ ըլլալ «երկաթէ շերեփ»ով ներկայանալու Միջազգային Ատեանները: Մեր պահանջները պէտք է ըլլան «իրատես»: Ծովէ ծով Հայաստանը անիրականանալի է: Մենք պէտք է վազենք կարելիին ետեւէն: Եթէ կարենանք մեր «վերստացած» հողերը լեցնել եւ հասնիլ տեղ մը ուր կրնանք աւելին պահանջել, եւ եթէ դիւանագիտական եւ զինուորական ուժը ունինք գայն պահանջելու եւ ուժով տիրանալու, լաւ: Զմոռնանք որ Օսմանեան Կայսրութիւնը տակաւին բոլորովին չէ քայքայուած: Տակաւին Քիւրտերը պիտի տիրանան իրենց անկախութեան, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ փոքրամասնութիւններ պիտի տիրանան իրենց իրաւունքներուն: Յուսամ մենք քնացած չենք ըլլար մեր իրաւունքները պահանջելու եւ անոնց տիրանալու:

Մինչ այդ, անհրաժեշտ է որ նոր սերունդին միտքն ու հոգին լեցնենք Ազգային Հպարտութեամբ: Սկսինք մեր սքանչելի, դիւցազնական ինքնապաշտպանութեան մարտերով: Նոր սերունդը շատ քիչ բան գիտէ մեր ողբերգութեան մասին:

Գիտեն որ ջարդուած ենք, չարչարուած ենք, հող եւ հարստութիւն կորսնցուցած ենք, սակայն այդ ցաւը իրենք չեն ապրած: Անհրաժեշտ է որ լաւ գիտնան մեր ազգին գողգոթան, եթէ չզգան ալ, հասկնան գոնէ: Հպարտանան մեր անմահ ֆէտայիներու գործած

անհաւատալի հերոսութիւններով ինքնապաշտպանութեան կուրներու ժամանակ: Վրէժը Սուրբ է մեզի համար: Պատիժը եւ Վրէժը Աստուծոյ պէտք է չ'ձգենք: Տեսանք ինչ եղաւ 1915 □ 1918 թուականներուն: Ու՞ր էր Հայոց Աստուածը, եթէ հայերը Աստուած ունէին: Իսկ անկէ ետք, 100 տարիներու ընթացքին թուրքիան եւ թուրքերը ի՞նչ եղան: Պատժուեցա՞ն թէ վարձատրուեցան «Քրիստոնեայ» պետութիւններու կողմէ: Ու՞ր էր Աստուածային



վրէժը ...:

Նոր սերունդին պէտք է փոխանցենք Եղբրական պատմութիւնը մեր Նահատակութեան, Դիւցազնական պատմութիւնը մեր Հերոսա-

կորուստի արեան կանչն է եռում՝  
հայր, մայր, քոյր եւ եղբայր են  
տուել, հարազատ են տուել, նրանք  
պատմութիւնից վրէժ ունեն լու-  
ծելիք: Հայ իշխաւորներ մի կաս-  
կածէք մեր միասնականութեան  
ուժի վրայ, ժամանակը մերն է,  
պէտք է թշնամուն մի մեծ ջարդ  
տալ, որ այլեւս չյանդգնի սահ-  
մանները գնդակոծել եւ մեր սրտե-  
րից նշխարներ պոկել:

Հայ ժողովուրդը կուռ չի  
ուզում, խաղաղասէր է, իր ցան-  
կութիւնն ու նպատակն է խաղա-  
ղութեամբ լուծուեն մեր հարցերը  
մեր պահանջները՝ Մէկ ու կէս  
Միլիոնից աւելի կոտորածների  
արեան եւ թալանուած ունեցուած-  
քի հատուցումը ու բռնագրաւ-  
ուած հողերի վերադարձն ենք  
պահանջում, սա է մեր ժողովրդի  
արդար պահանջը, Յեղասպանու-  
թեան ընդունում եւ հատուցում:

Ոչ մի ուժ, սուր կամ հուր չի  
կարող ետ կանգնեցնել մեզ այս  
արդար պահանջից:

Ինչպէս 101 Ապրիլներ են  
եկել ու անցել, ամէն անգամ մի  
նոր իրական հնարքով մեր պայ-  
քարի շարքերը խտացրել, այսու-  
հետեւ էլ նոյնն է լինելու մինչեւ  
հայ ժողովրդի արդար պահանջ-  
ների ձեռք բերումը:


## ԹՈՒՐԸ ԶԻ ՓՈՆՈՒԻՐ

### Շարունակուած էջ 17-էն

լի ու զարհուրելի տեսարաններն  
ու պատկերներն: Թուրքիայի դես-  
պանութիւնը Բեռլինում, իմա-  
նալով Արմին Վեկները կազմա-  
կերպելիք դասախօսութեան մա-  
սին, հրահանգում է թուրք երի-  
տասարդներին խանգարելու այդ  
դասախօսութիւնը: Այդ երիտա-  
սարդներին եւ նրանց գերման  
բարեկամներին յաջողում է ձեռք  
բերել մօտ 100 մուտքի տոմս:

«Մայրից ծայր լցուած թատ-  
րոնում հնչում են Արմին Վեկնե-  
րի առաջին նախադասութիւննե-  
րը, որոնցմով նա հաւաստիաց-  
նում է ունկնդիրներին, թէ ինքը  
պատմելու է միայն այն, ինչ որ  
տեսել է, տեսածն էլ վաւերացնե-  
լու է ցուցադրուող լուսանկարնե-  
րով, որ ինք անձամբ է նկարահա-  
նել: Այս նախաբանից յետոյ, նա  
մոզական լապտերով ցուցադրում  
է սուլթանական Թուրքիայի աշ-  
խարհագրական քարտէսը, որի  
վրայ ընդգծուած էին այն վայրե-  
րը, որտեղից արտաքսել էին հայ  
բնակիչներին, ճանապարհին աշ-  
խատուականներին կոտորելով, իսկ  
մնացածին տարագրել Միջագետ-  
քի անապատները ի սով եւ ի  
մահ...: Իրար ետեւից լուսապաս-  
տառի վրայ ցուցադրուած էին  
եղեռնի զարհուրելի տեսարաննե-  
րը, բազմաթիւ նկարներ՝ մէկը  
միւսից քստմենելի, մահասարսուռ...»

«Ահուելի աղմուկ բարձրա-  
ցաւ թատրոնում. թուրքերն ու  
թուրքասէրները հայհոյում էին  
ու վարկաբեկում Ա. Վեկներին՝  
ստախօս անուանելով, հայերի կող-  
մից կաշառուած, գերման-թուրք-  
բական բարեկամութեան թշնամի  
ու դաւաճան: Հայերն ու մնացած  
գերմանացիներն աշխատում էին  
հակադրուել նրանց ու պաշտպան  
կանգնել հումանիստ քաղաքա-  
ցուն եւ տաղանդաւոր գրողին...:  
Կրքերը խիստ բորբոքուել էին,  
հայհոյանքը վերջ չունէր, աղմ-



Արմին Թեոֆիլ Վեկներ (1976)

կարարները չէին հանգստանում...:  
Մանաւանդ ակտիւ էր իր ճիշ ու  
զարդակներով պրոֆ. Եոզէֆ Մարկ-  
վարդի օթեակում բազմած մի  
թուրք երիտասարդ, որն անընդ-  
հատ հայհոյում էր թէ՛ Արմին  
Վեկներին եւ թէ՛ «գոհհիկ» ու  
«դաւաճան» հայերին, իսկ ցու-  
ցադրուած նկարները համարում  
էր հայերի կողմից կոտորուած  
թուրք խաղաղ բնակչութեան դի-  
ակներ, կախաղան եւ այլն:

«Մէկ էլ թատրոնում լսուեց  
աշխարհահռչակ արեւելագէտ,  
հայկաբան փրոֆ. Ե. Մարկվարդի  
սաստող ձայնը՝ «Wirst du  
schweigen, Schweinlud - վերջա-  
պէս կը լռե՛ս, շու՛ն, սրիկայ»: Այս  
խօսքերին հետեւեց մի շունդալից  
ապտակ: Ապտակողը փրոֆ. Ե.  
Մարքվարթն էր:

«Այս ապտակը, ասես, մի  
ազդանշան էր. թատրոնում սկսուեց  
մի կատարելալ տուր ու դմբոց...:  
Վրայ հասաւ ոստիկանութիւնը  
կարգ հաստատելու:

«Շտապեցի յուզուած փրո-

ֆեսորիս օթեակը: Մի երկու րոպէ  
անց, թուրք երիտասարդի ուղեկ-  
ցութեամբ, օթեակը մտաւ ոստի-  
կանական լէյզենանդը.

«- Ես թուրք դեսպան... փա-  
շային որդի եմ, ձեռքակալեցէ՛ք  
այս գոհհիկ հային,- ասաց երի-  
տասարդ թուրքը, ակնարկելով  
փրոֆեսորին:

«- Ես Պեռլինի համալսարա-  
նի օրտինար փրոֆ. Ե. Մարկ-  
վարդն եմ. կալանաւորեցէ՛ք այս  
Verbrecher-ին (յանցագործ):»

«- Հետեւեցէ՛ք ինձ, պարոն,-  
հրամայեց լէյզենանդը թուրք երի-  
տասարդին:

«Հասարակութեան պահան-  
ջով, խանգարիչները վտարուե-  
ցին թատրոնից եւ դասախօսու-  
թիւնը շարունակուեց:

«Հետեւեալ օրը հաշուետու-  
թիւններ լոյս տեսան օրաթերթե-  
րում այդ ուշագրաւ դասախօսու-  
թեան մասին: «Այժմ հասկանալի  
է, թէ ի՞նչ սոսկալի պայմաննե-  
րում էին ապրում հայերը Թուրք-  
իայում, երբ անգամ Պեռլինում  
թուրքերը անբեկում են նրանց», -  
գրում էր թղթակիցներից մէկը:»

Որպէսզի ճշմարտութիւններ,  
յատկապէս Հայոց Յեղասպանու-  
թեան հետ առնչութիւն ունեցող  
նիւթեր թէ՛ Թուրքիոյ մէջ եւ թէ՛  
այլուր հասարակութեան կողմէ  
չիմացուին, թուրք դեկավարու-  
թիւնը միշտ դիմած է սաղրանք-  
ներու, դաւերու:

Պեռլինի վերոյիշեալ դէպ-  
քէն շուրջ 100 տարի յետոյ, երբ  
Հրանդ Տինք, Կ. Պոլիս հրատարա-  
կուող իր երկլեզու՝ հայերէն եւ  
թրքերէն, «Ակօս» շաբաթաթեր-  
թի 6 փետրուար 2004 թիւին մէջ  
կը գրէ, թէ Մուսթաֆա Քէմալի  
1925-ին որդեգրած ու 1938-ին  
Տէրսիմը ռմբակոծող օղաչունե-  
րէն Սապիհա Կէօքչէն թրքուհի մը  
չէր, այլ՝ ծնողքը քստորուած հա-  
յուհի մը՝ Խաթուն Սեպիլճեան,  
թրքական մեքենան կը սկսի գինք  
լուցնելու աշխատանքին: 19 Յուն-  
ուար 2007-ին Հրանդ Տինք կը  
գնդակահարուի իր խմբագրա-

տան առջեւ:

Թանէր Աքչամ, Միացեալ Նա-  
հանգներու Մասաչուսէթս (Mas-  
sachusetts) նահանգի Ուսթըր  
(Worcester) քաղաքի Clark Հա-  
մալսարանի պատմութեան դա-  
սախօս, համալսարանի ցեղասպա-  
նութեան բաժնի վարիչ եւ Հայոց  
Յեղասպանութիւնը ընդունած  
առաջին թուրք մտաւորականը,  
Գանատայի Մոնթրէալ (Montreal)  
քաղաքի McGill եւ Concordia Հա-  
մալսարաններէն ցեղասպանութեան  
հարցով դասախօսելու հրաւէր կը  
ստանայ: Երբ Աքչամ 16 փետր-  
ուար 2007-ին Մոնթրէալի օղա-  
կայանը կը հասնի, պաշտօնեաներ  
գինք չորս ժամ կ'արգելափակեն  
: Բանից դուրս կ'ելլէ, թէ իր  
մասին լրատուութիւն եղած է  
որպէս «ահաբեկիչ»: Կառավա-  
րական բարձր անձերէ եկած հրա-  
հանգով, Թանէր Աքչամ կը կարո-  
ղանայ դասախօսութեան հասնիլ:

29 Մարտ 2016 թուականին  
Թուրքիոյ նախագահը ԱՄՆ-ի մայ-  
րաքաղաքը ժողովի կ'երթայ: Պա-  
տահամբ կ'իջեւանի Յեղասպա-  
նութենէն ազատած, սակայն իր  
ընտանիքի 15 անդամները Յե-  
ղասպանութեան օրերուն զոհուած,  
1921-ին ԱՄՆ գաղթած, կառուց-  
ուած զանազան շէնքերու եւ պան-  
դոկներու անուանի ճարտարապե-  
տը Միհրան Մեսրոպեանի կառու-  
ցած մէկ պանդոկը: Շէնքին առ-  
ջեւ, անոր գործած անօրէնու-  
թիւններուն համար «գող», «ոճ-  
րագործ» բացազանչող ցուցա-  
րարներու ձայնը որպէսզի լսելի  
չըլլայ, դիւանագիտական անցա-  
գիտով իր հետը տարած թիկնա-  
պահները կը պոռան, կ'աղմկեն:

1919-2016: 100 տարի: Թրքա-  
կան ճակտին վրայ ո՛չ մէկ փոփո-  
խութիւն:

«Շալվար»-ի կամ «հնդա-  
րի»-ի տեղ՝ տաբատ եւ շապիկ ու  
փողկապ, փոխան ֆէսի՝ գլխարկ,  
տրեխի ալ՝ կօշիկ, քաղաքակրթ-  
ուածութեան չափանիշներ նկա-  
տել կարելի չէ:

Թուրքը՝ չի փոխուիր:

### ՀԱՅՈՒՆ «ՊԱՏԵՐԱԶՍԸ»...

#### ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԶԷՊԷՃԵԱՆ

«Հապա եթէ գան եւ մեզ ջարդե՞ն...»:

Նիկոսիա, Կիպրոս: Աշխատանքային գրասենեակիս կից՝ ակնոցի վաճառականութեամբ զբաղող դրացիս է: Միջին տարիքի Յոյն Կիպրացի տիկին մը: Ապրած է Կիպրոսի տազնապարտ, վաթսուներեակա 1974ին, երբ իր տունէն տեղահանուած է եւ դարձած ենք իր երկրին մէջ զաղթական: Եթէ գիտէ որ ես հայ եմ, բայց նաեւ լսած եւ կարդացած է մեր պատմութիւնը...: Եւ ցեղասպանութեան ահաբեկութիւնը եւ ապրուած վախը...: Եւ կը զգայ վախը, քանի ինք ալ ապրած է այդ նոյնը...:

Եւ չուշացաւ իր մէջ, եւ մինչեւ այսօր սեղմած «վախը» դուրս հանելու...: «Չեմ գիտեր ինչպէս» պիտի ապրինք թուրքին հետ: Հապա եթէ գան եւ մեզ ջարդե՞ն...»:

Եթէ մէկ կողմէ կան հաշտութեան մեկնարկներ կղզիին վերամիանալու առնչութեամբ, բայց մտահոգութիւնը եւ վախը նոյնքան առկա է...: Եւ դրացիս չի զլացաւ իր «վախը» բաժնեկցելու ինծի հետ...: Վերջապէս ապրուած փորձառութիւն էր որ ստեղծած էր այդ վախը...: Եւ այդ նոյն վախը չէր ուզէր դարձեալ ապրիլ...:

Բայց վախը խաբուսիկ երեւոյթ մը չէ...: Մարդկային զգացում մըն է որ կարելի չէ անտեսել...: Եւ ոչ ալ պէտք է առնչել գայն այսպէս ըսած «առնական» արժանապատուութեան, ուր «ամօթ է եւ պէտք չէ վախնալ»...: Վախը իրական է, ապրած ու տակաւին ապրուելիք իրականութիւն մըն է՝ մարդկային կեանքին եւ պատմութեան տարբեր հոլովոյթներուն մէջէն...: Վախը կը ստեղծէ կեանքը ընդհատելու եւ կամ ընդհատուելու դէմ-դիմաց կանգնած իրականութեամբ, որ դիւրին վիճակ մը չէ մարդ արարածին համար, ուր պարտի ընկալել կեանքը վերջացնելու իրականութեամբ...:

Եւ հայուն պատմութիւնն ալ գերծ չէ այս վախին ու անոր ստեղծած ահաւոր իրավիճակներու ապրած ու ապրուած կեանքի պատմութիւններով...: Եթէ մէկ կողմէ կայ ցեղասպանութեան պատմութիւնը եւ ցեղասպանուած հայուն վախը, տակաւին նոյնքան նաեւ վերապրողին...: Ներառելով նաեւ անոնց հոգեկան ներաշխարհի ապրած վախին ահաւորութիւնը...: Եւ նոյն այս վախի զգացումն է, որ իր տարբեր հոլովոյթներով եւ պարունակութեամբ կը շարունակէ տակաւին հալածել հայուն կեանքը...: Եթէ մէկ կողմէ վախին ֆիզիքական զգացումն է, բայց նաեւ հոգեկան-իմացական ու տակաւին ինքնութեան կանչին...: Ինքնութիւնը եւ անոր մշակութային գիտակցութիւնը պահելու վախը...:

Ապրիլ 2016...: Քանի մը շաբաթներէ ի վեր աշխատանքներուս բերումով կը շրջագայիմ Արաբական Մոցի տարածաշրջաններուն մէջ...: Դարաբաղեան ճակատին վրայ պատերազմին բռնկումը խանգարեց իմ աշխատանքային բոլոր տրամադրութիւնս եւ կեդրոնացումս...: Հայը դարձեալ կ'ապրի վախին ու անոր ստեղծած արհաւիրքի մթնոլորտին մէջ...: Հայկական կողմը կու տայ բաւական նահատակներ...: Մեր հայ տղաքն են, որոնք եթէ կուրիլ գիտեն, բայց

նաեւ Նահատակուիլ...: Եւ քանի այցելած եմ Դարաբաղը եւ տեսած եւ վայելած անոր գեղեցկութիւնը, կարելի չէ արիւնաքամ վիճակի վերածել գայն...: Դարաբաղի բնութիւնը արիւն չուզէր...: Ան կառչած է ապրելու:

Բահրէյնի եկեղեցիներէն մէկուն պաշտամունքին ներկայ եմ: Կղերականին քարոզի բնաբանը ընտրուած էր Աստուածաշունչի մէկ շատ ծանօթ հատուածէն...: «Միրէ քու ընկերդ քու անձիդ պէս, եւ սիրէ թշնամիդ»: Աստուածաշունչի պատգամին զօրութիւնը կը կայանայ հոն, որ ան, երբ իւրաքանչիւր անգամ որ կը կարդաս եւ կը լսես, կը «խօսի» քեզի մեկնելով քու ներկայի ապրած իրավիճակիդ մէջէն...: Անկախ որ նոյն հատուածը եւ համարն է որ կը կարդաս եւ կը լսես...: Ընկերա-հոգեբանական եւ ներաշխարհի իրավիճակը իր որոշիչ ազդեցութիւնը ունի պատգամին ընկալումին հետ...: Հատուածին փոխանցած պատգամը կը ընկալես, մեկնելով քու ապրած այդ օրուան ու ժամանակին փորձառութեանդ մէջէն...:

Եթէ իմ շատ լսած եւ կարդացած Աստուածաշունչի հատուածներէն մէկն էր, բայց այդ օրը Բահրէյնի մէջ նոյն այս համարը եկաւ աւելի «փոթորկելու» իմ արդէն իսկ տազնապարտ հոգին...: Միրէ թշնամիդ...: Ան որ վախի մթնոլորտ ստեղծեց հայուն պատմութեան եւ որ տակաւին կը շարունակէ...: Մինչեւ այսօր...: Դարաբաղի մէջ...: Ու դաձեալ Ապրիլ ամսուն մէջ...:

Բայց անհրաժեշտ էր որ վերլուծէի...: Աստուածաշունչի սիրոյ եւ սիրելու հասկացողութիւնը պէտք չէ վեր առնել սոսկ իր բառապաշարային բացատրութեամբ...: Կայ խորքային եւ ընկերային մեկնաբանութիւնը եւ բացատրութիւնը, բայց նաեւ ընկալումը, որ հատուածին կուտայ եթէ մէկ կողմէ Աստուածաբանական հիմք, բայց նաեւ ազգային-մշակութային կեանքի արժէչափ: Քրիստոսի խօսած «սէրը» սոսկ ենթակայական արժէչափերէն շատ աւելի կը կեդրոնանայ «տարբեր» մակարդակի իմ մա «Արժէքի» չափանիշերով կեանքեր ստեղծելու հեռանկարին վրայ եւ ուր Քրիստոսեան պարտի կերտել գայն...: Արժէչափեր, որոնք հեռու են աշխարհի «սակարկելի» չափանիշերէն եւ կը կառչին Քրիստոսի շնորհած «Արժէքին» գիտակցութեամբ եւ որուն «տարբեր» մակարդակը կը կայանայ հոն, որ կեանքեր կը կերտէ եւ ոչ թէ կը քանդէ...: Եւ «բարեկամը ու թշնամին սիրելը» պիտի հասկնալ այս տեսակի կեանքեր ապրելու պրիսմակէն, որ կը տքնին Արժէչափեր ստեղծել մարդկային պատմութեան հոլովոյթներուն համար, ուր «տարբեր» է իր դրական ներգործութիւնը ունի եւ ոչ ժխտական...:

Եւ հայը իր «վախի» եւ «սարսափի» այդ ահաւոր փորձառութիւնը կրցաւ վերածել այս «տարբեր» արժէչափի կեանքեր կերտելու իրականութեանը մէջ...: Հայը կրցաւ իր գրաւը դնել հոն, ուր իր ապրած «վախի» կեանքի փորձառութիւնը վերածեց ոչ թէ ատելութեան եւ քանդումի պատմութեան մը, այլ սիրելու եւ շինելու...:

Եւ հայուն պատմութիւնը այսօր նորէն կը կրկնուի...: Այս ան-

### ՀՈԳԵԶՐՈՅՑ ԱՊՐԻԼԵԱՆ ՄԵՐ ՍՐԲԱՑՈՒԱԾ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՀԵՏ

#### ՄԱՔՐՈՒՀԻ ԹԱԹՈՒԼԵԱՆ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

Միրելի նահատակներ հայոց աշխարհի, ձեր յիշատակը սուրբ եւ անմոռանալի, վաղ տարիքէն որպէս Սփիւռքի առաջին սերունդ, եղած է ոգեկոչումի օր, ու համակալ է հոգիս:

Ապրիլ 24-ը եղած է աղօթքի ու սուգի օր, մեր սերունդին համար, նախակրթարանէն մինչեւ այսօր: Ձեզի վիճակուած այդ գողգոթան, որպէս բացուած վէրք մեր հոգիներուն մէջ կը մնայ տակաւին:

Դիտելով արցունքոտ աչքերով ձեր սրբացուած խմբակարգը, կարծես, հոգիի թեւերով հետս կը խօսին մեր մտաւորականները, որոնք մեր գրականութեան աստղաբոյլն էին, բայց եղան ասուպներ, երկիրքի կապոյտը լուսաւորեցին իրենց տաղանդով ու գործերով:

Ահա՛, վարուժանը իր հացի երգով, Սիւրբանի իր տաղ հայերէն լեզուի հոյակապ բանաստեղծութեամբ, Ռուբէն Սեւակը իր ազնուական ու հայրենասէր ոգիով: Չորսրապը իր նորավէպերով, Երուխանը իր Ծովափի Աղջիկով:

Իսկ հանճարեղ Կոմիտասը, իր Աստուածաշնորհ երգերով: Կը խօսին հետս, Եփրատի ջուրերուն մէջ, ձեռք ձեռքի տուած, պատուախնդիր հայուհիները, խեղդուած իրենց երազներով լեցուած գեղեցիկ աչքերով:

Կը խօսին իւրաքանչիւրը, քաղաքակիրթ աշխարհին ունեցած անտարբերութեան եւ թուրքին վանտալութեան մասին: Իսկ, ամենա-

զամ Դարաբաղի մէջ: Վախի ու սարսափի եւ անոր հետ նահատակութեան մթնոլորտն է դարձեալ...: Եւ եթէ հայը կը կուրի, ոչ թէ որովհետեւ կ'ուզէ ատել եւ քանդել, բայց որովհետեւ կ'ուզէ շարունակել սիրել եւ շինել...: Միրել իր Ազգային-Քրիստոնէական կեանքը, որ շինած էր ցեղասպանութենէն ետք, եւ շատ մը զրկանքներով եւ մինչեւ այսօր...: Եւ հայուն պատերազմը նոյն այդ իր շինած կեանքը պահելու իրականութեանը մէջն է, որ սակարկելի չէ եւ որ «տարբեր» մակարդակ ունի...:

Երիտասարդ հայուհիին նկարը մէկ իրական արտայայտութիւնն է հայուն «մակարդակով» ապրելու կեանքին ձգտումին: Եթէ իր «հայուն աչքերն» են, որուն մէջ կայ յուզում, մտահոգութիւն եւ երեւի վախ, բայց նաեւ հաստատ համոզում: Թէ մեր տղոց, իմ մա բանակին հետ Հայը եւ Արցախը զօրաւոր է...: Եւ այս զօրութիւնը ուժն է հայուն, որ չէ եղած քանդե-

սարսափելին մեր արեւածին մանուկներու հրեշտակային հայեացքներն են գարհուրով լեցուն:

Այդ մանուկներուն հետ քանի-քանի Կոմիտասներ ու մտաւորականներ կորսնցուցինք, որոնք մեր մշակոյթը հարստացնելու տաղանդներով օժտուած էին...:

Դուք՝ սիրելի նահատակներ, ասպետական ոգիով քայլեցիք մինչեւ Սուրբոյ անապատները, որպէս մտաւորականներ, եկեղեցականներ, արհեստաւորներ, հերոսի ու հերոսուհի կամքով, արհամարհելով ճիւղ թուրքին սատանայական ծրագիրները:

Այսօր ուրախ եմ շատ որ ի հեճուկս վանալ թուրքին Մէկ Հայ ձգելու ծրագրին, ունինք պահանջատէր երիտասարդութիւն, ու սուգի աղօթքը, մեր քաջ ու արի երիտասարդ յաջորդական սերունդներու, որպէս պատգամ փոխանցուած է, հայ դատը հետապնդելու ոգիով:

Հոգեգորցցս կը մնայ շարունակելի բոլոր բոլորին հետ, այնքան ատեն որ կ'ապրիմ ու այսօր 101-րդ ամեակին հետ 101 մոմեր վառելով, սիրելի նահատակներ, ձեր յիշատակելի օրին Ապրիլ 24-ը որպէս պահանջատիրութեան տարի կ'ընդունիմ, պաշարի աննկուն հաւատքով:

Ձեր անշիրիմ աճիւնները այսօր, սրբացուած մատուքներ դարձած են իւրաքանչիւրիս համար, կ'աղօթեմ ձեր հոգիներուն որոնք մշտաբար կը թեւածեն հայրենիքի, Արցախի ու Սփիւռքի երկնակամարներուն վրայ, ու կ'ոգեւորեն իրարաջաջորդ սերունդները հայութեան ոգեւէնչող անվեհեր նահատակներ հայոց աշխարհի, խունկ եւ աղօթք ձեր յիշատակին:

լու համար...: Այլ պահելու եւ կերտելու ու շարունակելու համար այս «տարբեր» եւ «մակարդակով» կեանքը...: Ողջ հայութեանը համար:

Եւ առկայ է եւ մանաւանդ հարազատ Դարաբաղի արտաքին գործոց նախարարի յայտարարութիւնը: «Մեր պատերազմը հողատարածքի համար չէ, այլ Ազգային ինքնութեան»:

Եթէ Նիկոսիոյ դրացիս կը վախնայ, բայց նաեւ ես եւ իւրաքանչիւր մարդ արարած...: Բայց այդ վախը պիտի վերածել ապրող կեանքի...: Կեանք մը որ տարբեր է...: Եւ որուն տարբերութեանը չափանիշերը Արժէքի հասկացողութեանը եւ գիտակցութեանը մէջն է...: Եւ այս գիտակցութիւնը պիտի պահենք, նոյնիսկ երբ ստիպուած պիտի ըլլանք «պատերազմելու»...:

Եւ այս հայուն «պատերազմն» է...: Վախին մէջէն ապրող եւ ապրեցնող եւ Արժէքի չափանիշերով կեանքեր ստեղծելու «պատերազմը»...:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ԸՆՈՒՋԱՅՆԵԼ (626) 797-7680**

# ՄՕՐ ԱՃԻՒՆԱՍԱՓՈՐԸ

## ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿԵԱՆ

**Նորապետ**  
 ԲՉՉայինը թրթռաց Շառլ Ազնաւուրի «Մամայի» մեղեդայնութեամբ: ԲՉՉայինը միշտ անպատեհ պահի էր թրթռում: Այս իրապատումի հերոսներից մէկը՝ Վահէ Վահրամեանը Տիր՝ դպրութեան չաստծոյ անունը կրող մասնաւոր բուհի հայոց պատմութեան ամբիոնի վարիչից, որը վարում էր գիտական խորհրդի հերթական նիստը, ներողութիւն խնդրեց, միջանցք ելաւ: Ֆրանսայի մտերիմ ընկերն էր՝ իրապատումի միւս հերոսը:

- Ալէն, Փարիզից ես գանգում, թէ՞ Երեւանից:

- Երեւանից:  
 Վահէն անակնկալի չեկաւ: Վերջերս այնքան յաճախ էին իրար այցելում, որ հանդիպելիս կատակում էին՝ «Շան գ'էլիզեո'ում սուրճ խմենք, թէ՞ Հիւսիսային պողոտայում»: Իհարկէ, մասնաւոր բուհում ժամավարով աշխատող դասախօսի համար հեշտ էր փարիզեան նորաձեւութիւնների կենտրոնի գլխաւոր մասնագէտին պարբերաբար հիւրընկալելը, բայց ստիպուած էր ասել.

- Բարով ես եկել:

- Այս անգամ ուրախ առիթով չեմ եկել, մօրս կորցրի:

«Յաւակցում եմ», «Դու ողջ լինես», «Վերջին տիրութիւնդ լինի» պիտի սփոփէր Վահէն, սակայն հազիւ իրեն գսպեց, որ չբացականչի՝ «Վերջապէս...»:

- Ե՞րբ մահացաւ:

- Վեց ամիս առաջ:

- Ե՞րբ:

- Վեց ամիս առաջ: Բերել եմ,

որ յուղարկաւորեմ:

Իրապատումի երկրորդ հերոսը հայերէն լաւ չէր խօսում, Վահէն միշտ էլ նրան դժուարութեամբ էր հասկացել, չնայած մայրենի լեզուով արտայայտուելու ճիգը, որպէս հայոց պատմութեան դասախօս, գնահատել էր: Անցաւ ֆրանսերէնի.

- Մայրիկի՞դ յուղարկաւորես:

- Ինչ անեմ, վերջին ցանկութիւնն է: Չկատարել չեմ կարող: Որքան ի վիճակի ես շուտ արի, քո կարիքը շատ եմ գգում:

Տիր մասնաւոր բուհից Հանրապետութեան հրապարակ գնացող երթուղայինները ինչպէս միշտ ուշանում էին: Վահէն անյարմար զգաց մօրը կորցրած ընկերոջը սպասեցնելն ու տաքսի նստեց, նախօրօք տրամադրուելով, որ չի քաշուելու, հագար դրամի մանրը պահանջելու է...

Չեւարարը «Եւրոպա» հիւրանոցում շքեղ համար էր զբաղեցրել, տեսքը ինչպէս միշտ անբասիր էր՝ նորաձեւ կոստիւմ, կոստիւմին համապատասխան վերնաշապիկ, ոսկէ քորոցով փողկապ: Միայն լամբակից դուրս ցցուած սեւ թաշկիւնակի եզրերն են վկայում, որ սգաւոր է:

Իրապատումի հերոսները համբուրում են:

- Սո՛ւրճ, կոնիա՞կ:

- Սուրճ ու կոնիակ:

«Եւրոպայում» մատուցողները վարկենական են սպասարկում: Յատկապէս շքեղ համարներում:

Ալէնը լցնում է ըմպանակը, շրջում է պահարանի կողմը, խաչակնքում.

- Աստուած ողորմի հոգուդ

մամա, յոյս ունեմ հայրենի հողում վերջապէս կը հանգստանաս:

Վահէն մօտենում է պահարանին ու նոր է միայն նկատում ապակէ փեղկի հետեւում դրուած նեղփոր սափորը: Հայոց պատմութեան դասախօսի հայեացքի առջեւ ուրուագծուած է այդ տարիքում անգամ ժրաշարժ պառաւը, ում սեւ գլխաշորի տակից ճեղքուած, խնամքով աջ ու ձախ սանրած ճերմակաթոյր մագերը աղաւնիի թեւեր էին յիշեցնում ու ընդվզում է: Մարդը մահանալուց յետոյ էլ է մարդ մնում, ինչո՞ւ են Մաքրուհի մայրիկին այրել, մոխրափոշի դարձրած սափորը լցրել: Ֆաշիստները չե՞ն հնարել գազախցիկները:

Վահէն յիշում է, որ երբ առաջին անգամ Ալէնը իրեն տուն հիւր տարաւ, թուաց թէ խոհանոցի նորաձեւ խօսաթոռին կուշ եկած պառաւին հենց նոր են ինքնաթիռ նստեցրել, Արեւմտահայաստանից այս արդիական բնակարանը փոխադրել:

- Բնիկ որտեղացի՞ ես, մայրիկ,- նրա պաղ, սմբած մատները ափի մէջ առաւ Վահէն:

Հայոց պատմութեան դասախօսը այդ հարցը տալիս էր Ֆրանսայում հանդիպած բոլոր հայերին, որ որեւէ մէկը բնօրրանը չմոռանա:

- Սուրմալուէն եմ, կողբ գիւղէն, լյա՞՞՞մ ես:

- Ես էլ բնիկ կողբեցի,- զարմացաւ ու ուրախացաւ Վահէն:

Պառաւը խօսաթոռից ձգուեց, կնճիռներով ակոսուած այտերը Վահէի այտերին քսեց, հարցրեց.

- Աղջիկս տեսա՞ր:

- Ի՞նչ աղջիկ:

- Ինչպէս, Շաղիկիս մասին չե՞ս լսած, ամբողջ Սուրմալուն գիտէ:

Նա լաջակի ծայրով աչքերը փակեց ու կերկերուն ձայնով պատմեց, որ տեղահանութեան օրը, դեռ տան շէմից դուրս չեկած, ելուզակները գրկից խլել են ոսկեծամիկ աղջկան, գլուխը գուռի քարերին խփելով, փշրել, մի կողմ են չարտել: Դատրիկն այնքան զեղեցիկ է եղել, որ փողոցի վայրենացած շները վրայ են տուել, հոտոտել, բայց խղճացել, չեն յօշոտել:

- Տղա՛ս, կ'աղաչեմ, միւս անգամ, երբ գաս, աղջիկէս լուր բերես, գոնէ ըսես, հողը դնող եղա՞ւ, թէ գոմին ետեւը նետուած մնաց:

Դրանից յետոյ հայոց պատմութեան դասախօսը երկու անգամ էլի էր Փարիզ ժամանել ու քանի որ Մաքրուհի մայրիկին ոսկեծամիկ աղջկա մասին լուր չէր տարել, ոչ ոք չէր տարել, պառաւը որոշել էր անձամբ գնալ, անթաղ դատերը հողին յանձնել: Պատմաբանի վերջին այցելութեան ժամանակ նա տանը չէր, նորից փախել էր: Ալէնը օրեր անց Հիւսիսային կայարանում գտաւ, տուն բերեց: Ֆրանսուհի կինը՝ Նաթալիին Վահէին ուղղակի թախանձում էր.

- Խնդրում եմ, պարոն, հետը հայերէն բացատրուէ՞ք, հասկացրէ՞ք, որ անհեթեթութիւն է արածը: Մեզ խայտառակում է ամբողջ Փարիզում:

Հայոց պատմութեան դասախօսը մատները մէկ-մէկ ծալեց, շարուած, փառակալած հայեացքով պառաւին յիշեցրեց, թէ գաղթից քանի՞ տարի է անցել, հիմա ո՞ր թուականն է, բայց նա

հեծկլտաց, բռնեց ձեռքը.  
 - Քանի տարի կ'ուզէ անցած ըլլայ, դո՛ւն ըսէ, տղաս, ինչպէ՞ս տեղս նստիմ: Որչափ տարիքս կ'առնեմ, այնչափ արիւնլուրիկ մարմինը աչքիս առջեւը կուգա, սիրտիս ցաւէն գիշերները չեմ քնանար: Կ'ըսեմ քանի ողջ եմ, երթամ ձեռքովս հողը դնեմ, հանգիստ խիղճով հոգիս Տիրոջը աւանդեմ...  
 Որքան իրեն ստիպում, Վահէն գլուխը բարձրացնել, աճիւնասափորին նայել չէր կարողանում: Չէր հաւատում, որ ֆրանսեական պաղճեկապակին այդքան վիշտ ու մորմոք է ամփոփում:

- Իմ վերադառնալուց յետոյ էլի՞ էր փախչում:  
 -Վերջերս անտանելի էր դարձել: Ֆրանսացի ոստիկանները յոգնեցին ամէն անգամ - գտնել, տուն բերելով, հոգեբուժարան տարան, խիստ հակողութիւն սահմանեցին: Գրեթէ բանտարկել էին:

- Այդպէս էլ մահացա՞ւ:

- Ոչ, բժիշկներն ասացին, որ հոգեվարք է, տուն բերեցինք: Հաւատո՞ւմ ես, վերջին օրը միտքը պայծառացել, հոգուն խաղաղութիւն էր իջել: Նոյնիսկ կտակ գրեց:

- Ի՞նչ կտակ:

- Մի ծեր քեռայր ունեմ, մայրիկին դիակիցելուց յետոյ կարողաց, թարգմանեց: Ինձ խնդրել էր, որ մարմինը իր հայրենիքում հողին յանձնեմ: Նոյնիսկ ճանապարհն էր մանրամասն նկարագրել: Բայց շատ զբաղուած էի, վեց ամիս անցաւ, մինչեւ ժամանակ գտայ, բերեցի: Դու գիտես՝ մամային շատ էի սիրում: Համ սիրում էի, համ՝ խղճում:

Իրապատումի այս հերոսը Մաքրուհի մայրիկի երկրորդ ամուսնութիւնից ծնուած միակ գաւազն է: Երբ Զմիւռնիայի աղէտից յետոյ որբեակայրին յունական նաւով Ֆրանսա է հասնում, իր նման ցեղասպանութիւնից վերապրած մի հայրենակից առաջարկում է ամուսնանալ:

- Կ'ամուսնանամ,- համաձայնում է Մաքրուհի մայրիկը,- բայց սեւ հագուստներս վրայէս չեմ հանէր: Ջարդին ես ոսկեծամիկ աղջիկ կորսնցուցած եմ, սգաւոր եմ:

Պառաւի սենեակում Վահէն տեսել էր այդ լուսանկարը: Նորապսակները ծուներ էին իջել Փարիզի ժան Գուստոն փողոցի հայկական եկեղեցու խորանի առջեւ, քահանան խաչ-աւետարանով նրանց պսակում էր: Խորանն օղակած հարսանքաւորների, մանաւանդ ֆրանսացիների դէմքերին ակնյայտ տարակուսանք կայ: Նորահարսը սեւ զգեստներով է:

- Հիմա ի՞նչ ենք անելու,- վերջապէս շրթունքները շարժում է Ալէնը:  
 - Ինչ պիտի անենք, վեր կաց, թաղման բիւրօ գնանք:

Թաղման բիւրոյում Վահէն ընկերոջ ներկայութեամբ ամաչեց, որ Խորհրդային Միութիւնը վերջնականապէս չի փլուզուել...

Աշխատակցուհին առանց գլուխը գրասեղանից բարձրացնելու ցաւակցում է նրանց, հարցնում հանգուցեալի անուն-ազգանունը: Տարիքը: Մահուան վկայականը լրացնելով, միաժամանակ, ձեռքը մեկնում, խնդրում է անձնագիրը: Ալէնը տալիս է:

- Սա ի՞նչ բան է,- վերջապէս գլուխն ու ձայնը միաժամանակ բարձրացնում է նա,- հանգուցեալն արտասահմանո՞ւմ է մահացել:

- Այո: - Ալէնը հայաստանեան

հերթական վտանգը կանխագրում է, սփրթնում:

Աշխատակցուհին անձնագիրը չի հրում, շարտում է.

- Դե՛հ տարէ՞ք, արտասահմանում էլ թաղէ՞ք, Հայաստանը ձեր համար գերեզմանոց է:

Փարիզում Ալէնն այսպէս ընկճուում, ինքն իր մէջ ամփոփում էր, երբ Մաքրուհի մայրիկը ֆրանսուհի հարսին փորձում էր արեւմտահայերէն բացատրել, թէ ինչո՞ւ էին այդքան խոշոր ու քաղցր կողբի ձմերուկները («Կովի թրիքով արտերը կը պարարտացնէինք»), երբ հերթական փախուստին նախապատրաստուելիս պահարանների թաքուն անկիւններում հաց էր չորացնում ու դատեր յուղարկաւորութեան համար ժանեակերից պատանք ասեղնագործում: Ամենաարտառոցը՝ հենց որդու ալժիրցի գործընկերները հիւր էին գալիս, գունատուում, իրեն փողոց էր նետում («Միւսուկումս են, ես կը վախնամ անոնցմէ»):

Ի վերջոյ Վահէն ուրախանում է, որ Խորհրդային Միութիւնը վերջնականապէս չի փլուզուել: Դուրս է գալիս միջանցք, բՉՉայինով գանգահարում է ազդեցիկ ծանօթին: Ծանօթը՝ թաղման բիւրոյի վարիչին: Ամէն ինչ իսկոյն կարգադրուում է, աւելին՝ փողոց դուրս չեկած, նրան գանգահարում է անձամբ ինքը՝ գերեզմանոցի տնօրէնը:

- Ե՞րբ էք մտադիր հանգուցեալին յուղարկաւորել,- առանձնաշատուկ յարգալիբութեամբ, նոյնիսկ վշտակցութեամբ հետաքրքրուում է նա:

- Ե՞րբ պատրաստ կը լինի գերեզմանափորը:

- Վաղը, ժամը 12-ին:

- Ուրեմն, վաղը ժամը 12-ին:

Յաջորդ օրը Ալէնը չուզեց, Վահէն էլ չկարողացաւ համոզել, որ Մաքրուհու մայրիկի վերջին հրաժեշտը, այն էլ այդքան երկար ճանապարհ կտրելուց յետոյ, յուղարկաւորութեան վերածուի:

- Թափոր պէտք է, երկուսով կը գնանք, հողին կը յանձնենք, կը վերադառնանք,-կարճ ու կտրուկ վճռեց որդին:

Պատմաբանի ազդեցիկ ծանօթը, որը չնայած այս իրապատումի գործողութիւններին չի մասնակցում, բայց ուղղորդում է, հաւանաբար այլ կարծիքի էր: Նա, հասկանալի է, վերին ոլորտներում զբաղումներ ունէր, անձամբ յուղարկաւորութեան չէր եկել, բայց վարորդի հետ «Հայրենաբաղձ մայրիկին» մակագրութեամբ շքեղ սպասակ էր ուղարկել: Դա է երեւի դրդել, որ գերեզմանոցի ամբողջ անձնակազմը՝ տնօրէնի գլխաւորութեամբ խմբուի հրաժեշտի քարի մօտ, թափորին սպասի:

Տեսնելով, թէ ինչպէս են երկու հոգի իջնում տաքսիից, տնօրէնը ընդառաջ է նետում, որ ցաւակցութիւն յայտնի, բայց նայում է շուրջը, ընկրկում.

- Յուղարկաւորութիւնը յետաձգո՞ւմ էք:

- Ոչ,- ապահովեցնում է Վահէն:

- Բա հանգուցեալն ո՞ւր է:

Ալէնը ցոյց է տալիս ձեռքի մարգական պաշուսակը:

Գերեզմանոցի աշխատակիցները նրանց արդէն հետեւում են ոչ թէ Մաքրուհի մայրիկի մահուան վշտից կամ պատմաբանի ազդեցիկ ծանօթի նկատմամբ տածած ակնածանքից, այլ սոսկ հետաքրքրա-

# ՄՕՐ ԱԾԻԻՆԱՍԱՓՈՐԸ

Շարունակուած էջ 20-էն

սիրութիւնից:

- Ասա թող իրենց գործին գնան,- ֆրանսերէն նեղսրտում է Ալէնը:

- Ընկերս ուզում է վերջին պահին մօր հետ մենակ մնալ,- հայերէն խնդրում է Վահէն:

Գերեզմանափորները դազադի համար սահմանուած չափերով հողը քանդել, թմբին նստոտել են: Ալէնը պայտուակը բացուած, համբուրում է սափորը, մեկնում նրանց: Համեմատաբար ջահելը, նա, ով երեւի սօս օրերին է միայն սափուրում, սափորը վերցնում, նետում է փոսը, զգոյշ տեղադրում անկիւնում: Միւսները հող են լցնում: Նախ փափուկը, յետոյ՝ քար ու քուսն: Գերեզմանափոսը, որի մէջ դազադ չկայ, որն ըստ հոլթեան դատարկ է, շատ դանդաղ է լցւում: Ալէնը ասես նոր է զգում, որ կորցնում է մօրը, վերջնականապէս է կորցնում ու անսպասելի մտաբերում է:

- Կտակը հայերէն է՝ ինչ պիտի անեմ, հետը հողին չյանձնեմ:

- Նախ տուր տեսնեմ:

Մաքրուհի մայրիկը վերջին պատուիրանը գրել է ոլորագեղ երկաթագրերով՝ այն տառերով, որոնք Մեսրոպ Մաշտոցն է հնարել: Վահէն կարօտով չիշում է կողբեցի մօրը, որը տիկին Մաքրուհու նման կեանքում դպրոց չէր գնացել ու ճիշտ նոյն ձեւով էր գրում: Երբ թոռները հարցնում էին, թէ որտե՞ղ է այդ քան գեղեցիկ գրել սովորել, ներքին ինքնագոհութեամբ ժպտում էր՝ «Տէր-Ջորի աւագների վրայ»:

Մտքերի, յուշերի մակընթացութիւններով Վահէն համոզւում է կտակի վերջին բառերին, այլայլուում: Ձեռքն ինքնաբերաբար մեկնում է, որ թաղումը դադարեցնեն:

- Ինչ որ բանում թերացե՞լ եմ,- Ալէնի այտուկները դողդողում են:

- Ինչ որ բան սխալ ենք անում,- գերեզմանափորները բահե-րը ձեռքներին քարանում են

- Շարունակէք, շարունակէք,- համակերպում է պատմաբանը:

Տարօրինակ է՝ քիչ առաջ մօր ածիւնասափորը հողին յանձնելիս Ալէնը լուռ հեծեծում էր, բայց դեռ քաղաք չհասած, ինքնաշարժի մէջ հանում է ժամանակացոյցը, «մայրիկի յուղարկաւորութիւնը» տողի վրայ գիծ է քաշում, բարձրաձայն հաշուարկում, թէ մի ժամից ո՞ւմ պիտի հանդիպի, երկու ժամից ո՞ւր այցելի, երեք ժամից որտե՞ղ ընթրի: Դեռ մտադրութիւն ունի Արցախի էլ գնալ, չնայած ընդամենը մի շաբաթով է եկել:

Աւելի լաւ: Վահէն փութկոտ հրաժեշտ է տալիս, վերադառնում է տուն, փակում է իր սենեակում, նորից բացում է Մաքրուհի մայրիկի կտակը: Կարդալիս ասես լսում է ձայնը:

- Տղաս, ես չկրցայ մէկ հատիկ քրոջը հողին յանձնել, բայց յոյս ունիմ, որ դուն չես զլանար, քու որդիական պարտականութիւնդ լիութի կը կատարես: Կ'աղաչեմ մարմինս, եթէ ոչ մարմինս, մոխիրս, գոնէ մագէս փունջ մը անպայման տար, ծննդավայրս թողէ: Մեր գիւղը հեռու չէ, երբ Երասխը անցնիս, Վարդամարգ վտակին հունով շիտակ դէպի Արարատ մայր լեռը քալես, շուտով Կողբ կը հասնիս: Հարցուր Եգնիկ Կողբացի իմաստասէրին ծնած գիւղը ո՞րն է՝ ամէն մարդ կը ցուցունէ: Մեր ընտանեկան եկեղեցիին գաւիթն է, գանգակատան ճիշտ դիմացը: Հոն ինծի կը յուղարկաւորես ու տապանաքարիս վրայ անպայման քրոջը անունն ալ կը փորագրես: Գիտցիր, որ այդ պարագային միայն խիղճս հանգիստ կ'ըլլայ եւ հանդերձեալ կեանքս տանջանք-տառապանքով չանցնիր, ինչպէս երկրային կեանքս անցաւ:

Շնորհակալ եմ տղաս, որ իմ վերջին փափաքս պիտի կատարես: Աստուած օրհնէ քեզ...

Վահէն սրդողում է՝ Ալէնի քեռայրը չի՞ կարողացել կտակը ճիշտ կարգալ, թէ՞ դիտմամբ սխալ է թարգմանել: Ինչ էլ եղած լինէր, քանի որ արդէն գիտէր ճշմարտութիւնը, իրեն մեղաւոր էր գգում: Եթէ Մաքրուհի մայրիկի վերջին ցանկութիւնը չէր կատարուելու, ինչ տարբերութիւն՝ Փարիզի Իվրիի՞, թէ՞ Երեւանի Նոր Զէյթունի գերեզմանոցում հողին յանձնուէր:

Պատմաբանն ընդոտս վեր կացաւ: Անդրադարձաւ, որ ամենայն դէպս մի թարութիւն ունի: Մօտեցաւ հիւրարարի հայեցապատ պահարանին, որտեղ կնոջ օժիտի ոսկեգօծ սպասքները աստիճանաբար անհետացել, փոխարինուել էին Արեւմտահայաստանից իր բերած, թափանցիկ փայլաթերթերով փաթեթաւորուած քարերի ու հողակոշտերի բեկորներով:

Նա շատ լաւ չիշում էր Կողբի աղահանքից պոկած ձերմակ երակներով կտորտուքները: Որոնեց, դարակներից մէկի խորշում գտաւ: Չնայած իրենք իրենց քայքայուել, փշուրների էին վերածուել, աւելի մանրացրեց, խունկի պէս, խնամքով սրուակի մէջ լցրեց, առաւօտ շուտ գնաց գերեզմանոց:

Լոյսը նոր էր բացւում, բայց Մաքրուհի մայրիկի շիրմաթմբի մօտ տաքսի կար: Այդ վաղ ժամին Ալէնն առանց իրեն եկել, հետը կնոջ, գաւակների, նոյնիսկ քեռայրի անուհից ծաղկեզամբիւղներ, ինչպէս նաեւ քահանայ էր բերել: Տէրհայրը հոգեհանգստեան կարգ էր կատարում, բայց Ալէնը նրան չէր լսում, պտտում էր գերեզմանի չորս կողմը, ծաղկեզամբիւղները, քահանային տարբեր դիրքերից լուսանկարում: Որ երեւի Ֆրանսայում յայտածի, պարտքը կատարած որդու գոհունակութիւնը վայելի:

Հենց աւագերէցը գնաց, Վահէն, խուսափելով լուսանկարչական ոսպնեակի սեւեռուն հետապնդու-

մից, Կողբի հողը հանեց, Մաքրուհի մայրիկի շիրմին դանդաղ, խաչածեւ շաղ տուեց:

- Այդ ի՞նչ ես անում,- լուսանկարահանումը դադարեցրեց Ալէնը: - Հէ՛չ,- Վահէն չուզեց ընկերոջը վշտացնել:

Բայց ձեւարարը յամառ էր: Թեւը բռնել ու փորձում էր ամէն կերպ Վահէի հայեացքը որսալ, հայեացքից կառչել:

- Դու ինձնից զաղտնիք ես թաքցնում,- յանդիմանում էր դառնացած:

- Ալէն,- ընկերոջ ճնշմանը չդիմացաւ, աւելի շուտ Մաքրուհի մայրիկի թարմ շիրմի մօտ չկարողացաւ ստել պատմաբանը,- ուզո՞ւմ ես իմանալ ճշմարտութիւնը:

- Իհարկէ՞, ուզում եմ:

- Մայրիկդ կտակել էր իրեն ոչ թէ Երեւանում, ծննդավայրում՝ Կողբ գիւղում հողին յանձնել:

- Կողբը այստեղից հեռու է:

- Հեռու չէ, բայց սահմանի միւս կողմում է: Թուրքերի բռնագաւթած տարածքում:

- Մամաս խելագարուել է,- ձեռքերը յուսահատ, մոլեգին թափ տուեց Ալէնը:

- Չհամարձակուես մամայիդ խելագար կոչել,- աւելի բարձր գոռաց Վահէն:

Այդ պահին նրան թուում էր, թէ ինքը Մաքրուհի մայրիկն է, եթէ ոչ հիմա, երբեւէ անպայման դառնալու է...

Դրանից յետոյ, մինչեւ մեկնելը, Ալէնն ընկերոջը չզանգահարեց: Կամ գերծանրաբեռնուած ժամանակացոյցում պատեհ պահ չգտաւ, կամ ուզեց, որ ընտանեկան գաղտնիքը իրենց երկուսի մէջ մնայ, աստիճանաբար մոռացուի...

Ինչ խօսք, այդ պատճառով չէ, որ հեղինակը նորավէպն այսպէս անսպասելի ընդհատում, փաստորէն չի աւարտում: Ուզում է, որ ժամանակն աւարտի, իր տրամաբանական հանգուցալուծմանը հասցնի: Մաքրուհի մայրիկի հողին կը սպասի:

## ՄԷԿ ՐՈՊԵ ԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐԻՐ ԶԱՆԳԵՐԻ ՂՕՂԱՆՋ

Ռ. ԿՈՐԻՒՆ

Երկիր իմ հայոց՝ Հայաստան աշխարհ, Հայի օրրան՝ դու դրախտավայր, Սիրտս ու հոգիս քեզ եմ կապել, Յաղթութեան բարձրերում քեզ տեսնել:

Դու սուրբ ես երկիր իմ բզկտուած, Պապերիս սխրանքով դու մեզ հասած, Ինչեր ասես որ դու չես տեսել, Բազում դարեր գլխովդ անցել:

Մեր պապերի քրտինքով, տառապանքով, Անթի կոթողներ, ոստաններ կառուցուել, Վանքեր, տաճարներ Աստծուն նուիրուել, Գիր ու դպրութեամբ կեանքը յաւերժացրել:

Նրանք խաղաղ կեանքն են գովերգել, Աշխատանքով հողին շունչ տուել, Արդար կեանք ապրել, կաճառներ հիմնել, Սերունդներին սեր ու հաւատք աւանդել:

Այս է եղել պապերիս կեանքը դարաւոր, Ոչ թէ թալանել, կողոպտել ու սպանել, Երկիրներ գրաւել, մարդկանց կեղեքել, Ուրիշների քրտինքով կեանք բոլորել:

Բայց բարբարոս ցեղեր թափառական՝ Չուրկ կեանքից կառուցողական, Չուրկ գրից, գրքից ու մշակոյթից, Չուրկ խղճից, գութից մարդասիրական:

Մեր ժողովրդի գլխին փոթորիկ դարձան, Երկիրն հայոց քար ու քանդ արան, Թալանել, կողոպտել ու գերեզմարել,

Անթիւ անհամար կեանքեր խլել:

Թուրք-օսմանցին էր մէկը դրանցից, Որ եկաւ հեռուից միջին Ասիայից, Վաչկատուն ցեղ՝ եաթաղանը ձեռքին, Դարձաւ պատուհաս ողջ աշխարհին:

Արիւնարբու ցեղ գայլաոգի բնազդով, Թալանեց, կողոպտեց ու յափշտակեց, Երկրներ գրաւեց, ահ ու սարսափով Յոյնին, բալկանին եւ հային տիրեց:

Ծով արիւններ հոսեցին, Ըմբոստութեան դրօշակներ ծածանեցին, Յեղափոխական գունդեր ծնուեցին, Ազատութեան կռիւներ ծաւալուեցին:

Յոյներ, բալկաններ գէնքի ուժով Թուրքի գօրքին մի լաւ ջարդ տուին, Իրենց պապերի վրէժը լուծեցին, Անկախութեան դրօշ պարզեցին:

Հայերը մնացին անպաշտպան, Սուլթանի յաջորդ երիտթուրքերը՝ Գաղտնի ծրագրով պետական Կատարեցին ջարդը հայութեան:

Այսպէս բիւր անմեղ հայեր կոտորուեցին, Էրզրի Հայաստանը պարպուեց հայից, Դարաւոր կոթողները աւերուեցին, Որ իսպառ ջնջուի անուրը հայի:

Վա՛յ թուրքիս, վա՛յ թուրքիս,

Ի՞նչ տառապանքներ ու չարչարանքներ ասես, Որ չբերիր մեր արդար ու անմեղ, Ռանչբար ժողովրդի գլխին: Կարծո՞ւմ էիր քո գազանաբարոյ արարքով, Հայը կը ջնջուի՞՞ եւ հետքը կը կորցուի՞, Շատ սխալուեցիր, Քանգի մէկ հայից էլ Վրիժառութեան բանակ է ծնուում:

Նահատակներ մեր պաշտելի, Դուք ընկաք, բայց չհանգաք, Ձեր բոսոր արիւնով ողորուեց Արտերը մեր ժողովրդի, Հաւատքի, հայրենասիրութեան, Համբերատարութեան եւ պայքարի Ոգեւորիչ խթանը դարձաք, Ինչպէս Նահատակները Վարդանանքի, Սարգարաբադի, Արցախի եւ բոլոր ժամանակների, Դուք կաք, կը մնաք, Ահաւասիկ սերունդներ քաջ ու լրջախոհ, Հաւատարիմ ու անդրդուելի, Ձեր արեան կանչի Դատն են հետապնդում, Բուռն պայքարով՝ Յաղթութեան աներկբայ Տելսականով:

Մեր պաշտելի նահատակներ, Հարիւր տարիների գալարումը-անցումը Ոչ մի անտարբերութիւն մեր պայքարի հանդէպ, Սակայն աւելի թէժ, աւելի բուռն:

«ՀԱԻԱՏՈՒՄ ԵՄ ՔԵԶ»

ԼԱՐՔ ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՁԵՆՆԱՐԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ուրբաթ, Ապրիլ 8, 2016-ին, Լարք Երաժշտանոցի նախաձեռնութեամբ, փոխ-տնօրէնուհի Թագուհի Արզումանեանի ղեկարւնեատական ծրագրի ղեկավարութեամբ եւ ուսանողներու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ Երաժշտական իւրաքանչեւ ձեռնարկ մը, որ իր մատուցման տպաւորիչ ձեւով եւ կազմուած յայտագրի խորքային իմաստալից բովանդակութեամբ, անմոռանալի պիտի մնայ Լարք Երաժշտանոցի Թրփանձեան հանդիսասրահ փութացած սանսանուհիներու հարազատներուն, ուսուցիչ-ուսուցչուհիներուն, երաժշտասէրներուն եւ նիւթապէս եւ բարոյապէս Լարքի զօրավիզ մշակութասէր լայն հասարակութեան յիշողութեան մէջ:



Լարքի բեմահարթակը դիմակալող պատը գեղազարդարող հայազգի հանճարեղ երաժիշտներու շարքին՝ Կարա Մուրգաչի, Եկմալեանի, Խաչատուրեանի, Տիգրանեանի, Կոմիտասի, Ալեքսանտր Յարութիւնեանի, Սպենտարեանի, Տիգրան Մանուրեանի դիմաստուերներու ներշնչող հմայքին ներքոյ, ներկայ գեղարուեստասէր հասարակութիւնը եկած էր վկայատեանները հանդիսանալու, ընդհարապէս հայ

մշակոյթի եւ մասնաւորապէս ազգային երաժշտութեան ճանապարհով, հայ նորահաս սերունդին մէջ վառ պահող ազգային գիտակցութիւնն ու հպարտութիւնը: Եւ իրաւամբ, Լարք Երաժշտանոցի տաղանդաշատ վարիչներուն եւ նուիրեալ դասատուներուն շունչին տակ հասակ կ'առնէին սերունդներ, որոնք վաղուան մեր հաւատաւոր պարծանքը պիտի ըլլային:

Ձեռնարկը սկիզբ առաւ Երաժշտանոցի ուսուցիչներէն, Պրն. Միփան Ամինեանի խմբավարութեան ներքոյ, երաժշտանոցի սանսանուհիներու նորարար հարուածային գործիքներու վրայ կատարած հարուածային գրաւիչ նուագակցութեամբ: Անոնք՝ վարժ, իմացական եւ ապրումով նուագեցին մեր անվերապահ գնահատութեան արժանի տանեակ մը սանսանուհիներ՝ Նայիրի Արդունեանց, Տարօն Պետրոսեան, Լիլի Պետրոսեան, Լիւսի Պրութեան, Նանոր Տէր Պետրոսեան, Արի Էքմէքեան, Սոֆիա Հայտուք, Սթէֆընի Քլըմեան, Արթուր Քէշիշեան, Հերմինէ Քէշիշեան, Մելանի Խաչատուրեան, Ռիչըրտ Միրզոյեան եւ Նարեկ Շախկիլեան, որոնք արժանացան հանդիսատես ներկաներու բուռն ծափահարութիւններուն:

Այնուհետեւ, բարի գալուստի իր աւուր պատշաճի ջերմ եւ տպաւորիչ խօսքերով ելոյթ ունեցաւ հանդիսավարուհի՝ Տիկ. Թագուհի Արզումանեան, որ նաեւ, «Մայրերու Օր»-ուան առիթով շնորհաւորեց հայ մայրերը: Ան բարձր գնահատեց հայ մայրերու նուիրուածութեան ոգին եւ ազգային, մշակութային եւ հայրենասիրական ներդրումը մեր հայապահպանման գուպարի բազմաբնոյթ ոլորտներէ ներս: Ան շեշտեց Լարք Երաժշտանոցին ներս երաժշտական ուսման գուզահեռ, տիրող ազգային արժէքներու հանդէպ ցոյց տրուած քաջա-լերանքը, ակնածանքը, սէրը եւ յատկապէս, հաւատքը՝ հանդէպ հասակ առնող նոր սերունդներու մէջ ազգային ինքնութեան կերտումին:

Այս երեւոյթի փաստացի վկայութիւնը տրուեցաւ, կրկին



անգամ ըլլալով, աւելի քան տասնեակ մը պարման-պարմանուհիներու՝ Լիլի Առաքելեանի, Ջարէ Առաքելեանի, Ալեքսանտր Առաքելեանի, Դաւիթ Բրուտեանի, Անտրու Կարտնըրի, Մատլէն Կարտնըրի, Լէօ Գասպարեանի, Անի Յովսէփեանի, Անի Իսայեանցի, Հայկ Իսայեանցի, Նարեկ Ժամկոչեանի, Նարեկ Կարապետեանի, Նաթալի Գարմեանի, Սոֆիա Գէորգեանի, Միշէլ Խաչատրեանի, Տաթև Մալխասեանի, Մարի Մկրտիչեանի Միքայէլ Բէնիլեանի, Անահիտ Սինանեանի, Մարիամ Վարժապետեանի, Հայկ Ջազարեանի եւ Մարի Ջոհրայեանի կողմէ յաջորդաբար արտասանուած քերթողական տպաւորիչ բացիկներով, որոնք Տիկ. Թագուհի Արզումանեանի կողմէ խնամքով հաւաքուած ու համադրուած էին «Կը Հաւատամ Քեզի» ուժգին կերպով հայտ ինքնութիւնը դրսեւորող պատգամաբեր ենթախորագրի տակ: Հոս, արժէկարգին արձանագրել, որ սանսանուհիներու հաւատաւոր, ջերմ եւ տպաւորիչ համառօտակի ելոյթները արժանացան ներկաներու բարձր գնահատանքին: Անկախաբար վերը նշուած խմբային ելոյթներէ, երաժշ-

տանոցի սանսանուհիներ՝ Անտրէ Կիրակոսեան եւ Մարգիտ Տէր-Մարտիրոսեան, Հայկ Աճէմեան, Անթոնի Արուշանեան, Նարեկ Ժամկոչեան, Աշոտ Տէր-Մարտիրոսեան, Դաւիթ Ճալայեան, Միաձան Թրէպլը, Մելանի Խաչատուրեան, Նայիրի Արթունեանց, Նանոր Տէրպետրոսեան, Էլիզապէթ Պէշիկեան, Հանրի Սարոյեան, Ռիչըրտ Միրզոյեան, մեծ տպաւորութիւն թողուցին ներկաներուն վրայ իրենց անհատական երաժշտական կատարողութիւններով, որոնք յաջողապէս արտայայտութիւն գտան մեր տաղանդաշատ, ստեղծագործ երգահաններու՝ Տարտեանի՝ «Կիւլիւմ Ջան»-ի, եւ «Սոնա Ջան»-ի, Արամ Խաչատուրեանի՝ «Թոքա-տայ»-ի, Պապաճանեանի՝ «Սամսոյ Պար»-ի, Կոմիտասի՝ «Վաղարշապատի Պար»-ի, Հակոբեան Աւանդական Երգ՝ «Միծեռնակ»-ի մէջ նուագարանային կատարողութեամբ:

Ձեռնակի աւարտին տեղի ունեցաւ կարգին հիւրասիրութիւն: Տպաւորիչ, այլապէս յաջող ձեռնարկ մը, արդարեւ, որուն համար արժէ շնորհաւորել Լարք Երաժշտանոցի տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը եւ շնորհալի սանսանուհիները: Վարձքերնին՝ դալար:

Advertisement for Massis Weekly subscription. Includes the title 'ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ' and subscription rates for USA, Canada, and Overseas. Includes a form for Name, Address, City, State, Zip Code, Country, and Tel/Email.

Advertisement for the book 'ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱՐԱԿՆՈՅ ԵՒ ԱՅՆ ԾՈՍԱՍՏԵԱՆՆԵՐ'. Includes the publisher's name 'Հովանաւորութեամբ Արմ. Միքայէլ Եպիսկ. Մուրաթեանի' and contact information for the publisher 'Տեղի կ'ունենայ Ուրբաթ, Ապրիլ 29, 2016, երեկոյեան ժամը 7:30ին...'.

# ԿԲՎ-Ի ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԹԻԿՈՒՆՔ Է ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ



Երախտագիտութիւնն ու ծառայութիւնը մարդ կոչումին ամէնէն ազնիւ տարրերն են: Այս տարրերով կ'առաջնորդուի Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանի իւրաքանչիւր շրջանաւարտ, որ ձեռք-ձեռքի տալով կը համախմբուի Շրջանաւարտից Միութեան հովանիին ներքոյ, որպէսզի թեւ ու թիկունք կանգնի իր սիրելի վարժարանի կարիքներուն:

Այս ուսումնական տարեշրջանի Նոյեմբերին շրջանաւարտներու խմբակ մը հաւաքուեցաւ «Ֆինիսիա» ճաշարանի փոքր սրահ: Պատերազմի պատճառով Լիբանան ապաստանած եւ Կեդրոնական Բարձրագոյն վարժարան յաճախող սուրիահայ աշակերտներուն նիւթական օժանդակութիւն տրամադրելու համար, պատրաստուած էր յատուկ գրքոյկ մը, որ ամփոփ տեղեկութիւններ կը փոխանցէր քանի մը աշակերտներու ընտանեկան պարագաներուն մասին: Գրքոյկը նաեւ կը նշէր «Աշակերտ մը հովանաւորելու» ծրագիրը: Ներկաներէն գոյացաւ կոկիկ գումար մը եւ ուղարկուեցաւ դարձոյ: «Աշակերտ մը հովանաւորելու» ծրագիրը կը շարունակուի:

Ուրբաթ 4 Մարտ 2016ին, Կլենտէյլի «Ֆինիսիա» ճաշարանի մէջ տեղի ունեցաւ Շրջանաւարտից Միութեան կազմակերպած տարեկան ճաշկերոյթը: Օրուան թամատան էր Արա Ասիլեան, որ յայտարարեց, թէ 26րդ տարեկան ճաշկերոյթի յայտագիրը ուղղակի կը սփռուի աշխարհով մէկ: Ան ողջունեց Լիբանանի, Տուպայի, Մարսէյլի, Փարիզի, Մոնթրէալի, Նիւ ձըրզիի, Սան Ֆրանսիսքոյի եւ Քալիֆորնիոյ բոլոր շրջանաւարտները, մասնաւորաբար Տուպայէն՝ տէր եւ տիկին Հրայր եւ Մակի Սողոմոնեանները, Մարսէյլէն՝ Անդրանիկ Նաշեանը, իսկ Սան Ֆրանսիսքոյէն՝ Պէթի խաչատուրեանը: Ան նշեց, որ առաջին անգամ ըլլալով պարզեւտրեալները՝ կենսագրականներու կողքին, պիտի ներկայացուին դպրոցական լուսանկարներու ցուցադրութեան ընդմէջէն:

Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգները մեկնաբանեցին Արա Գուրուեան եւ Բաֆֆի Քերպապեան, դաշնակի նուագակցութեամբ եսթեր Ասիլեանի: Վերապատուելի Կալվին Սաղըրեան աղօթքով օրհնեց սեղանները, շրջանաւարտները, ուսուցիչները եւ աշակերտները, Աստուծոյ խնդրելով որ այս վարժարանէն մեր բոլոր սորվածները ի սպաս դնենք անոր բարօրութեան համար:

Շրջանաւարտից Միութեան ատենապետ Վարուժ Զարիտեան իր խօսքի առաջին բաժինով ներկայացուց Նոյեմբերի ձեռնարկը, քանի մը ժամուան ընթացքին հաւաքուած նուիրատուութիւնը, եւ բաց յայտարարեց «Աշակերտ մը հովանաւորելու» ծրագիրը: Ան յայտարարեց 2015 տարուան ընթացքին վարժարանին ուղարկուած գումարը, որուն առիւծի բաժինը կատարած են ձերի եւ Փաթթրփէնճեանները: Ապա, շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն, մէկ առ մէկ նշելով անունները բոլոր անոնց, որոնք վարժարանին կամ հայ համայնքին օգտակար դարձող պատասխանատուներ են:

ԱՄԱԱ-ի գործադիր տնօրէն Զաւէն խանճեան ԿԲՎ-ի կատարած բոլոր ձեռքբերումներուն ու յաջողութիւններուն մասին ակնատեսի վկայութիւն տուաւ: Առաջարկեց, որ շրջանաւարտները իրենք զիրենք կոչեն «Կեդրոնականցիներ», որովհետեւ այդ մէկը կը յիշեցնէ հայ հանճարներ տուող Պոլսոյ Կեդրոնականը: Ան նշեց վարժարանին երեք առաջնահերթ սկզբունքները, որոնք արդէն կ'իրագործուին: Առաջին՝ դպրոցին նպատակը, որ կ'իրագործուի «Դէպի աղբիւրը լոյսին» ընթացքով, երկրորդ՝ երախտագիտութիւնը, որ կ'իրագործուի Շրջանաւարտից Միութեան ճամբով, իսկ երրորդ՝ արեւմտահայերէնի ուսուցում եւ ծաղկում, որ լաւագոյն ձեւով կը փոխանցուի «Կեդրոնականցիներուն»:

Մօտաւորապէս երեսուն վայրկեան ներկաները դիտեցին տեսաերիզ մը եւ ականջալուր եղան վարժարանի առօրեային, յաջողութիւններուն, ձեռքբերումներուն, ինչպէս նաեւ անոր վերանորոգման աշխատանքներուն եւ աշակերտներու թիւի աճման: Ներկաները լսեցին նաեւ Շրջանաւարտից Միութեան ուղղուած աշակերտներուն արտասանած երախտագիտական եւ շնորհակալական խօսքերը: Վարժարանի տնօրէնուհին՝ Մարալ Տէյլիմէնճեան, իր պատրաստած տեսաերիզին ճամբով դարձեալ ներկայ եղաւ ճաշկերոյթին:

«Ճանչնանք տարուան շրջանաւարտը» բաժինով, առաջին հերթին Մարի Գոնիալեան ներկայացուց իր դասընկերը՝ Հրայր եւ Մակի Սողոմոնեանները, Մարի եւ Մակի Սողոմոնեանները: Մինչ կը ցուցադրուէին լուսանկարները, Մարի Գոնիալեան կը կարդար Հրայր Սողոմոնեանին ինքնակենսագրութիւնը, որ լի էր դպրոցական, համալսարանական, անհատական, ընտանեկան, մշակութային, ազգային, համայնքային եւ գաղութային գանազան յաջողութիւններով: Գոնիալեան նշեց, թէ վերջին քսանամեակին Հրայր Սողոմոնեան նուիրատուութիւններ կատարած է հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.ի կողմէ: Հրայր Սողոմոնեան ԿԲՎ-ին կատարած է յիսուն հազար տոլարի նուիրատուութիւն: Ի բացակայութեան, Շրջանաւարտից Միութեան կողմէ ատենապետ Վարուժ Զարեան յուշանուէրը յանձնեց Հրայր Սողոմոնեանին եղբոր՝ Յարութ Սողոմոնեանին եւ Մակի Սողոմոնեանի եղբոր՝ Ժողէֆ Մղտիսեանին:

Արա Ասիլեան ներկաներուն ծանօթացուց տարուան շրջանաւարտը, ուսուցիչները, ուսուցիչները եւ վարժարանին թեւ ու թիկունք կանգնող Պէթի խաչատուրեանը, որ Շրջանաւարտից Միութեան հիմնադրութեան առաջին օրէն, Գարեգին Ալպարեանի կողքին, լծուեցաւ շրջանաւարտներ փնտռելու, գտնելու եւ անոնց հետ կապի միջոց մը ապահովելով անուանացանկ մը պատրաստելու աշխատանքին:

Առողջական հարցերու պատճառով Պէթին ներկայ չէր ձեռնարկին, սակայն իր ողջոյնի եւ երախտագիտութեան խօսքը փոխանցեց տեսաերիզի միջոցով: Շրջանաւարտից Միութեան կողմէ վարուժ Զարեան «Վերապատուելի Ենովք Հատիտեան» անունով յուշանուէրը յանձնեց Պէթին երկու գաւակներուն՝ Արմէն եւ Զաւէն խաչատուրեաններուն: Երկու եղբայրները խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեցին Շրջանաւարտից Միութեան:

Դոկտ. Յակոբ Տէր Կարապետեան ներկայացուց տարուան շրջանաւարտ եւ Մարսէյլէն յատուկ ժամանած Անդրանիկ (Անթուան) Նաշեանը: Կենսագրութեան ընթացքման կողքին կը ցուցադրուէին դպրոցական օրերու ամէնէն աշխոյժ, գուարթախօս, խանդավառ, գործունեաց եւ եկեղեցիին ու դպրոցին նուիրուած աշակերտին լուսանկարները: Անդրանիկ աշակերտական օրերուն երկու թատերական ներկայացումներու հատոյթով եւ դրամահաւաքի միջոցով, յաջողած էր դպրոցին համար դաշնամուր մը եւ առտնին տնտեսագիտութեան դասաւանդման ընթացքին օգտագործուող սառնարան մը գնել: Այս պատիւին արժանանալով «Յարութիւն» առած Անդրանիկ Նաշեան ուրախ էր իր ամերիկաբնակ դասընկերները տեսնելով: Շնորհակալութեան իր խօսքին մէջ ան յիշեց իր քոյրը՝ Սոնա Նաշեանը, որ ամբողջ կեանքը նուիրած էր սերունդ դաստիարակելու աշխատանքին: Առ ի զնահատանք դպրոցին մատուցած ծառայութիւններուն, Շրջանաւարտից Միութիւնը

Շար.ը էջ 27

Կազմակերպութեամբ՝  
**ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ**  
 Լուս Անճելոսի Մասնաճիւղին

**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**  
**«ՑԵՂԻՆ ՑԱԻԻ, ՑԵՂԻՆ ՈՅԺԻ»**  
**ԳՐԱԳԵՏՆԵՐԸ**

Բանախօս՝  
**ՓՐՈՖ. ՕՇԻՆ ԲԵՇԻՇԵԱՆ**

Ասմունք եւ ընթերցանութիւն  
**ԼՈՐԱ ԳՈՒՅՈՒՄՅԵԱՆ**  
**ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ, ԳՐԻԳՈՐ ԶՕՅՐԱՊ**  
**ՍԵԼՈ ԷՔԻՉԵԱՆ**  
**ՈՌԻԲԵՆ ՍԵԻՎԿ**  
**ԼԻԼԻԹ ԲԵՅԵԱՆ**  
**ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ, ԹԼԿԱՍԻՆՑԻ**  
**ՌՈՋԱԼԻՆ ՄԱՏՈՅԵԱՆ**  
**ՄԻԱՍԱՆԹՕ**  
**ՀՐԱՉ ՍԵՓԵԹՅԵԱՆ**  
**ԵՐՈՒԽԱՆ**

Երաժշտական բաժին  
**ԱԼՊԵՐԹ ՎԱՐԴԱՆԵԱՆ**  
**ՍԱԼԲԻ ՄԱՅԻԼԵԱՆ**  
**ԼԻԼԻԹ ԽՈՃԱՅԵԱՆ**

Հանդիսավար՝  
**ԲԱՐՍԵՂ ԳԱՐԹԱԼԵԱՆ**

**ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼ 28, 2016**  
 Երեկոյեան ժամը 7:30-ին  
**ԹՄՍ ՊԵՇԿԵՕԹԻՐԵԱՆ ՍՐԱՅ**  
 1901 N. Allen Avenue, Altadena, CA 91001

**ՀԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ** **ՄՈՒՏԵԸ ԱԶԱՍ**

### Հ.Մ.Մ. ԲԱԺԱԿԱԿԻՐ



Փաստորինայի Հ.Մ.Մ.ի ֆուտբոլի խումբը Կիրակի 12 Ապրիլ 2016ի կէսօրէ ետք ժամը 1:00ին Փաստորինայի Villa Parkի մէջ մրցելով Grasshopper խումբին դէմ, խաղը շատ տաք մթնոլորտի մէջ էր, կողմերը չի յաջողացան դարպասը գրաւել:

Խաղի աւարտին եղաւ տուքանային հարուած ուր Հ.Մ.Մ. տարաւ իր յաղթանակը 3-2 հաշուով:

Այս առթիւ Հ.Մ.Մ.ի խաղողներուն համար տրուեցաւ յաղթանակի խրախմանք մը Հ.Մ.Մ.ի «Կարօ Սողանայեան» սրահին մէջ:

Վարչութեան ատենապետ ընկ. Վարդան Գոճապապեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Մ.ի մարզիկներուն, մասնաւորաբար մարզիչ Marcus Valantinին որ սիրայօժար իր մասնակցութիւնը բերաւ ամբողջ շրջանին:

Այս առթիւ քաջալերելու համար Հ.Մ.Մ.ի մարզիկները, եղան սրտափոխ նուիրատուութիւններ:

Կը մաղթենք նորանոր յաջողութիւններ եւ վերելք Հ.Մ.Մ.ի ֆուտբոլի խումբին եւ պատասխանատուներուն:

Հ.Մ.Մ.ի 95 ամեակի առթիւ վերոյիշեալ խումբը յառաջիկայ Սեպտեմբերին պիտի մեկնի Մոնթրէալ, Գանատա, մրցելու տեղուցն Հ.Մ.Մ.ի խումբին դէմ:

### «ՌԵԱԼ ՍՈԼՔ ԼԵՅՔԸ» ՅԱՂԹԵՑ ԵՌՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ՀԵՏ

Հիւսիսամերիկեան ՄԼՍ-ի առաջնութեան հերթական տուրում «Ռեալ Սոլթ Լէյքը» ընդունեց «Վանկուվերին» եւ առաւելութեան հասաւ 55-րդ րոպէին խուան Մարտիների կողմ շնորհիւ՝ 1:0:

Հայաստանի հաւաքականի յարձակող Երուր Մովսիսեանը «Ռեալ Սոլթ Լէյքը» մեկնարկային կազմում էր եւ փոխարինուեց վերջին րոպէին:

«Ռեալ Սոլթ Լէյքը» վեց խաղից յետոյ 14 միաւորով հաւասարուեց Արեւմուտքի առաջատար «Դալլասին», որն անցկացրել է եօթ հանդիպում:

### ԱՐԹՈՒՐ ԴԱԻԹԵԱՆԸ.- «ԱՊԱՅՈՎԵՑԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳԻՐ»

Ռիոյում կայացած 2016թ. Օլիմպիական խաղերի սպորտային մարմնամարզութեան փորձամրցումում Հայաստանի ներկայացուցիչ Արթուր Դաւիթեանը նուաճել է բազմամարտի օլիմպիական ուղեգիր:

Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում Ռիոյից յայտնեց Արթուր Դաւիթեանը, որն այս մրցաշարին մասնակցելու եւ օլիմպիական ուղեգրի համար պայքարելու իրաւունքը նուաճել էր Գլազգոյում կայացած աշխարհի առաջնութիւնում:

«Հաւաքեցի 86 միաւոր եւ 100 տոկոսով օլիմպիական ուղեգիրն իմն է: Դեռ չի աւարտուել մրցումները, բայց ես եւ մարզիչս վստահ ենք, որ օլիմպիական ուղեգիրը մերն է: Օլիմպիական ուղեգրի համար անհրաժեշտ էր 85 միաւոր: Լաւ մասնակցութիւն եմ ունեցել, բոլոր վարժութիւնները շատ լաւ, առանց սխալների կատարեցի: Մարզիչս՝ Յակոբ Սերբոտեանը գոհ է իմ մրցելոյթից: Արդէն մի քանի ժամից արձանագրութեամբ եւ վերջնահաշուարկով անուանական օլիմպիական վարկանիշը իմը կը լինի:

### ԳԱՌՆԻԿ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆ՝ ԱՐԾԱԹԵ ՄԵՏԱԼԱԿԻՐ, ԴԱԻԻԹ ՍԱՖԱՐԵԱՆԸ՝ ՊՐՈՆՁԷ

Հայաստանը ներկայացնող Գառնիկ Մնացականեանն արծաթէ մետալ նուաճեց Սերբիայում ընթացող ազատ ոճի ըմբշամարտի վարկանիշային մրցաշարում՝ նուաճելով Օլիմպիական խաղերի ուղեգիր:

57 կգ քաշայինների եզրափակիչում Մնացականեանը պարտուել է բուլղարացի Վլադիմիր Դուբովին:

65 կգ քաշային Դաւիթ Սաֆարեանը բրոնզէ մեդալի համար գոտեմարտում յաղթել է աւստրիացի Մաքսիմիլիան Աուսերլէյտներին:

Աւելի վաղ ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հաւաքականի կազմում օլիմպիական ուղեգիր էր նուաճել նաեւ 125 կգ քաշային Լեւան Բերիանիձէն: Սերբիայի վարկանիշային մրցաշարում օլիմպիական ուղեգրի են արժանանում միայն ոսկէ եւ արծաթէ մետալակիրները:

### ՀՈՒՓՍԻՍԷ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ. «ՄԵՐ ԹԻՍԸ ՆՈՐՎԵԳԻԱՅՈՒՄ ՆՈՒԱՃԱԾ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՆՈՒԻՐՈՒՄ Է ՄԵՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ»



Յաղթանակա նուիրում եմ Ղարաբաղում հերոսաբար զոհուած եւ հիմա սահմանին կռուող մեր զինուորներին: Մենք նրանցով ենք ուժեղ, ու համոզուած եմ, որ նրանք էլ մեր յաղթանակներով են ուժեղ:

Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում Նորվեգիայից ասաց ծանրամարտի Եւրոպայի նորընծայ ախոջեան, 2007 թուականի Եւրոպայի ախոջեան, 2012թ. Լոնտոնի Օլիմպիական խաղերի պրոնզէ մետալակիր Հոլիսիմէ Խուրշուդեանը:

Շատ ուրախ եմ, անչափ երջանիկ եմ: Ուղղակի անբացատրելի երջանկութեան զգացողութիւններ ունեմ: Շատ լաւ եմ ինձ զգում՝ ինչպէս չեմպիոնն է իրեն զգում: Աւելին ասեմ՝ 20 օրում՝ երկու անգամ եմ չեմպիոն դառնում, եւ հենց այդ պատճառով ուրախութիւնս կրկնակի է ու աննկարագրելի: Ամէն մտտեցմանը բարձրանալիս տղաս էր մտքումս, ու ինքս ինձ ասում էի, որ նրա համար անպայման պէտք է բարձրացնեմ, քանի որ հաստատ այս պահին հեռուստացոյցի առջեւ նստած ինձ է հետեւում:

### ԵՐՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՄ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅԱՂԹԵՑ ԹԻՄԱՅԻՆ ՀԱՇՈՒԱՐԿՈՒՄ

Հայաստանի հաւաքականը յաղթեց Նորվեգիայի Ֆորդէ քաղաքում կայացած ծանրամարտի Եւրոպայի առաջնութիւնում:

Կանանց ու տղամարդկանց Հայաստանի թիմերը միասին նուաճեցին 18 մետալ՝ 8 ոսկէ, 7 արծաթէ եւ 3 պրոնզէ:

Երկրորդ տեղը գրաւեց Թուրքիայի թիմը (8 ոսկի, 2 արծաթ, 2 պրոնզ), իսկ լաւագոյն ետեակը եզրափակեցին ուկրաինացիները (6 ոսկի, 3 արծաթ, 2 պրոնզ):

Յիշեցնենք, որ կանանց Հայաստանի հաւաքականը պատմութեան մէջ առաջին անգամ թիմային հաշուարկում գրաւել էր առաջին տեղը, իսկ տղամարդկանց թիմը գիշեց միայն ուսաներին եւ երկրորդն էր:

Նորվեգիայում Հայաստանի հաւաքականից Եւրոպայի ախոջեանի կոչումը նուաճել էին նաեւ Անդրանիկ Կարապետեանն (77 կգ), Նազիկ Աւդալեանը (69 կգ) եւ Հոլիսիմէ Խուրշուդեանը (+75 կգ), Տիգրան Մարտիրոսեանը (77 կգ) եւ գերծանր քաշային Գոռ Մինասեանը դարձան փոխախոջեան, իսկ 19-ամեայ Սիմոն Մարտիրոսեանը (105 կգ) արժանացաւ պրոնզէ մետալի:

### ԿԱՐԱՊԵՏ ԶԱԼԵԱՆԸ ՅԱՂԹԵՑ ԹՈՒՐՔ ԸՄԲԻՇԻՆ ԵՒ ՆՈՒԱՃԵՑ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼ

Գիւմրեցի Կարապետ Զալեանը պրոնզէ մետալակիր դարձաւ Սերբիայում շարունակուող յունահռոմէական ոճի ըմբշամարտի օլիմպիական վարկանիշային մրցաշարում: Այս վարկանիշային մրցաշարում օլիմպիական ուղեգրի են արժանանում միայն ոսկէ եւ արծաթէ մետալակիրները:

Պրոնզէ մետալի համար գոտեմարտում Հայաստանի ներկայացուցիչը 3:0 հաշուով յաղթեց թուրք էմրաճ Սուլէյմանին:

Սերբիայում Ապրիլի 16-ին պայքարի մէջ էին մտել ազատ ոճի 74 կգ եւ 86 կգ քաշային ու յունահռոմէական ոճի 75 կգ եւ 85 կգ քաշային ըմբիշները:

Յունահռոմէականների մրցաշարում 85 կգ քաշային Մաքսիմ Մանուկեանը յաղթանակով մեկնարկելուց յետոյ 1/4 եզրափակիչում պարտուել էր բուլղարացի Նիկոլայ Բաչրակովին եւ լքել պայքարը:

Ազատ ոճայինների մրցաշարում 74 կգ քաշային Սուրէն Խաչատրեանը, յաղթելով իտալացի ու աւստրիացի ըմբիշներին, դուրս էր եկել կիսաեզրափակիչ, որտեղ ժամանակից շուտ պարտուել էր ատրպէյճանցի Զաբրալի Հասանովին: Բրոնզէ մեդալի համար գոտեմարտում էլ Խաչատրեանը պարտուել է մոլդովացի ըմբիշին: Հայաստանը ներկայացնող Մուսա Մուրթազալիեւը անչափ էր մեկնարկել 86 կգ քաշայինների պայքարում եւ դուրս մնացել պայքարից:

Յիշեցնենք, որ ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հաւաքականի կազմում Ապրիլի 14-ին օլիմպիական ուղեգիր էր նուաճել Գառնիկ Մնացականեանը, որը երկրորդ տեղն էր գրաւել 57 կգ քաշայինների պայքարում:

Մրցաշարի վերջին օրը՝ Ապրիլի 17-ին, պայքարի մէջ կը մտնեն ազատ ոճային էրզար Ենոքեանը (97 կգ) եւ յունահռոմէական ոճի ըմբիշ էրզար Խաչատրեան (130 կգ):



### ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵՄ ՁԵԶԻ

Շարունակում է 7-էն

Էջ միածին առաջնորդեց, ուր ձեռնադրուեցայ հոգեւորական՝ ձեռամբ երջանկայիշատակ վազգէն Ա. Կաթողիկոսի, ճակտիս վրայ օծումիս հետ ընդունելով անջնջելի նորինքնութիւն, իսկ հուլիսեան մէջ՝ վսեմ եւ մշտնջենաւոր կոչում մը:

Այդ օրերուն էր, երբ մօրաքոյրս այցի եկած էր ինծի: Ես բոլորովին ի գուր յանդգնութիւնը ունեցայ իրեն ուղղելու ջրուտ հարցում մը, թէ ան ինչո՞ւ կ'անդամակցի Երեւանի հայ բողոքական համայնքին ու կը յաճախէ անոր ժողովարանը: Մօրաքոյրս բարեհամբոյր ժպիտով մէջ մը ինծի նայեցաւ ու ըսաւ. «Տղա՛ս, Տիրոջ առջեւ մենք բոլորս մէկ ենք: Մենք Երեւանի օրերուն մեր դարաւոր թշնամին մեզի չհարցուց թէ մեր մէջ ո՞վ է առաքելականը, կաթողիկէն կամ բողոքականը: Ան ջարդեց անխտիր, քանի որ բոլորս քրիստոնէայ հայեր էինք. ան ամէնքս դարձուց որք եւ հայրենիք վտարանդի: Ահա, երբ ոստիւր նենգ տարբերութիւն չի դնէր մեր մէջ, ապա ինչո՞ւ մենք, որ մէկ Տիրոջ եւ հաւատքի գաւակներ ենք, խտրականութեան կ'ենթարկենք զիրար, անհաշտ բաժանումներ ստեղծելով ազգին մէջ: Քրիստոնէութիւնը հաւատքի եւ սիրոյ դաս է, որ անձի մը հոգիին ու սրտին մէջ կրնայ աճիլ եւ պտուղ տալ առանձնապէս ազատութեան շնորհած պայմաններով: Իւրաքանչիւր քրիստոնէայ անձ ասով է որ կը սնի եւ կ'ուժաւորի, բարոյական կատարելութեամբ կ'օժտուի, ու իր մէջ կը կերտէ մաքուր խիղճ ու ազնիւ նկարագիր մը: Մոլեռանդութիւններն ու ծայրայեղութիւնները, ըլլան անոնք գաղափարախօսական, վարդապետական կամ կրօնական, կրօնքին պարզեւած ճիշդ այս մեծագոյն արժէքը՝ անոր հոգին եւ ընտրելու ազատութիւնը կը կաշկանդեն եւ, այսպէս, հաւատացեալ անհատը կը գրկեն մշտապէս հողորդակցելի իր Տիրոջ եւ Արարչին հետ:

«Երեւանի մէջ ես կ'այցելեմ նաեւ հայ առաքելական եկեղեցիները, բայց որովհետեւ փոքր տարիքիս Պէյրութի որբանոցին մէջ բողոքական դաստիարակներու խնամքը վայելած եմ, կը սիրեմ անոնց պարզ աղօթքներն ու դիւրամատչելի աշխարհաբարով կատարուող հոգեւոր երգերը: Այո, Հայ Եկեղեցւոյ աղօթքներն ու շարականները թէպէտ գեղեցիկ են ու ներշնչող, բայց զրաբարին պատճառով շատ քիչ բան կը հասկնամ անոնց երգումները թեմէն»:

Հետաքրքրական իրողութիւնն այն է, որ մօրաքոյրս, ինչպէս նաեւ մօրեղբայրս ու մայրս, հակառակ որբանոցին մէջ իրենց ստացած բողոքական կրթութեան, բոլորն ալ պատկուած են Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ, եւ յետագային իրենց գաւակներն ալ կնքել տուած են անոր սրբազան ծէսին եւ աւանդութեանց համաձայն: Եւ այս փաստն է ահա, որ Երեւանի Քիւնցլէրի եւ իր կնոջ, ինչպէս նաեւ միւս մարդասէրներուն բարոյական արժէքը ա՛լ աւելի կը բարձրացնէ, եւ ստոյգ պատիւ կը բերէ իրենց երկրին, ազգին ու կրօնական հաստատութիւններուն: Արդարեւ, անոնք այդ հազարաւոր եւ ցաւատանջ որբերուն մարդորական նկրտումներով չմօտեցան, այլ, Աւետարանի օրինակին համաձայն, որպէս նոր Բարի Սամարացիներ անոնց վրայ հոգա-

ցին գերազանցապէս մղումով իրենց մաքուր հաւատքին եւ մարդասիրական անկեղծ զգացումներուն:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն, երբ խօլինքնակործանումը եւ մահը կը թեւածէին այդ գեղածիծաղ երկրին վրայ, շատ մը ուրիշ լիբանանահայերու նման մօրեղբայրս ալ բռնեց արտագաղթի ճամբան, եւ 1987 թուականին իր ընտանիքին հետ ընդմիջտ հաստատուեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Տալլաս քաղաքը: Այցելութեան մը առթիւ հոն բարեբախտութիւնը ունեցայ մկրտելու իր անունով Գրիգոր անուանակոչուած թոռնիկը, իրեն հետ բաժնելով իր ընտանիքի աճին անսահման ուրախութիւնը: Սա պահուստ անգամ մը եւս կը նայիմ Պէյրութի գաղթականներու ճամբարին մէջ առնուած հէզ որբերու նկարին. կը դիտեմ մօրեղբօրս՝ երբեմնի այդ խեղճ տղուն տխուր դէմքը: Բայց տարօրինակ, այս անգամ յուզումը չէ որ պիտի ընկճէր զիս, այլ՝ հիացումի խանդավառող զգացում մը պիտի համակէր հուլիսեան ամբողջ: Հիացում՝ իր եւ իրեն պէս հայ սերնդակիցներու վերապրելու քաջութեան վրայ, հիացում՝ կործանարար սեւ ուժերուն դէմ անոնց մղած յաղթական պայքարին վրայ, հիացում՝ անոնց կրանիտեայ հաւատքին եւ պայծառ լաւատեսութեան վրայ, ոգեւին կառչած մնալու կեանքի անընդմիջելի եւ անկործանելի խորհուրդին, այլ՝ ճակատագրին անողոք հարուածներէն ետք վերստին կարենալ ոտքի կանգնելու, ունենալու անդիմադրելի վճռակամութիւնը ոչ միայն հիմնելու իրենց հայաշունչ ընտանիքը, այլ նաեւ նոր սերունդներին փոխանցելու ազգին ոչնչացումէ ու կորուստէ փրկուած աւանդը:

1915 թուականին հայ ժողովուրդին դէմ իրականացուած Յեղասպանութեան, ինչպէս նաեւ հետեւելու տարիներուն, նամանակահատիկ 1920 թուականի Հոկտեմբերին Հաճընի մէջ թուրք ազգայնականներու կատարած ահաբեկող կոտորածին եւ Կիլիկիոյ հայաթափումին հետեւանքով հայրենազուրկ դարձաւ նաեւ ի՛մ ընտանիքս, գրկուելով ապրուստի եւ գոյատեւելու իր բոլոր միջոցներէն: Յեղասպանութեան յափշտակեց իրմէ արժանավայել կեանք մը ապրելու իրաւունքը, բայց շնորհիւ մարդասիրական այն սրտաբուխ օժանդակութեան, որ ցուցաբերեց գուհիցերիացի ժողովուրդը կարեւոր հայրութեան նկատմամբ, վերապրողներուն հետ նաեւ ընտանիքիս շնորհուրեցաւ գոյատեւելու եւ հետզհետէ բազմաճանաչու եզակի բախտը: Հակառակ ճակատագրին հասցուցած դաժան հարուածներուն, երբեմնի մեր մեծ ընտանիքին մնացորդացը իր աշխատանքով եւ ճակտին արդար քիրտով ապրեցաւ իմաստալից ու լեցուն կեանք մը: Այսօր ան կ'աճի ու կը զարգանայ Հայրենիքի եւ Սփիւռքի տարբեր քաղաքներուն՝ Երեւանի, Դամասկոսի, Պէյրութի, Տալլասի, Լոս Անճելէսի, Թորոնթոյի, Ֆրանքֆուրթի եւ ժընեւի մէջ:

Իբրեւ մին երբեմնի մահուան դատապարտուած այս ընտանիքի ժառանգորդներէն, միանգամայն տեղին կը գտնեմ այստեղ համակերպարարութեամբ գուհիցերիացի ժողովուրդին եւ իր հայասէր բարեգործներուն ջերմ սրտիս սիրոյ խորութեանն անկեղծօրէն ըսելու՝ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵՄ ՁԵԶԻ:

Շարունակում է 9-էն

Հայը գիտակից է, ուր որ գտնուի, իր միջավայրը վերելքի եւ խանդավառ կեանքի միջավայրը յարմարեցնելու, նոյնպէս ալ կը կռուի որպէսզի պատերազմէն ետք, վերստին յաղթանակն է ապրելու եւ գոյատեւելու միջավայրը, մահը արգելք չէ կեանքը դադարեցնելու, շարունակողներ կան:

Եղեւնի 101 տարի անցկացումէն ետք հայութիւնը աւելի պիտի ամրացնէ ազգային եւ հայրենասիրական կազմակերպութեան մարզերը՝ ոչ միայն գինուորական գետնի վրայ, այլ՝ նաեւ մշակութային, արուեստի եւ յատկապէս տնտեսական մարզերու մէջ:

Աշխարհայնացումի մոլորութիւններու դարաշրջանին, այս կենսական մարզերը կ'արտացոլացնեն մեր իւրաքանչիւրութիւնը եւ «բազմերակներն» են գոյատեւելու եւ յաղթանակելու տնտեսական վերելքը կը պահանջէ որ մեր հայրեն-

նիքի մէջ, նաեւ Ղարաբաղի մէջ ու նաեւ սփիւռքեան հայ գաղութներու մէջ ուժեղ թափ տրուի արդիւնաբերութեան եւ այդ արդիւնաբերութեան հասոյթները շահագործուին ազգայնական եւ զանգուածային ծրագիրներու, պետականութեան եւ համախմբուածային շահերու հեռատեսութեամբ, որովհետեւ այս շահերն են որ պիտի ապահովեն մեր տարծքային պահանջատիրութիւնը թէ Ղարաբաղի եւ թէ՛ Արեւմտահայաստանի շրջաններու համար:

2016-ին կը նշենք Ապրիլ 24-ի Եղեւնի 101-րդ ամեակը: Զանգուածային ջարդի չենք ենթարկուիր, սակայն մեր դէմ ունինք նոյն մտայնութեամբ անտառային վայրագութեան կրքոտ թուրքը, եւ իր «խրտուիլակ» ազերին, միջազգային քաղաքական խոհանոցի ծածուկ քաղաքականութիւնները, հետեւաբար տակաւին վտանգի առջեւ ենք, ըլլանք արթուն, միասնակամ եւ գործունէս...:

### ԱՆԽՈՆՁ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏԸ

Շարունակում է 10-էն

կան հայրենիքին մէջ, իսկ Հրեաները այլ երկիրներու մէջ: Հայերու պարագային չարագործութիւններուն մէջ զանգուածային մասնակցութիւն ունեցած է նաեւ հասարակ ժողովուրդը, իսկ Հրեաներու Ողջակիցումը յատուկ յանցագործներու կողմէ իրականացուած է: Հրեաները փոխհատուցում ստացած են, իսկ հայ գոհերը մոռցուած են: Ի վերջոյ Թուրքիան կ'ընդունի՝ Հայոց Ցեղասպանութիւնը: Պ. Կ'ընդունի եթէ տկարանայ... եթէ յաջողի մտնել Եւրոմիութիւն, ապա նաեւ ստիպուած կ'ըլլայ իրականցնել ժողովրդավարական սկզբունքներ... եթէ Հայաստանի կառավարութիւնը պաշտօնապէս յայտարարէ «մենք հատուցումէ կը հրաժարինք»...

Հ. Հայ եւ թուրք պատմաբաններու երկխօսութեան մասին...

Պ. Ժամանակի անիմաստ վատնում:

Հ. Հայ-թրքական արձանագրութիւններուն մասին...

Պ. «Ձեզ կ'ուզեմ իմանալ... շատախօսութիւն եւ թեթեւոյիկութիւն... թրքական խորամանկութիւն մըն է... իսկ կը իսկողան մեզի հետ:

Հ. Կա՞նք արդեօք երկտասարդ պատմաբաններ որ կը շարունակեն այս գործը եւ կը հետապնդեն Հայոց Ցեղասպանութեան հարցը:

Պ. Ասպարէզի մտահոգութիւնը կայ... կան շատեր որոնք կը սկսին եռանդով, ապա կը փոխեն իրենց

ճիւղը: Հ. Ի՞նչ կ'ուզեիք բնիկ մեր հայ երիտասարդութեան:

Պ. Հասկնալ եւ գնահատել հայ ժողովուրդը եւ անոր կրած տառապանքը, նուիրուածութեան զգացում մը ունենալ եւ գոհողութեան պատրաստ ըլլալ: Օգտակար ըլլալ հայութեան եւ չտարուիլ միայն անձնական շահերով:

Մայիս 27, 2011-ին, Վահագն Տատրեանի ծննդեան 85-ամեակին առիթով, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան կը գրէր իր շնորհաւորական ուղերձին մէջ «Դուք մեր ժամանակների մեծագոյն հայ գիտնականներից էք, ում գիտական գործունէութիւնն ու աշխատանքներն ունեն մեծ հասարակական-քաղաքական հնչեղութիւն: Ձեր աւանդը Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ ժխտողականութեանը փաստարկուած ու ծանրակշիռ հակահարուածներ հասցնելու գործում շարունակաբար տալիս է իր տեսանելի արդիւնքը»:

Երախտապարտ ենք հայ ժողովուրդի արժանաւոր գաւակին, «Մինչեւ ուղիս ու ծուծը հայ» մեծ գիտնականին իր նուիրումին, անխոնջ աշխատանքին ու Հայոց Ցեղասպանութեան փաստարկութեան ծիրէն ներս իր անգնահատելի ներդրումին համար: Երանի գտնուին իր աւանդը շարունակողներ:

Ձեր 90-ամեակը շնորհաւոր, մեծարգոյ փորձեսոր: կը մաղթենք երկար կեանք եւ ամենայն բարիք:

**OFFICE SPACE FOR RENT  
IN PASADENA**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ**

**1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104**

**Գրասենյակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
ճեղքաբացուողներն հեռաձայնել՝  
(626) 398-0506**

### ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** **Մարտ 21-Ապրիլ 19**  
 Նեղութիւններուդ հակազդելու շատ մը ձեւեր ունիս, որոնք բոլորն ալ կ'օգտագործես պէտք եղած պարագային: Անարդարութեան դէմ երբեք լուռ չես մնար եւ իրաւունքներդ լաւ պաշտպանել գիտես: Լսէ շուրջիններուդ խնդրանքները եւ տեղ տուր անոնց կեանքդ ներս: Բախտաւոր թիւերդ են: 10,15,22,28,31

**ՅՈՒԼ** **Ապրիլ 20-Մարտ 20**  
 Անձի մը նկատմամբ մեծ արհամարհանք ունիս եւ կը փորձես սպառնալ իր տնտեսական իրավիճակին: Այս մէկը կրնայ ազդել շրջանակիդ մէջ ունեցած անունիդ եւ պաշտօնիդ: Առեւտուրի մէջ յատուկ ես եւ լեզուանի: Բախտաւոր թիւերդ են: 4,7,18,27,32

**ԵՐԿՈՒՐԵԱԿ** **Մարտ 21-Յունիս 20**  
 Դիմացիմդ գրաւելու եւ համոզելու մէջ շատ յաջող ես եւ շատերուն որոշումները կախեալ են ըսածներէդ: Յաջողութիւնդ մեծ աղմուկ պիտի բարձրացնէ շրջանակիդ մէջ եւ շատերուն նախանձի առարկան պիտի ըլլաս: Բախտաւոր թիւերդ են: 3,10,20,25,30

**ԽԵՑԳԵՏԻՆ** **Յունիս 21-Յուլիս 22**  
 Կարգ մը իրողութիւններ կան գործիդ մասին, որոնք պիտի յայտնաբերուին այս շաբաթ, փորձէ իրաւունքդ լաւ պաշտպանել: Քանի մը տեսակցութիւններ պիտի ունենաս շաբաթավերջին, որոնք քեզ աւելի պիտի մօտեցնեն այդ անձերուն: Բախտաւոր թիւերդ են: 7,14,22,26,34

**ԱՌԻԲԾ** **Յուլիս 23-Օգոստոս 22**  
 Նիւթական շահերդ կրնաս աւելցնել, եթէ աւելի ջանք թափես գործիդ: Կարելիութիւն կայ որ քիչ մը վշտանաս այս շաբաթ, սակայն մեղը չես ինկած եւ շուտով կրնաս սփոփել դուն քեզ: Առիթը շատ յարմար է հիմա ձգձգած գործերդ ամբողջացնելու: Բախտաւոր թիւերդ են: 9,11,24,31,35

**ԿՈՅՍ** **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**  
 Միշտ բարեկամներդ կը քաջալերես որ անոնք չփախան երբ մեղութեան մէջ են: Ցանկութիւններդ յաջողցնելու համար շատ սուղ գին կը վճարես, նիւթական եւ ֆիզիքական: Ժամանակն է որ քիչ մը քաշուիս եւ աւելի զուսպ ըլլաս: Բախտաւոր թիւերդ են: 1,16,28,29,33

**ԿՇԻՈՔ** **Սեպտեմբեր 23-Յոկտեմբեր 22**  
 Զգացումներդ արտայայտելու տարբեր ձեւեր կը որդեգրես, երբ տարբեր միջավայրի մէջ ըլլաս: Ուրիշը ծաղր ընել շատ կը սիրես, սակայն նպատակդ շատ բարի է եւ հոգիդ մաքուր: Փորձութեան մը ընթացքին շատ լաւ գիտես դուրս գալ եւ չմտնուիլ չարին: Բախտաւոր թիւերդ են: 3,13,26,30,34

**ԿԱՐԻՃ** **Յոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**  
 Եկամուտդ բաւական լաւ ըլլալուն՝ շատեր կը փորձուին օգտուիլ քեզմէ, մի խաբուիք անոնցմէ: Ընտանիքիդ անդամները քեզի միշտ ուրախութիւն կը բերեն հակառակ տիրող աննպաստ պայմաններուն: Չարքեր ունիս, որոնք զարմանք կը պատճառեն քեզի եւ չես գիտեր անոնց պատասխանը: Բախտաւոր թիւերդ են: 7,12,21,29,35

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**  
 Ընտրած վերաբերմունքդ ուրիշներու նկատմամբ շատ մեծ հետեւանքներ կրնայ ունենալ, որոնց դուն պատրաստ չես, ըստ այնմ առնելու ես քայլերդ: Սիրելիէ մը բաժնուելուդ համար մի բարկանար եւ ատելութեամբ մի լեցուիք: Բախտաւոր թիւերդ են: 2,15,16,28,30

**ԱՅԾԵՂՋԻԻՐ** **Դեկտեմբեր 22-Յունուար 19**  
 Այս աստղի տակ ծնած ես եւ սիրող շատ մաքուր է, սակայն բարկութիւնդ զսպելու անկարող ես: Կարողութիւններդ շատ են, մի անդամալուծեր զանոնք՝ այլ բարեգործութեամբ օգնէ կարօտեալներուն: Կեանքիդ մէջ մեծ փոփոխութիւն մը պիտի նորոգէ զգացումներդ: Բախտաւոր թիւերդ են: 2,17,23,30,34

**ԾՈՎԱՆՈՅՇ** **Յունուար 20-Փետրուար 18**  
 Կեանքիդ կարեւոր հանգրուաններէն մէկուն պիտի հասնիս, երբեք մի զարմանար թէ ինչպէս գտար այդ յաջողութիւնը: Շատ սիրալիր եւ ազնիւ անձ մըն ես եւ սակայն միշտ սխալ կը հասկցուիս: Կեցուածքդ փոխէ եւ հաստատ մնացիր որոշումներուդ վրայ: Բախտաւոր թիւերդ են: 6,13,24,27,35

**ՉՈՒԿ** **Փետրուար 19-Մարտ 20**  
 Այնքան ատեն որ առիթդ կը ներէ, կը սիրես աշխատիլ: Կեանքդ կրնայ երբեմն դժուար ըլլալ՝ սակայն միշտ ուրախ տրամադրութեամբ կը ներկայանաս բոլորին դիմաց: Զգացումներդ դուն քեզի պահելով՝ հոգեկան վիճակդ կը վատթարացնես: Բախտաւոր թիւերդ են: 11,25,26,31,32

### ՊԵՏԱԿԱՆ ԶԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ ԿԵՆՍԱԿԱՆ ԶՐԱՍԱՅԱԿԱՆ

Շարունակուած էջ 2-էն

զուլթեան եւ ընդհանրապէս օպերատիւ կառավարման աշխատանքներ:

Անհրաժեշտ է սահմանամերձ բնակավայրերում քաղաքացիական պաշտպանութեան հրատապ, մասշտաբային միջոցառումներ, ապաստարանների պատրաստում, ենթակառուցումները զարգացում, որոնք թոյլ կը տան հնարաւորինս արագ արձագանքել արտակարգ դրութեանը եւ հարկ եղած դէպքում կա'մ օգնութեան հասնել քաղաքացիներին, կա'մ պարզապէս էականացնել նրանց առանց կորուստների: Արտակարգ դրութեան պէտք է բերուի սահմանամերձ բնակավայրերի կեանքի ուժիւնը, այդ թւում՝ տնտեսական առօրեան: Ընդհանրապէս, պէտք է այդ փոփոխութիւնը, այդ վերանայումը կատարուի երկարաժամկէտ հաշուարկով, քանի որ ընդհանուր առմամբ ռիսկերը երկարաժամկէտ են, եւ դա ախնջայտ է:

Հայաստանում սահմանամերձ բնակավայրերի տնտեսական պլանաւորումը պէտք է իրականացուի արտակարգ դրութեան տարիների հաշուարկով, հետեւաբար կենսագործունէութեան հնարաւորութիւնները պէտք է վերափոխուեն «համապատասխանեցուեն» «պաշարման» ուժիւնին: Իհարկէ, այդ ուժիւնը նախեւառաջ ենթադրում է Հայաստանի կենտրոնական հատուածների ու մասնաւորապէս Երեւանի հետ տարաբնույթ արագ եւ օպերատիւ հաղորդակցութեան ապահովում, կապի բոլոր միջոցներով՝ համացանցից մինչեւ աւտոձանապարհներ: «Պաշարումը» պէտք է լինի տրամաբանութիւն, բայց ոչ ֆիզիքական վիճակ: Ֆիզիքական վիճակով ամէն ինչ պէտք է լինի հակառակը, եւ սահմանամերձ բնակավայրերը իրենց թիկունքում աւելի տաք պէտք է զգան Երեւանի ու մնացեալ քաղաքների եւ բնակավայրերի շրջանը: Բնականաբար, այդ ամէնը կը պահանջի տնտեսական մեծ ռեսուրսներ, ինչն էլ իր հերթին կարող է ապահովուել միմիայն երկրի ներսում կառավարման արդիւնաւէտութեան եւ արդարացիութեան բարձրացման շնորհիւ, համակարգային իրականութեան ներքին շնորհիւ, որոնք լիովին կը փոխեն թէ՛ բարոյահոգեբանական միջոցառում, թէ՛ սոցիալ-տնտեսական պատկերը, թէ՛ երկրի իմիջը արտերկրում, թէ՛ ներդրումային գրաւութիւնը եւ թէ՛ քաղաքական կշիռը: Ամէն ինչ չափազանց պարզ է՝ պատերազմը սողացել է սահմանի «փշալարի» տակից, որքան ուշ արձանագրենք այդ իրողութիւնը, այնքան այն կարող է վտանգաւոր դառնալ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

### ՄԵԿ ՐՈՊԵ ԼՈՌԻԹԻՒՆ

Շարունակուած էջ 20-էն

Ահաւասիկ համայն հայութեան Աղօթք առ երկինք, Սրտերում խորհուրդ, Չարիւր տարիների յոյսով անկորում Արդարութեան պահանջն են բարձրաձայնում:

Ահա՛, ազգովին միատեղուած Անցեալի յիշատակներով անմոռուկ, Նախագահ, իշխանաւոր, Չոյզ վեհափառներ հայրապետական, Եպիսկոպոսաց փառանք փառահեղ, Ժողովրդի սրտով գօտեպնդուած, Տրդատ Արքայի Դռան խորանում, Չեր՛ Բիւր Նահատակներ, Քրիստոսադաւան, Կարգն է կատարուում Սրբադասման, Դո՛ թոյլով պաշտօնաւորների՝ Աշխարհի բարեկամ նախագահների, Քոյր եկեղեցիների կրօնապետներ, Ներկայացուցիչներ:

Նահատակներ՝ մեր քոյր ու եղբայրներ, Անմեղ գոհ դարձած ճիւղ հրէշքում աւելի տաք պէտք է զգան Երեւանի ու մնացեալ քաղաքների եւ բնակավայրերի շրջանը: Բնականաբար, այդ ամէնը կը պահանջի տնտեսական մեծ ռեսուրսներ, ինչն էլ իր հերթին կարող է ապահովուել միմիայն երկրի ներսում կառավարման արդիւնաւէտութեան եւ արդարացիութեան բարձրացման շնորհիւ, համակարգային իրականութեան ներքին շնորհիւ, որոնք լիովին կը փոխեն թէ՛ բարոյահոգեբանական միջոցառում, թէ՛ սոցիալ-տնտեսական պատկերը, թէ՛ երկրի իմիջը արտերկրում, թէ՛ ներդրումային գրաւութիւնը եւ թէ՛ քաղաքական կշիռը: Ամէն ինչ չափազանց պարզ է՝ պատերազմը սողացել է սահմանի «փշալարի» տակից, որքան ուշ արձանագրենք այդ իրողութիւնը, այնքան այն կարող է վտանգաւոր դառնալ:

Ամբողջ Հայաստանը պատերազմական կամ արտակարգ դրութեան անհրաժեշտութիւնից զերծ պահելու համար պէտք է ամբողջ Հայաստանի համար խնդիր դնել Արցախի եւ Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում արտակարգ կառավարման արդիւնաւէտ իրականացմանը նպաստելը: Դրա շնորհիւ նաեւ հապէս կարող է բարձրանալ Ատրպէյճանին զուտ ռազմական միջոցներով զսպելու առանց այդ էլ շօշափելիօրէն բարձր, բայց օբիեկտիւօրէն ինքնին անբաւարար գործօնի արդիւնաւէտութիւնը: Մինչեւ Հայաստանի իշխող համակարգը որակապէս, խորքից չփոխի իր իսկ վարքը Հայաստան պետութեան հանդէպ, այդ վերաբերմունքը վերջապէս չվերածի իրապէս պետական վարքի, եթէ իհարկէ՛ ունակ է դրան, անհնար կը լինի հիմնովին փոխել Պաքուի սանձարձակ վարքը:

ներին: Դուք, հայ կրօնի հաւատքին անյողողող Աղօթք շուրթերին աղերսագին, Դէպի Նաչեւալութեան Գողգոթան քայլեցիք, Աւանդ թողնելով, կտակ անելով արեան կանչը, Միասնականութեան հօգի խորհուրդը, Ցեղասպանի դատապարտումը:

Մեր պաշտելի նահատակներ, Չարիւրամեա՛կ, բայց ի՛նչ փառաշուք, Չայ Աշխարհը լռեց մի րոպէ, Չեր անմահ յիշատակը ոգեկոչելով Դինգ-դանգ, դինգ-դանգ... Չարիւր քաղցրահնչիւն հարուածներով Դողանջեցին հայոց եկեղեցիները Եջմիածնից դէպ յանուր աշխարհ, Խորհրդանշելով հայոց նախճիրը, Ողբերգութիւնը, ցաւն ու վիշտը, Յառնումն ու վերածնունդը, Պայքարն ու պահանջատիրութիւնը, Ի լուր աշխարհին ասելու՝ Թարմ է մեր նահատակների Անմահ յիշատակը անմոռանալի եւ երազանքը նրանց Սերունդներին աւանդուած Կենսաւորելու:

### ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ



Մարուսակուած էջ 1-էն

Կազմակերպիչ Մարմնի անու- նով բացման խօսքը կատարեց օր- ունան հանդիսավար եւ Նոր Սե- րունդ Մշակութային Միութեան ատենապետ Յարութ Տէր Դաւի- թեան: Ան խօսելով Հրանդ Տինքի առասպելական կեանքի մասին մաս- նաւորաբար շեշտեց հետեւեալը. «...տարիներ պէտք է անցնին որ ժողովուրդը կարենայ տեսնել ու գնահատել այդպիսիներու իրական արժէքը: Հանճար մը կար մեր կողքին, որ հիմա հեռացած է: Իսկ լաւագոյն ձեւն այդ հեռացումը սպալու անոր արժէքին ըմբռնումն է, անոր աւանդին ու պատգամնե- րուն վառ պահումն է, անոնց գոր- ծադրումը մեր կեանքին մէջ, ինչ- պէս նաեւ ժողովրդականացումով... Հրանդ Տինք կը կրկնէր որ հիմնա- կան փոփոխութիւնները անոնք են որ կու գան ներսէն դէպի դուրս, համոզումով եւ ոչ թէ դուրսի ոյժի պարտադրումով... Հրանդ Տինքի հեռացումը սպալու լաւագոյն կեր- պը իր բացած ճանապարհով քա- լելն է»:

Ներկաները հետաքրքրու- թեամբ դիտեցին Հրանդ Տինքի կեանքի տարբեր հանգրուանները ցուցադրող տեսաերկը մը (պատ- րաստութիւն Պ. Չաքարեանի եւ Յ. Տէր Դաւիթեանի):

Այնուհետեւ տեղի ունեցաւ Հրանդ Տինքի նուիրում երաժշ- տական մաղթերգը՝ օրաթորիոն մասնակցութեամբ աւելի քան 50 հոգիներէ բաղկացած համագաղու- թային երգչախումբի եւ նուագա- խումբի, դեկավարութեամբ վաս- տակաշատ խմբավար Ստեփան Կէ- օզիւմեանի: Իսկ երաժշտական բաժ- նի համակարգողն էր Արտաշէս Գարթալեան:

Օրաթորիոն կը բաղկանար 12 մասերէ («Հերոսի Անկումը», «Անս- պասելի Մահ», «Մեր Կորուստը», «Չարթնում», «Մեր Երկիրը», եւ այլն): Գլխաւոր մենակատար- ներն էին անուանի արուեստագէտ- ներ Ռաֆֆի Քէրպպեան (թենոր), Ալենուշ Եղնազար եւ Նատիմա Աւագեան (սփորանօ), որոնք կա- տարողական բարձր արուեստով մեկնաբանեցին իրենց վիճակուած երգերը:

Օրաթորիոյի շարադրանքը կամ թեքստը (լիպրեթթօ) գրած էր պոլսահայ ծանօթ արուեստագի- տուհի եւ «Ակօս» թերթի աշխա- տակցուհի Պերճուհի Պէրպէրեան:

Երանի թէ յայտագիր գրքոյկին մէջ այդ շարադրանքը գրուած ըլլար եւ կամ առանձնատիպով մը ներկաներուն բաժնուած ըլլար, որ- պէսզի աւելի հաղորդական ըլլար կապը երգչախումբին եւ ունկնդիր հասարակութեան միջեւ...:

Իսկ ինչ կը վերաբերի երգա- հան եւ երաժիշտ ու բազմաթիւ պարզեւներու արժանացած Մա- ժակ Թոշիկեանին՝ կը գնահատենք իր այս նախաձեռնութիւնը եւ կրնանք անվարան ըսել թէ տիտա- նական մեծ գործ մըն էր նման օրաթորիոյի մը ձեռնամուխ ըլլա- լը: Արդարեւ, հազուադէպ երեւոյթ է հայ երաժշտագէտներու կողմէ օրաթորիոներու յորինումը նուիր- ուած անձերու կամ այլ երեւոյթնե- րու:

Այստեղ պիտի չուզէինք Տին- քի նուիրում օրաթորիոյի երաժշ- տական յղացման եւ կատարողական արուեստի գնահատականն ընել, գայն կը ձգենք արուեստի քննա- դատներուն: Այսուհանդերձ կ'ու- գենք փոքր նշում մը կատարել, որ շատ մը ներկաներուն ալ կարծիքն է: Ատիկա հետեւեալն է, մեր լսողու- թեան համար խորթ էր թմբուկի միապաղաղ եւ գրեթէ միօրինակ բայց յարատեւ ու թմբային լանգա- ւորումները որոնք յաճախ աւելի բարձր կը հնչէին քան ընդհանուր երաժշտութիւնը...:

Յայտագրի աւարտին իրաւա- բան էտովին Մինասեան կազմակեր- պիչ յանձնախումբին անունով շնոր- հակալութիւն յայտնեց ներկանե- րուն եւ յատկապէս օրուան յայ- տագրի մասնակիցներուն: Ան միա- ժամանակ վերաբեւորումը կա- տարեց նահատակ գրագէտի հայրե- նանուէր եւ ազատատենչ գաղա- փարներուն:

Հանդիսականներուն համար հաճելի անակնկալ մը եղաւ երբ յայտարարուեցաւ Հրանդ Տինքի այրիին՝ Տիկ. Ռաֆէլ Տինքի ներ- կայութիւնը: Ան յտանկայս դիմա- ւորուեցաւ բոլորին կողմէ եւ բեմ բարձրանալով յուզումով խօսեցաւ իր ամուսնոյն մասին եւ շնորհա- կալութիւն յայտնեց սոյն յիշատա- կելի միջոցառումին համար եւ ըսաւ «Այս ստեղծագործութիւն- ները իր ցաւը կը յայտնեն: Վարձ- քերնիդ կատար»:

Յաջող ձեռնարկ մըն էր: Կը շնորհաւորենք Պոլսահայ Միութիւնն ու գործակից կազմակերպութիւն- ները:

Գ. ՄՈՒՈՅԵԱՆ

### Յարութ Տէր Դաւիթեանի բացման խօսքը

Հայ ժողովուրդի հանճար- ներէն՝ Եղիշէ Չարենց ըսած է. «Թէ ուզում ես ձայնդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր»: Բայց ամէն մարդու տրուած չէ իր ժամանակի շունչը դառնալ, բռնել ժողովուրդի բազկերակը եւ ըմբռնել ապրած ժամանակի պահանջները: Ատոր համար սակաւաթիւ են անոնք՝ առաջնորդներ, որոնք ոչ միայն շատ լաւ կը հասկնան իրենց ապրած ժամանակը, այլ կարողութիւնը ունին աւելի անդին ալ տեսնելու, իրենց ժամանակէն առաջ անցնելու: Հետեւաբար տարիներ պէտք է անցնին, որ ժողովուրդը կարենայ տեսնել ու գնահատել այդպիսիներու իսկական արժէքը: Հայ ժողովուրդի այլ հանճար մը, Պարոյր Սեւակը այդպիսիներուն համար ըսած է, «Ո՞ւշ-ո՞ւշ եմ գալիս, բայց ոչ ուշացած, Ծնունդ եմ նրանց նիշտ ժա- մանակին»:

Եւ ժամանակից առաջ եմ ընկնում, Դրա համար էլ չեմ ներում նրանց»:

Իմաստալից ու իմացեալ կեանք մը ապրել որոշած մարդը, վսեմ առաքելութեան մը լծուած մարդը, համոզումի տէր քաջ մարդը, մէկ խօսքով՝ առաջնորդ մարդը, չանսար առօրեայ հոգսերու եւ պարտադրանքներու լուծին, սպառնալիքներու եւ նոյնիսկ մահուան տեսիլքին, որոնք կրնան կաշկանդել իր առաքելութիւնը գլուխ հանելու իր ազատութիւնը: Ընդհակառակը, ամէն տեսակի սպառնալիքները կը հանդիսանան պսակադրումը իր դաւանած հաւատամքի ճշմարտացիութեան: Իր համոզումները, գաղափարները,

դաւանանքը, այնքան վսեմ են, որ սակարկութեան առարկայ չեն կրնար ըլլալ, որպէս զի չվնասուի անոնց արժէքն ու վսեմութիւնը: Պարզ մահանացուն չի՛ կրնար անմիջապէս մտնել անմահի մտքին մէջ եւ անմահն ալ չի՛ կրնար գիշերի իր վսեմութիւնէն, ինչ ալ ըլլան պարագաները: Ուրեմն պէտք է ապաւինիլ ժամանակի թաւալքին, կարենալ մտնելու համար անմահ- ներու մտքին մէջ ու կարենալ լաւագոյնս հասկնալ գանոնք:

Պարոյր Սեւակ նաեւ մարգա- րէացած է իր այս խօսքով՝

Ապրելու կէսն էլ պատուով մեռնելն է:

Ա՛խ, երանի՜ թէ ես այնպէս մեռնեմ,

Որ դու ... ինձ սգաս:

Սուգը սակայն միայն ողբ չէ: Սուգը նաեւ գիտակցումն է, որ հանճար մը կար մեր կողքին, որ հիմա հեռացած է: Եւ լաւագոյն ձեւը այդ հեռացումը սպալու, անոր արժէքին ըմբռնումն է, անոր աւանդին ու պատգամներուն վառ պահումն է անոնց գործադրումով մեր կեանքերուն մէջ, անոնց տարածումով ու ժողովրդավա- րացումով: Ինչպէս որ Հրանդ Տինք համոզումով կը կրկնէր, հիմնական փոփոխութիւնները կ'իրականանան երբ կու գան վարէն վեր, ժողովուրդի լայն մասնակցութե- ամբ: Ան նաեւ կը կրկնէր, որ հիմնական փոփոխութիւնները անոնք են, որ կու գան ներսէն դէպի դուրս, համոզումով, եւ ո՛չ թէ դուրսի ուժի պարտադրումով: Հրանդ Տինքի հեռացումը սպալու լաւագոյն կերպը, զինք հասկնալն ու ըմբռնելն է, եւ իր բացած ճանապարհով քալելն է:

### ԿԲՎ-Ի ԱՍԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Մարուսակուած էջ 23-էն

յուշանուէր մը յանձնեց Անդրանիկ Նաշեանին:

Արամ Վեհափառին կողմէ Ծա- ուայութեան Տարի հուշակուած է: Հետեւաբար, Կեդրոնական Բարձ- րագոյն վարժարանն ու Ամերի- կայի Շրջանաւարտից Միութիւնը իրենց երախտագիտութիւնը յայտ- նեցին վարժարանի բարգաւաճ- ման նպաստող ու ծառայող բոլոր անհատներուն: «Ճանչնանք մեր ազնուական բարերարը» բաժի- նով, Արա Ասիլեան շնորհակալու- թիւն յայտնեց եւ յուշանուէր

յանձնեց 1953 թուականի շրջա- նաւարտ ձերի Թրփէնճեանին, տա- րիներով իր կատարած առատա- ձեռն նուիրատուութիւններուն համար:

Յայտագիրը շարունակուեցաւ մշակութային միջոցառումներով: Կատակաբան Լորի Թաթուլեան իր կատակներով գուարթ մթնոլորտ մը ստեղծեց, ապա՝ "Pakos Bouzouki and Keyboard" նուագախումբը իր իւրօրինակ երաժշտութեամբ հա- ճելի մթնոլորտ մը ստեղծեց: Իսկ Գօգօ Հայիթեան, ինչպէս միշտ, ներկաները պահեց խանդավառ մթնոլորտի մը մէջ:

**ՍԱՐԱԿԵԱՆԻ ՕՐ**

Սահակեան Վարժարանի Սանուց Սիութեան կազմակերպութեամբ աւանդութիւն դարձած «Սահակեանի Օր»ուան ընկերային հաւաքը տեղի պիտի ունենայ Կիրակի, 15 Մայիս, 2016, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Փասատինայի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ, 1060 North Allen Avenue, Pasadena CA 91104: Կը խնդրուի յարգել Սահակեանցիի ժամադրութիւնը: Ծոխ հիւրասիրութիւն, անակնկալներ... Մուտքը ազատ

**ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ**

«Մասիս» շաբաթաթերթի հիմնադրութեան 35րդ տարեդարձին առթիւ Տիկ. Անահիտ Թովմասեան 200 տոլար կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

**SEROP'S CAFE**

**GREEK & LEBANESE FOOD**

SERVING BATON ROUGE SINCE 1979

# RALLY FOR JUSTICE

## APRIL 24, 1 PM

### TURKISH CONSULATE



**SHUTTLE SERVICE Available from the Hollywood/Highland Metro Station to Wilshire Blvd.**



## PARK & RIDE

Busses will arrive at the pick up locations on Sunday, April 24, 2016 at 12:00 Noon and will Depart at 12:30 PM for a 1:00 PM arrival to the Rally for Justice location at Wilshire and Crescent Heights, Los Angeles.

**FOR SEAT REQUESTS, PLEASE VISIT OR CALL**  
[www.rallyforjustice.org](http://www.rallyforjustice.org) 1-877-477-2559

All seats are subject to availability and on a first come first served basis.

**GLENDALE**

St Mary's Church, 500 S. Central Ave.  
 St Gregory Catholic Church, 1510 E. Mountain Ave.  
 Glendale High School, 1440 E. Broadway Blvd.

**TUJUNGA**

Western Prelacy Church, 6252 Honolulu Ave.

**LA CRESENTA**

Crescenta Valley Community Center, 2633 Honolulu Ave.

**PASADENA**

St. Gregory Armenian Church, 2215 E. Colorado Blvd.  
 AGBU High School, 2495 E Mountain St.  
 Pasadena Armenian Center, 2242 E Foothill Blvd.

**MONTEBELLO**

Holy Cross Cathedral, 900 W. Lincoln Ave.

**ORANGE COUNTY - SANTA ANA**

Forty Martyrs Church, 5315 W McFadden, Fountain Valley

**BURBANK**

St. Leon's Cathedral, 3325 N. Glenoaks Blvd.  
 Arbat Banquet Hall, 711 S. San Fernando Road.

**NORTH HOLLYWOOD**

Merlinian Armenian School, 13330 Riverside Dr., Sherman Oaks

**HOLLYWOOD**

St. Garabed Church, 1614 N. Alexandria

**VAN NUYS**

St. Peter's Armenian Church, 17231 Sherman Way, Reseda

**NORTH HILLS**

Holy Martyrs School, 16617 Partenia St.

**ENCINO**

Holy Martyrs Church, 5300 White Oak Ave, Encino

**CANOGA PARK**

AGBU Marie Manougian, 6844 Oakdale Ave.

**VALLEY VILLAGE**

Valley College, NE corner of Coldwater Canyon and Burbank Blvd. parking lot

**HOLLYWOOD/HIGHLAND METRO**

Station Shuttle Service  
 3,500 Parking Spaces Available

SHUTTLE SERVICE Available from Metro Station to Wilshire Blvd.

**RALLY FOR JUSTICE T-SHIRTS ARE AVAILABLE ON WWW.EBAY.COM AND WWW.AMAZON.COM OR THESE STORES**



**Jons Markets**

Open Everyday 7 AM - 11 PM

Glendale  
 600 East Colorado Blvd.  
 1717 West Glenoaks Blvd.

Hollywood  
 5311 Santa Monica Blvd.  
 1601 North Vermont Ave.

Valley Village  
 12122 Magnolia Blvd.

**Sardarabad Book Store**

Open Monday-Friday 8 AM - 7 PM, Saturday 10 AM - 3 PM

Glendale  
 225 South Glendale, Unit 8  
 (818) 500-0790

**A COMMUNITY WIDE EVENT ORGANIZED BY THE ARMENIAN GENOCIDE COMMITTEE**

